ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՐ, ՄԻԱՑԵՔ

20

ՀԱՅՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՍՏԵՆՈԳՐԱՖԻԿ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ՏՐՇՈՏԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
1924

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

329.14
Հ-23

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

Ն Ա Խ Կ Ի Ն

ՇԱՐՔԱՅԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՀՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

340991

ՍՏԵՆՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

20-23 Ն ՆՈՅԵՄԲԵՐԻ 1923 Թ. ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ
ՏՐՆՄՏՒ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1923

$A\frac{III}{608}$

Պատվեր № 1968


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ.-
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ.-
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ.

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1923 թ. Նոյեմբերի 20-ի Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի սղագիր արձանագրությունը հրապարակվում է ահա, որպես զի հատկապես արտասահմանի հայ աշխատավորությունը հնարավորություն ունենա ծանոթանալու համագումարի աշխատանքներին և համապատասխան վորոշում հանելու։

Դաշնակցությունը, փետրվարյան ավանտյուրայից հետո վտարվելով Հայաստանից, իրեն դեռ գորեղ է զգում արտասահմանի գաղութներում, և հայ աշխատավորության մի սուվար հատված շարունակում է հավատալ Դաշնակցության ղեկավարների խոստումներին։ Ճիշտ է, արտասահմանում ևս առաջացել է պառակտում, ստեղծվել են խմբավորումներ, սակայն այդ պառակտումը հերձվածային է, դեռ թույլ, արտասահմանի գաղութներում ևս լիկվիդիցիայի յենթարկելու դաշնակցական կազմակերպությունները։

«Դաշնակցությունն այլևս անելիք չունի» ասում է Քաջազնունին, «Դաշնակցությունը պիտի գործակցե բոլոր հակաբոլշեվիկ տարրերու հետ» հայտարարում է Դարբինյանը, դաշնակցական տիպիկ ավանտյուրիստը, իսկ մի ուրիշ խմբակ՝ Նավասարդյան և կամպանյան փորձում են «սոցիալիզմով» հաշտեցնել Դաշնակցության դառնացած կերակուրը։ Այդ բոլոր խմբակներին, յերբեմնի «լիդերներին» ի պատասխան Հայաստանի շարքային Դաշնակցությունը պարզ ու վորոշ, առանց պատ և պատ ընկնելու, ինչպես Դրո—Ղազազյան և ընկերները, հայտարարում են, վոր ընթանալու յե Հոկտեմբերյան հեղափոխության ուղիով։ Հնի և նորի համեմատությունը շատ և ցայտուն, և Հայաստանի շարքային դաշնակցականը չի կարող այդ համեմատությունից հետո չհանգել այն յեզրակացության, թե հայ մանր բուրժուազիան՝ վորի գաղափարախոսն ե՞ր Դաշնակցությունը, զուրկ լինելով սեփական քաղաքականությունից, քարշ եր գալիս յեվրոպական պետությունների այս կամ խմբակի հետևից, տածում զուր հույսեր և ստեղծում հենց այդ մանր բուրժուազիայի համար տնտեսական ու ֆիզիքական գոյության դժվարին պայմաններ։

A III/608

Պատվեր № 1968

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1923 թ. Նոյեմբերի 20-ի Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի սղագիր արձանագրությունը հրապարակվում է ահա, որպես զի հատկապես արտասահմանի հայ աշխատավորությունը հնարավորություն ունենա ծանոթանալու համագումարի աշխատանքներին և համապատասխան վորոշում հաներու։

Դաշնակցությունը, փետրվարյան ավանտյուրայից հետո վտարվելով Հայաստանից, իրեն դեռ զորեղ է զգում արտասահմանի գաղութներում, և հայ աշխատավորության մի սոված շարունակում է հավատալ Դաշնակցության ղեկավարների խոստումներին։ Ճիշտ է, արտասահմանում ևս առաջացել է պառակտում, ստեղծվել են խմբավորումներ, սակայն այդ պառակտումը հերձվածային է, դեռ թույլ, արտասահմանի գաղութներում ևս լիկվիդիացիայի յենթարկելու դաշնակցական կազմակերպությունները։

«Դաշնակցությունն այլևս անելիք չունի» ասում է Քաջազնունին, «Դաշնակցությունը պիտի գործակցե բոլոր հակաբոլշեվիկ տարրերու հետ» հայտարարում է Դարբինյանը, դաշնակցական տիպիկ ավանտյուրիստը, իսկ մի ուրիշ խմբակ՝ Նավասարդյան և կամպանյան փորձում են «սոցիալիզմով» հաժեժել Դաշնակցության դառնացած կերակուրը։ Այդ բոլոր խմբակներին, յերբեմնի «լիդերներին» ի պատասխան Հայաստանի շարքային Դաշնակցությունը պարզ ու վորոշ, առանց պատ և պատ ընկնելու, ինչպես Դրո—Ղազազյան և ընկերները, հայտարարում են, վոր ընթանալու յե Հոկտեմբերյան հեղափոխության ուղիով։ Հնի և նորի համեմատությունը շատ և ցայտուն, և Հայաստանի շարքային դաշնակցականը չի կարող այդ համեմատությունից հետո չհանգել այն յեզրակացության, թե հայ մանր բուրժուազիան՝ վորի գաղափարախոսն եր Դաշնակցությունը, զուրկ լինելով սեփական քաղաքականությունից, քարշ եր գալիս յեվրոպական պետությունների այս կամ խմբակի հետևից, տածում գուր հույսեր և ստեղծում հենց այդ մանր բուրժուազիայի համար տնտեսական ու ֆիզիքական գոյության դժվարին պայմաններ։

Երևանի համագումարի բանաձևերը որոշակի հակառակ են Վիեննայի ժողովի վորոշումներին։ Վիեննայում Դաշնակցությունը վորոշել է ընթանալ հին ուղիներով, դարձյալ հետամուտ լինել «Միացյալ և անկախ»ի քաղաքական ցնորքին, բլոկ կազմել Անդրկովկասյան և համաշխարհային բոլոր սև ուժերի հետ,—իսկ Հայաստանի շարքային Դաշնակցությունը գծել է հեղափոխական նոր ուղի, վոր մարդկության կատարյալ ազատագրման և տանում՝ 3-րդ Ինտերնացիոնալի գեկավարության տակ։

Ի զուր են կարծում արտասահմանի դաշնակցական շեֆերը, թե այսուհետ ևս կհաջողվի իրենց մինացնել հայ աշխատավորության դասակարգային գիտակցությանը, թե յերբևիցե կհաջողվի վերաստեղծել հայ քաղաքական ասպարիզում այն մոնոպոլիան, վոր ուներ Դաշնակցությունը տարիներ շարունակ և վորի ընթացքում հայ աշխատավորությունը կրեց ծանր պատնեշ, տնտեսական ավերում և չտեսնված անաքեկում դաշնակցական «բուրժուականների» կողմից։

Նոյեմբերի 20-ի համագումարը հայ իրականության մեջ դուրս յեկավ ին և, համենայն գեպս քաղաքական մտքի առողջացման մի նշան։ Համագումարի պատգամավորները, վորոնցից շատերը տասնյակ տարիներ աշխատել են այդ կուսակցության մեջ, անվերապահորեն վերագնահատման ծանր խոսք ասացին Դաշնակցության մասին և ընդմիշտ վորդեգրեցին հեղափոխության նոր ուղի, նոր սկզբունք։ Հայաստանի շարքային դաշնակցականը վերջապես ազատվեց այն անպատվաբեր դերից, վոր ուներ նա, իբր գործոն անդամ մի կուսակցության, վորի քաղաքական կուրսի փոփոխումը կախված եր անգլիական մի սպայի թելադրանքից կամ յեվրոպական մի «դիվանագետի» լրբենի խոստումից։

Ցերեկ շարքային դաշնակցականը իրեն ավելի լավ չի զգացել, իբր քաղաքացի, քան այժմ։ Դաշնակցության սպառազինումը չկա այժմ, Հայաստանը մտել է յերկարատև խաղաղության մի շրջան, վորին այնքան շատ կարոտել եր դաշնակցական «անկախության» կախված Հայաստանի բանվորն ու գյուղացին։

Անշուշտ արտասահմանի պաշտոնական Դաշնակցությունը միջոցներ չի խնայի անվարկելու համագումարը, սուտ ու պատիր լուրեր տարածելով Հայաստանի նախկին դաշնակցականի համար այդ կարծիքն այժմ, ավելին քան առաջ, դրոշ արժեք ունի։ Ավելի

կարևոր է արտասահմանի հայ աշխատավորության կարծիքը, նա դեռ լիովի չի ազատագրվել Դաշնակցության մտայնությունից։ Աշխատավորական այդ զանգվածների համար է հրապարակվում համագումարի աշխատանքները, որպեսզի այնտեղ ևս Հայաստանի որինակով կազմալուծեն դաշնակցական խմբերն ու կոմիտեները։ Վորքան շուտ կատարվի այդ, այնքան ավելի լավ։ Յուրաքանչյուր նախկին դաշնակցական, լրջորեն վերաքննահատման ենթարկելով Դաշնակցության անցյալ ու ներկա քաղաքական ընթացքը, անհապաղ պիտի խզի յուր կապերը այդ կուսակցության հետ, յեթե աշխատավորության հաղթանակն ու բարդավաճ ապագան թանդ է նրա համար։

Ահա թե ինչ է առաջարկում Հայաստանի համագումարի նախագահությունը արտասահմանի շարքային Դաշնակցության աշխատավոր հասվածին։

«Հայաստանի շարքային դաշնակցականների համագումարի կողմից առաջարկում ենք արտասահմանի բոլոր շիտակ ընկերներին, վորոնց համար թանդ է Հայաստանի աշխատավորության շահն ու բարգավաճ ապագան, վորոնք համոզվել են Դաշնակցության քաղաքականության ու մտայնության անանկության և վորոնք չեն ուզում հակահեղափոխական բանակում մնալով հարվածել մարտընչող պրոլետարիատին, — այդ բոլոր ընկերներին կոչ ենք անում հեռանալ Դաշնակցությունից, լուծել դաշնակցական կազմակերպությունները, ազատագրվել Դաշնակցության հակաաշխատավորական մտայնությունից և ընդունելով 3-րդ Ինտերնացիոնալի մարտական պլատֆորման, հարել տեղական այն կազմակերպություններին, վորոնք 3-րդ Ինտերնացիոնալի դրոշի տակ պայքարում են կապիտալիզմի դեմ, մի պայքար, վորի հաղթանակից և կախված համաշխարհային աշխատավորության հետ, նաև Հայաստանի բանվորի ու գյուղացու բախտը»։

Հայաստանի շարքային Դաշնակցությունը յուր բախտը շղթայել է համաշխարհային հեղափոխության, համոզված վոր միայն այդ ճանապարհով են լուծվելու բոլոր վեճերը, վերանալու են բոլոր ճնշումները։ Այդ ուղին է տանելու մեզ դեպի կատարյալ հաղթանակ, յերբ մյուս հարցերի հետ միասին, արդար լուծում կստանա և ժանր ազգերի ազատագրման արյունոտ խնդիրը։

Հաղթական պրոլետարիատի համար «սահման քաջից են դենն յուբյանց»։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

1923 թ. նոյեմբերի 20-ին, Յերևանի Պետական Թատրոնի դահլիճում, յերեկոյան ժամը 6-ին Հայաստանի Նախկին դաշնակցականների համագումար Նախաձեռնող Բյուրոյի նախագահությամբ կայացավ Հայաստանի նախկին գաշնակցականների համագումարի հանդիսավոր բացումը։ Ներկա եյին պատգամավորներ Հայաստանի բոլոր գավառներից, համագումար Նախաձեռնող Բյուրոն և բազմաթիվ հյուրեր։

Նիստը բացեց ընկ. Ա. Բակունցը։

Ա. ԲԱԿՈՒՆՑ.—Ընկերներ, Հայաստանի Նախկին դաշնակցականների համագումարը հայտարարում եմ բացված։ Շուտով լրանում է Հայաստանի խորհրդայնացման 3-րդ տարեդարձը, սակայն այդ չե մեր համագումարը կազմակերպելու դրդապատճառը, վորովհետև մեր նպատակը չե քաղաքական ժեստեր և գեղեց կ ակտեր կատարել, այլ առաջ բերել այն խոշոր թեկուզը, վոր յեղակի յե լինելու Դաշնակցության պատմության մեջ։ Առաջին անգամն է, վոր շարքային դաշնակցականները անկեղծորեն հավաքվում են այստեղ վերագնահատելու Դաշնակցության գործունեությունը։ Սա անհրաժեշտ է, վորովհետև քաղաքական մեծ ակտերը հիմնովին հեղաշրջել են դաշնակցական ժտայնության հիմքերը։ Համագումարը պիտի պարզի, թե ինչ դրության մեջ է այժմ Դաշնակցությունը կուսակցությունը, ինչ է արել նա իր 30 տարվա գործունեության ընթացքում, կծանոթանա Դաշնակցության իդիոլոգիայի ու քաղաքականության հետ։ Այդ բոլորից հետո մենք հետ կվերցնենք նրա ղեկավար ձեռքից վստահության այն քվեն, վորի հիման վրա նա շարունակում է իր գործունեությունը հայ աշխատավորության գլխին նորանոր փորձանքներ բերելու։ Համագումարը ճշտելու յե իր դիրքը դաշնակցական նոր մտայնության հանդեպ, և ասելու յե իր վերջին խոսքը։ Շարքային դաշնակցականների այս համագումարը պատմական մեծ արժեք ունի. աշխատավորական տարրը Դաշնակցության մեջ յերբեք

հնարավորություն չի ունեցել ունենալ իր համագումարը, պարզել իր ցանկությունները։ Հենց այդ աշխատավորական տարրն է, որ այժմ ազատագրվում է կապանքներից և խզում իր կապերը Դաշնակցությունից։ Այս համագումարից հետո 4000 շարքային նախկին գաշնակցականներ լծվելու են Սորհրդային Հայաստանի վերաշինման գործին, վոչ թե վորպես անկուսակցական սպեցներ, այլ ազատագրվել վ դաշնակցական ժռանգությունից և վորդեգրելով նոր ուղիները, հանդես են բերելու իրենց հեղափոխական վողջ ենեργիան հանուն Սորհրդային յերկրի բարգավաճման։ Այս յերևույթն անշուշտ կարծիքների վորոշ մթնոլորտ է ստեղծելու թե արտասահմանում և թե այստեղ։ Ապագա պատմագիրը կգնահատի մեր համագումարի պատմական արժեքները, սակայն մեզ համար, վոր 4 ամիս շարունակ նախաձեռնող ենք հանդիսացել այս համագումարին և ականատես յեղել բազմաթիվ փաստերի, պարզ է մի բան, վոր մենք այլևս անկարող ենք մնալ Դաշնակցության մեջ։ Հրաժարվելով Դաշնակցությունից, մենք մեր կենսունակ ուժերը իսպաս ենք դնում Սորհրդային Հայաստանի վերաշինման ու պայքարին՝ ուղղված այն բոլոր շարժումների դեմ, վորոնք նպատակ կունենան խախտելու մեր ապատ կյանքը։ Դաշնակցական մասսան գալիք պայքարի ժամանակ կապացուցի, վոր նա իր, խորհրդային հայրենիքի ամենաջերմ պաշտպանն է։ (Ծափեր)

Ընկերներ, նախ քան որակարգին և ընտրություններին անցնելը՝ վողջույնի խոսք է տրվում Ալեքպոլի Գավբյուրոյի ներկայացուցիչ ընկ. Գր. Բալասբեկյանին։

ԲԱԼԱՍԲԵԿՅԱՆ.— Ընկերներ, Դաշնակցության մեջ գործող նախկին աշխատավորական տարրերը, վորոնք միանման մտածողություն ունին և հակայական կազմակերպչական աշխատանք են կատարել, այսոր կազմել են այս համագումարը։ Նրանք հավաքվել են քաղաքական իրադարձությունների այս պատմական որերին կտրելու իրանց կապը Դաշնակցությունից։ Քայքայումը Դաշնակցության մեջ նորություն չե։ Նրա մեջ գոյություն են ունեցել բազմաթիվ հոսանքներ ու թևեր, վորոնք ժամանակին այս կամ այն ձևով արտահայտվել են, թողել Դաշնակցությունը կամ մնացել նրա մեջ և պայքարել են Դաշնակցության դեմ, բայց մնալով նրա մեջ, հուսալով, վոր Դաշնակցությունը վերջ ի վերջո կկանգնի սոցիալիստական տեսակետի վրա և կթողնի իր հին ճամբան։ Այդ աշխատավորական

հոսանքի ներկայացուցիչները հավաքվել են այստեղ վերագնահատելու հին արժեքները և ասելու իրենց նոր խոսքը։ Այդ տարրն այսօր հայտարարում է ընդմիշտ, որ աշխատանքի լոզունգը մեր իրականության մեջ պաշտպանելու չե իր ամբողջ յեռանդով։ Դաշնակցությունը ծնվել է հայ իրականության մեջ և ունեցել իր միսիան կազմակերպելու հայությանը, որպես ազգություն։ Սակայն նա վերջին շրջանում բռնել եր մի սխալ ուղի, որի հետևանքները բոլորն ականատես են։ Այժմ գտնվելով այլ քաղաքական հանգամանքների մեջ, յերբ իրար դեմ կանգնած պայքարում են աշխատանքն ու կապիտալը, մենք հավաքվել ենք այստեղ ընդգծելու մեր աշխատավորական ուղին և մեր բաղդը կապելու համաշխարհային պրոլետարիատի հաղթանակի հետ։ Այդ հաղթանակն է, որ ապահովելու չե նաև մեր աշխատավորության հաղթանակը։ Ալեքսոլի Գավբյուրոյի կողմից վողջունելով Հայաստանի շարքային դաշնակցականների այսօրվա համագումարը հույս ունեմ, որ նա մեր աշխատավորական մասսային դուրս կբերի իր անորոշ դրությունից և կդնի նրան նոր դաղափարներին տանող ճանապարհի վրա։ (Ծափեր)

ՆԱԽԱԳ.—Վողջույնի խոսք և տրվում Նոր-Բայազետի Գավբյուրոյի ներկայացուցիչ ընկ. Ամրագյանին։

Վ. ԱՄՐԱԶՅԱՆ.—Ընկերներ, քաղաքական այս մեծ մոմենտին բացվում է Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը, որ շատ լուրջ բնույթ և կրում։ Նա վերագնահատելու է Դաշնակցության 33 տարվա քաղաքականությունը։ Համագումարը արժեքավոր լինելով իր առաջ դրված խնդիրներին պետք է ժողովա շատ լուրջ քննելով Դաշնակցության գործունեությունը և նրանից հետո ընդգծելով իր ուղին։ Նոր-Բայազետի Գավբյուրոյի կոմից վողջունում եմ շարքային դաշնակցականների համագումարը և նրան հաջողություն ցանկանում։

ՆԱԽ.—Վողջույնի խոսք և տրվում Զանգեզուրի ընկերների ներկայացուցիչ ընկ. Դորունցին.

ՆԻԿ. ԴՈՐՈՒՆՑ.—Ընկերներ, Զանգեզուրի նախկին դաշնակցականների կողմից վողջունում եմ Հայաստանի շարքային նախկին դաշնակցականների համագումարը։ Յես կուզեյի պարզել այն մթնոլորտը, որի մեջ ապրում եյինք մենք, կտրված Հայաստանից և պատսպարված ձորերում, որի պատճառով մենք շատ անգամ վրեպ ենք այնպիսի քաղաքականություն, որ հակառակ է յեղել

կենտրոնին։ Այս պատմական որին համախմբվել ենք այստեղ այնպիսի անձինք, որոնք առաջ ել հակառակ են յեղել Դաշնակցության վարած քաղաքականության, և աշխատել են նրա դեմ և շատերը դուրս յելել և միացել այլ խմբակցությունների ու կուսակցությունների հետ։ Այժմ մենք հնարավորություն ունենք վարելու մեր պայքարը մանր բուրժուական տեսակետների դեմ և քննադատելու Դաշնակցության բռնած սխալ ճանապարհները, որոնք դեպի կործանում են տարել հայ աշխատավորությունը։ Նախկին շարքային դաշնակցականները պիտի ընդգծեն, որ մանավանդ Զանգեզուրում գյուղացու չարքաշ աշխատանքը չեր վարձատրվում, այլ ծառայում եր միմիայն կապիտալի ուժեղացման։ Վերջին 3 տարում, յերբ Զանգեզուրում բացվեց շինարարական աշխատանքների հնարավորություն, մենք տեսանք, որ իրական կյանքում Խորհրդային իշխանության քաղաքականությունն և այն միակը, որ դուրս և բերում աշխատավորության իր ծանր վիճակից։ Գյուղացին ել այժմ զգում է, որ կործանումից փրկվելու միակ ուղին Խորհրդային իշխանության մեջ է։ Տեսնելով այս բոլորը, լուռ մնալ չենք կարող։ Այսուհետև մենք, որպես հեղափոխականներ, լծվելու ենք մեր իշխանության առաջադրած աշխատանքներին և գնալու ենք այդ ուղիով, որովհետև միակ և իսկական ճանապարհն այդ է։ Փաստերը շատ են ապացուցելու համար, որ նոր քաղաքականությունը մի կատարյալ փրկություն է մեզ համար։ Այժմ մենք զգում ենք, որ թուրքը հային և հայը նրան փոխադարձաբար հարազատ են համարում։ Մենք մեր ունեցածից տալիս ենք նրանց և փոխարենը ստանում և աշխատանքի պաշտպանություն ու աշխատավորի ապահով դրություն մենք միմիայն այժմ ենք վայելում։ Զանգեզուրի գավառական Բյուրոյի կողմից վողջունելով համագումարը, յես գտնում եմ, որ խզելով մեր կապերը Դաշնակցությունից, մենք զանգեզուրցիներս, պիտի ծառայենք Խորհրդային իշխանության և նրա նպատակների իրագործման։ (Ծափեր).

ՆԱԽԱԳ.—Վողջույնի խոսք է տրվում Եջմիածնի ներկայացուցիչ ընկ. Անուշ. Տեր-Միքայելյանին։

Ա. Տ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ.— Ընկերներ, Եջմիածնի գավառական Բյուրոյի կողմից ես վողջունում եմ մեր համագումարը։ Ինչն և վողջունելի սրա մեջ այդ պիտի պարզել։ Համագումարը արտա-

հայտությունն է ամբողջ 4000-ից ավելի այն շարքային դաշնակցականների մասնությանը, որոնք հաստատուն կերպով ընդգծում են Դաշնակցության 30 տարվա սխալ և կործանարար ընթացքը։ Այս մասսան բազմաթիվ անգամներ հիասթափել է և պետք եր մի կատաստրոֆա, որպեսզի նա ուշքի գար։ Վաղջունելի չե ահա նրա ուշքի գալը։ Նա աշխատում է այժմ Խորհրդային իշխանության հետ, որովհետև այն իդեալները, որ ունեցել է Դաշնակցությունը, այն ընթացքը, որ բռնել է նա, չկարողացավ և չեր էլ կարող իրականացնել առաջադրած իդեալները։ Այս վերջին 3 տարվա ընթացքում Խորհրդային իշխանությունը կատարեց այդ, սակայն ոչ այն ձևերով, ինչ ուներ Դաշնակցությունը։ Այս է, որ հարկադրում է վերագնահատել անցածը և բռնել նոր ուղի։ Համագումարը գալիս է ասելու Խորհրդային իշխանությանը և նրա ղեկավարներին, որ սայթաքումներից և բռնած սխալ ընթացքից հետո, խարված դաշնակցական մասսան այժմ գնում է և այն տվյալները, որոնք հնարավոր են դարձնում ստեղծելու սերտ դործակցություն։ Վերագնահատելով անցյալ սխալ գործունեությունը, մենք այսուհետև մտնում ենք այն դրոշի տակ, որ փրկության միակ ճանապարհն է։ (Ծափեր).

ՆԱԽ.—Վաղջունի խոսք է տրվում յերիտասարդ դաշնակցականների համագումար նախաձեռնող բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Լ. Մարությանին։

Լ. ՄԱՐՈՒԹՅԱՆ.—Հայաստանի նախկին յերիտասարդ դաշնակցականների վոդջունում են նախկին դաշնակցականների համագումարը։ Մեզ գուցե մի հարց տրվի, թե ինչու Դաշնակցությունից հեռանում են ոչ միայն նրա շարքային անդամները, այլ և կենսունակ յերիտասարդ տարրը։ Հայտնի է, որ յերիտասարդները կազմել են միշտ ձախակողմյան սոցիալիստական թեվը, որովհետև հավատացել են, որ Դաշնակցությունը մի սոցիալիստական կուսակցություն է։ Սակայն անցյալը ցույց տվեց, մանավանդ վիեննայի համագումարը, որ նա ոչ թե սոցիալիստական չի, այլ և չի էլ յեղել։ Սա պարզ է այժմ արևի լույսի պես և դրա համար յերիտասարդությունը Դաշնակցությունից հրաժարվում է։ Մեզ համար շատ պարզ պիտի լինի համագումարի նպատակը։ Մենք քայքայել ենք Դաշնակցությունը, նա արդեն մեռած է, բայց ինչու ենք յեկել այստեղ. յեկել ենք ասելու, որ մենք այլ-

ևս նրա հետ չենք և մտնում ենք 3-րդ Ինտերնացիոնալի մեջ, վողջունելով համագումարը ցանկանում եմ նրան դրական արդյունքներ։ (Ծափեր).

ՆԱԽԱԳԱՀ.—Վողջունի խոսք է ուզում ասել Ղամարլվի ընկերների կողմից ընկ. Մ. Թայիրյանը.

ՄԿ.ԹԱՅԻՐՅԱՆ.—Ընկերներ, այսոր մի պատմական մեծ փաստի առաջ ենք կանգնած։ 33 տարեկան մի յերիտասարդի թաղումն ենք հուղարկավորում։ Թաղում ենք այն հորի մեջ, վորտեղ նա շատերին է թաղել, բայց դեռ այդ հորը չի կշտացել։ 30 տարի շարունակ նպատակ ենք ունեցել վրկել ազգը և տեղծել նրա համար մի վիճակ, վորպեսզի ապահով լինի նրա ֆիզիքական գոյությունը։

Այսոր այդ յերիտասարդի հուղարկավորության վերջին ալեուլյան ասելով մենք կրկնում ենք, վոր այլևս չենք ուզում անվել ընրա կաթիլ։ (Ծափեր)

Դաշնակցության յերկդիմի քաղաքականությունը տանում եր հայ ժողովրդին դեպի հուր ու կործանուժ։ Գնահատեցեք նրան ըստ արժանվույն և հանգստացրեք իր վոսկ մեջ։ Ղամարլվի շրջանի պատգամավորների կողմից գլուխ խոնարհելով ձեր առաջ, ցանկանում եմ, վ ր խղճմտանքով և բազմակողմանի ձևով քննեք Դաշնակցության անցյալ գործունեո թյունը և վորոշեք հեղափոխական նոր ուղի։ (ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.— Խոսք է տրվում Բագվի ներկայացուցիչ ընկ. Վահանին։

ԲԱՆՎՈՐ ՎԱՀԱՆ.—Ընկերներ, այս լիկվիդացիան նորություն չե այն ընկերների համար, վորոնք ծանոթ են Դաշնակցության անցյալին։ Անջատողականները, պատերազմի շրջանում առաջացած և ձախ հոսանքները և այլ անվան տակ բազմաթիվ շարժուձեներ է ունեցել Դաշնակցության պատմությունը, բայց այդ հոսանքները վոչինչ դրականապես անել չեն կարողացել։ Դաշնակցությունը շուվեն մտածելակերպ է ունեցել. նա առաջ դրել է ազգային հարցը և ապա բանվորական հարցը։ Մենք բանվորական հոսանքի ներկայացուցիչներս չենք կարողացել հաղթել շուվեն մտածողության, վորովհետև ազգային հարցը միշտ գերադասվել է բանվորական հարցից։ 1914 թվի պատերազմի ժամանակ կամավորական խմբերի կազմակերպումը յեղել է մի խմբակի գործ, վորի վրա յե ծանրանում ամբողջ պատասխանատվությունը։ Մենք պիտի քննենք թե ինչ է

կատարվել մինչև հիմա։ Բազմի և Բալախանու բանվորների կողմից չեմ հայտարարում եմ, որ Դաշնակցության ուղին ու մտածելակերպը չեղել է սխալ. կեցցե բանվորական դիկտատուրան (ծափեր)։ Ձեռս կարող եյի շատ չերկար խոսել, բայց չդալին եմ, չեմ կարող շարունակ ել։

ՆԱԽԱԳԱՀ. Ընկերներ վողջունի խոսքերը վերջացան։ Այժմ պիտի անցնենք նախագահության, քարտուղարության և մանդատային ու խմբագրական հանձնաժողովների ընտրության։ Ծուցակ է առաջարկված 17 հոգու, որից 5 հոգի մտնելու չեն նախագահության մեջ, 4 ը՝ քարտուղարության, 5-ը՝ խմբագրական և 3-ը մանդատային հանձնաժողովների մեջ։ Կան ուրիշ առաջարկներ։ (Ժողովականների առաջարկությամբ նիստը ընդմիջվում է 10 րոպեով)

ՆԱԽԱԳԱՀ.—Նիստը վերսկսվում է։ Ստացվել են 6 ցուցակները, որոնցից մեկը լրիվ չէ։ Յերկրորդ ցուցակն առաջինից քըչով է տարբերվում. գուցե կարելի լինի միացնել։ Կարդում եմ ցուցակները առանձին-առանձին։ (կարդում է բոլոր ցուցակները)։ Վորոշ նկատառումներով նախագահության մեջ մտցնում ենք միայն Հայաստանի սահմաններում գտնվող նախկին դաշնակցականներին։

Բվեարկությունից հետո նախագահության անդամ են ընտրվում ընկերներ Ալեքսանդր Բակունց, Պողոս Տեր Պողոսյան, Գրիգոր Բալասրեկյան, Հարություն Թումյան, Փոլյան Սիմոն։ Քարտուղարության համար ընտրվում են՝ Սմբատ Կարոյան, Հրանտ Կարինյան, Հովսեփ Միրզոյան և Արշակ Առաստամյան։ Մանդատային հանձնաժողովի համար Նիկ. Կրմենանց վ. Ամրազյան և Գամառ։ Խմբագրական հանձնաժողով՝ Արտաշես Պետրոսյան, Ծովակ Ծովյան, Անուշավան Տեր-Մկրտչյան, Մհերան Տեր-Սահակյան և Մխիթար Տեր-Աբրամյան։

Բուռն ծափերով հավանություն պատվավոր նախագահ են ընտրվում ընկ. ընկ. Լենին, Զինովյեվ, Տրոցկի, Միասնիկյան, Համբարձումյան, Լուկաշին և Շախսուվարյան։ Վորոշվում է պատվավոր նախագահներին հավանության անունից ուղարկել վողջույնի հեռագիր.

ՆԱԽԱԳԱՀ.— Որակարգի հարցերը հետևյալներն են՝

1. Զեկուցում նախաձեռնող բյուրոյի գործունեության մասին,

2. Զեկուցում մի՛ջադպային քաղաքական դրության մասին
3. Դաշնակցութ. անցյալի և գործնեության վերագնահատում,
4։ Ընթացիկ հարցեր։

Վորևե առարկություն կամ փոփոխություն անողներ չկան։— Չկան։ Որակարգը ընդունվում է նույնությամբ։ Խնդրում եմ Նախագահության անդամներին գրավել իրենց տեղերը։

Նախագահության կողմից հետևյալ բեզլամենտն առաջարկվում և համագումարին ի հաստատություն։ (Նախագահ ընկ. Բակունցը կարդում է բեզլամենտը։

1. Համագումարի նիստերը տեղի են ունենում ամեն որ առավ. ժամը 10-ից 3, յերեկոյան 6-ից 10։

2. Զեկուցողներն իրավունք ունեն զեկուցելու վոչ ավել յերկու ժամ, իսկ յեզրափակման խոսքի համար տրվում է յերեսուն րոպե. առընթեր զեկուցողներին տրվում է յերեսուն րոպե, յեզրափակման խոսքի համար 15 րոպե։

3. Հռետորներին վիճելու համար առաջին անգամ տրվում է տասը րոպե, յերկրորդ անգամ 5 րոպե։ Յուրաքանչյուր հարցի մասին կարելի է խոսել միայն յերկու անգամ։

4. Համագումարի վճռական ձայն ունեցող պատգամավորների մեկ յերրորդի ցանկությամբ համագումարը կարող է նշանակել նոր առընթեր զեկուցող։

5. Անհատական հայտարարություններ, հերթից դուրս հարցումներ և հայտարարություններ, փաստացի նկատումներ արվում են պրավոր, հանձնվում նախագահության և հրապարակվում են նախագահության վորոշմամբ։ Հերթից դուրս հարցումներ և հայտարարություններ, յեթե 20 պատգամավորի աջակցություն ունեն, հրապարակում են անհապաղ և հարցումների ու հայտարարությունների շուրջ վիճաբանություն թույլատրելի չե։

6. Առաջարկներն ու բանաձևերը, ինչպես և խոսք խնդրելը, նախագահության ներկայացնում են պրավոր։

7. Ըստ կարգի կարող են խոսել մի հոգի «քեր» մի հոգի «դեմ» յուրաքանչյուրը 3 րոպե։

8. Առաջարկի շուրջը խոսք է տրվում մի հոգու «քեր» մի հոգու «դեմ», յուրաքանչյուրին 5 րոպե։

9. Ըստ քվեարկության խոսք է տրվում 3 րոպե, քվեարկությունից հետո։

10. Բոլորը հարցերը լուծվում են ձայների հասարակ մեծամասնությամբ։

11. Համագումարի պատգամավորները պարտավոր են ճշտապահ հաճախել համագումարի նիստերին և ամեն անգամ գրանցվել։

ՆԱԽԱԳԱՀ.— Րեգլամենտի առթիվ առարկություններ չկան։

ԿԱՐՈ.— Զեկուցման համար 2 ժամ շատ և նշանակված. մի ժամ բավական է։

ՆԱԽԱԳԱՀ Զեկուցումները յերկար են. մենք ունենք տրամադրելի ժամանակ բոլոր հարցերը սպառելու։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Առավոտյան նիստերի ժամանակը անհարմար է. շատերը ծառայող են, չեն կարող ներկա լինել։

ՆԱԽԱԳԱՀ,— Ծառայողներին հնարավորություն է տրվում ազատ լինել գործից։ Քվեարկում եմ րեգլամենտը։ Ընդունվում է միաձայն։

ՆԱԽԱԳԱՀ.—Նիստը հայտարարում եմ փակված։

Նիստը փակվում է ժամի 9-20 ր-ին։

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Նոյեմբերի 21-ին առավոտյան ժամը 11 ան. 40 րոպ.

Նախագահում է ընկ. Հարությունը Թումյան։

ՆԱԽԱԳԱՀ.—Համագումարի 2-րդ նիստը հայտարարում եմ բացված։ Որակարգի հարցերն են. 1. Նախաձեռնող Բյուրոյի ինֆորմացիոն զեկուցումը, 2. Մանդատային հանձնաժողովի զեկուցումը։ Խոսքը պատկանում է Բյուրոյի նախագահ ընկ. Բակունցին։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Այսօրվա նիստը դռնփակ է թե դռնբաց։

ՆԱԽԱԳԱՀ.—Նիստը դռնփակ է. միայն Բյուրոն վորոշ մարդկանց թույլ է տվել ներկա լինելու։

ԲԱԿՈՒՆՑ.—Ընկերներ, Դաշնակցության հեռանալուց հետո, Ջորջիդային Հայաստանում այլևս դաշնակցական կազմակերպություն չեր մնացել։ Մնացել էին միայն անհատներ ու խմբակները, վորոնք չէին ներկայացնում դաշնակցական կազմակերպությունը. այս նկատումով Դրո Ղազազյանի վերջին հայտարարությունը կովկասյան կազմակերպության անունից անտակտ եր և անճիշտ։ Դաշնակցության հեռանալուց հետո դաշնակցական մասսան սկզբում պասիվ եր. նա առհասարակ «հրաժարիմք» եր ասում ամեն տեսակ հասարակական շարժման։ Ահա այդպիսի մոմենտում աննպատակ եր ձեռնարկել այս տեսակ շարժում։ Այդ ուղղությամբ արված մի քանի փորձերը վիժեցին, կարելի չլինելով վորոշ ձև և հաջողություն տալ։ Այս տարի միայն մի քանի ընկերների մեջ միտք հղացավ այսպիսի մի համագումար կազմակերպել, իմանալու համար դաշնակցական մասսայի տեսակետները, վերագնահատելու Դաշնակցության անցյալը և վորոշելու նոր ուղիներ։ Ցերը վերջացավ պատերազմի, փախուստի, քաղաքացիական կռիվների ուզարը, այն ժամանակ արտասահմանում Դաշնակցությունը իր ույժերի մոբիլիզացիա հայտարարեց և բնական է, վոր նա պիտի վերագնահատության յենթարկեր իր գործունեությունը։ Վիեննայի համագումարում Դաշնակցությունն այնպիսի ընթացք բռնեց, վորից հետո բնական եր մեր և նրանց կապի խզումը։ Դաշնակցու-

կասյան համագումար հրավիրելու ձեռնարկից չի հրաժարվել և այդ խնդիրը դրված է որակարգում՝ ընթացիկ հարցերի մեջ։

Մեր այս շարժման ամենից առաջ արձագանք տվեց Զանգեզուրը։ Ցերևի դրա պատճառը այն է, որ Զանգեզուրը Դաշնակցության վերջին ավանտյուրայի ամբոցն է յեղել։ Զանգեզուրը չի ուրանում Դաշնակցության դնահատելի ծառայությունը իր ֆիզիքական փրկության գործում։ Սակայն այս վերջին ավանտյուրան այնքան ծանր է ազդել նրանց վրա, որ նրանք զայրույթով են յերես դարձնում Դաշնակցությունից։ Զանգեզուրը պարզ ու վորոշ հայտարարել է, որ Խորհրդային կառավարությունն է ըստեղծել խաղաղ աշխատանքի պայմանները գավառի համար, մինչդեռ նախկին քաղաքականությունը ծայրահեղ չքավորության է հասցրել իրեն և յեթե Խորհրդային իշխանությունը ուշանար, Զանգեզուրը կարող էր կործանվել, քանի որ ինքնապաշտպանությունը կյանել էր ժողովուրդի ստացվածքն ու սպառել էներգիան։

Զանգեզուրի Կոմիտեյի կոչին արձագանք տվեց ամբողջ գավառը։ Մեր համագումարի առաջին պատգամավորները ընտրվել են Զանգեզուրից։ Ցերկրորդ հերթին արձագանք է տվել Մեղրին։ Մեղրիի դեկլարացիան չհրատարակվեց յերկար լինելու պատճառով։ Այդ դեկլարացիայի մեջ, սակայն, Մեղրիի դաշնակցականները արել են ավելի լուրջ հայտարարություններ, հակառակ այն հանգամանքին, որ դա համարվել է մի քիչ աջ։ Գուցե այդպես է արտաքուստ, սակայն Մեղրին Դաշնակցության վերադնահատման մեջ ավելի խիստ է ու անվերապահ, քան մի վոևե այլ շրջան։

Հետագայում Բյուրոն հատուկ ուշադրություն է դարձրել Սասունցիների և ընդհանրապես Ալագյազի փեշերի վրա ապրող Արևմտահայ լեռնականների վրա, ինկատի ունենալով մոտ անցյալից այն կարևոր դերը, որ փետրվարյան ավանտյուրայի ժամանակ խաղում էին վերոհիշյալ լեռնցիք։

Ամենից դանդաղ և ուշ աշխատանք սկսվում է կենտրոնում —Ցերևանում և Ալեքսոլում, որովհետև այդ կենտրոններում են գլխավորապես հավաքված նախկին դաշնակցական մտավորականները։ Նրանք առաջադրում էին վորոշ պահանջներ և ուզում էին իմանալ այս շարժման իրական դրդապատճառները, վորոնում էին յերկար շարժման միտքը։ Այս հանգամանքը անշուշտ դրական պիտի համարել, որ նախկին դաշնակցա-

կասյան համագումար հրավիրելու ձեռնարկից չի հրաժարվել և այդ խնդիրը դրված է որակարգում՝ ընթացիկ հարցերի մեջ։

Մեր այս շարժման ամենից առաջ արձագանք տվեց Զանգեզուրը։ Ցերևի դրա պատճառը այն է, որ Զանգեզուրը Դաշնակցության վերջին ավանտյուրայի ամբոցն է եղել։ Զանգեզուրը չի ուրանում Դաշնակցության գնահատելի ծառայությունը իր ֆիզիքական փրկության գործում։ Սակայն այս վերջին ավանտյուրան այնքան ծանր է ազդել նրանց վրա, որ նրանք զայրույթով են յերես դարձնում Դաշնակցությունից։ Զանգեզուրը պարզ ու վորոշ հայտարարել է, որ Խորհրդային կառավարությունն է ըստեղծել խաղաղ աշխատանքի պայմաններ գավառի համար, մինչդեռ նախկին քաղաքականությունը ծայրահեղ չքավորության է հասցրել իրեն և յեթե Խորհրդային իշխանությունը ուշանար, Զանգեզուրը կարող էր կործանվել, քանի որ ինքնապաշտպանությունը կյանել էր ժողովուրդի ստացվածքն ու սպառել եներգիան։

Զանգեզուրի Կոմիտեյի կոչին արձագանք տվեց ամբողջ գավառը։ Մեր համագումարի առաջին պատգամավորները ընտրվել են Զանգեզուրից։ Ցերկրորդ հերթին արձագանք է տվել Մեղրին։ Մեղրիի դեկլարացիան չհրատարակվեց յերկար լինելու պատճառով։ Այդ դեկլարացիայի մեջ, սակայն, Մեղրիի դաշնակցականները արել են ավելի լուրջ հայտարարություններ, հակառակ այն հանգամանքին, որ դա համարվել է մի քիչ աջ։ Գուցե այդպես է արտաքուստ, սակայն Մեղրին Դաշնակցության վերաքննահատման մեջ ավելի խիստ է ու անվերապահ, քան մի վոևե այլ շրջան։

Հետագայում Բյուրոն հատուկ ուշադրություն է դարձրել Սասունցիների և ընդհանրապես Ալագյազի փեշերի վրա ապրող Արևմտահայ լեռնականների վրա, ինկատի ունենալով մոտ անցյալից այն կարևոր դերը, որ փետրվարյան ավանտյուրայի ժամանակ խաղում եյին վերոհիշյալ լեռնցիք։

Ամենից դանդաղ և ուշ աշխատանք սկսվում է կենտրոնում —Ցերևանում և Ալեքսոլում, որովհետև այդ կենտրոններում են գլխավորապես հավաքված նախկին դաշնակցական մտավորականները։ Նրանք առաջադրում եյին վորոշ պահանջներ և ուզում եյին իմանալ այս շարժման իրական դրդապատճառները, վորոշում եյին յերկար շարժման մեջ մտնելու միտքը։ Այս հանգամանքը անշուշտ դրական պիտի համարել, որ նախկին դաշնակցա-

կան ինտելիգենտը այդքան վորոճալուց հետո տալիս է իր դեկլարացիան։ Եւս անգամ դեկլարացիաների խմբագրությունը Բյուրոն ինքն է հանձն առել, վորպեսզի դա չդառնա նախկին դաշնակցականների ինքնաժխտումը, ինքնալիկվիդացիան և դեկլարացիաների մեջ չսպրդեն ավելորդ արտահայտություններ։ Մենք գտնում ենք, վոր Դաշնակցությունը իր սկզբնական շրջանում կատարել է դրական աշխատանք, մինչդեռ մի շարք նախկին դաշնակցականներ իրենց դեկլարացիաների մեջ հաճախ անտես են անում և այդ հանգամանքը։

Վորպեսզի Ալեքսոլում և Ցերևանում մենք կարողանայինք աշխատանքներ տանել, կազմակերպեցինք մի շարք դասախոսություններ, ծանոթացնելու համար նախկին դաշնակցականներին Դաշնակցության ներկա մտայնության և գործունեության հետ։ Պիտի ասել, վոր դաշնակցական ընկերները վերջին տարիներս չափազանց սառել էին հասարակական գործերից. նրանց հետ խոսելը մեռելի տան մեջ հարսանիքի մասին խոսելուն էր նմանվում։ Մյուս կողմից շատ ծանր էր դաշնակցական յերքեմնի ղեկավարների համար դուրս գալ մասսայի առաջ և հայտարարել, վոր յերբեմնի իր քարոզած ուղին յեղել է սխալ։

Այդ ժողովներում հանվել են մի շարք բանաձևեր, վորոնք մեզ մոտ են և հավանաբար կհրատարակվին առանձին։

Բյուրոն ուշադրություն է դարձրել նույնպես Թավրիզից յեկող տարագիրների վրա։ Նրանք այն մտավախությունն ունեին, թե իրենք հալածանքի պիտի յենթարկվեն այստեղ։ Այդ հանգամանքը հետևանք էր Պարսկաստանի իրենց ընկերների պրովակացիայի։

Հարկավոր էր նրանց համոզել, դիտակցության բերել, վոր նրանց հետ էլ Խորհրդային իշխանությունը կվարվի, ինչպես սովորական քաղաքացիների։ Հետաքրքիր է հետևյալ եպիզոդը.— Թավրիզից առաջին անգամ Հայաստան մտնող խմբին ասել են, վոր Ջուլֆայում իրենք պիտի յենթարկվեն դեզինֆեկցիայի, սակայն դրա փոխարեն նրանք գրամանքով տեսնում են, վոր իրենք ընդունվում են Ջուլֆայից բանվորության կողմից մուզիկայով, վորից հետո նրանք իրենց նամակների հեղեղով հասկացնում են Պարսկաստանի իրենց ընկերների ճիշտ իրադրությունը։

Ինչպես ասի կենտրոնում դժվար էր տարվում աշխատանքը, շատերը չէին ուզում դեկլարացիա տալ, անելով իրենց ուրույն

պահանջները, որոնց դժվար եր բավարարել։ Մենք այդպիսիներին թողնում էինք, որ նրան սոսկական քաղաքացիներ։ Իսկ գյուղերում ընդհանրապես բոլոր հակահեղափոխականներին համարում են դաշնակցական, այսպիսով դաշնակցական բառը դարձել է սինոնիմ հակահեղափոխականի։ Ձերբեն կուլակները իրենց ձայնադրկությունը վերադրում են իրենց դաշնակցական լինելուն. դա սխալ է. նրանք ձայնազուրկ են, իբրև վոչ աշխատավորական տարր։

Բյուրոյի մի շարք նիստերում արծարծվել է այն խնդիրը, որ հնարավորություն տրվի տրտասահմանի ընկերներին ել մասնակցելու այս հավաղումարին. այս խնդիրը վորոշ նկատումներով չիրագործվեց, բայց մենք մանրամասն տեղեկություններ ուղարկելինք արտասահմանի մի շարք դաշնակցական ընկերների. դա կլինի վորոշ միջոց քայքայելու արտասահմանում գտնվող շարքային նման դաշնակցականներին, վորոնք դեռ շարունակում են մնալ Դաշնակցության մեջ։

Դաշնակցությունից հեռացածների սոցիալական վիճակի մասին արժե մի քանի տեղեկություններ տալ։ Զափազանց մեծ է հեռացողների կուսակցական ստաժը. հեռացողների 40—50%-ը կազմում են շարքային դաշնակցականներ, վորոնք Դաշնակցության հիմնումից ի վեր գործել են այդ կուսակցության մեջ. 10%-ը դաշնակցական ակտիվ գործիչներ են, 17%-ը ռազմիկ գործիչներ, 2%-ը կուսակցության մեջ գաղտնի և հատուկ հանձնարարություններ կատարողներ են (տերրորիստ, զենք փոխադրող և այլն), կուսակցական բարձր մարմնի անդամների տոկոսը 4 է, իսկ գավառական գործիչներինը 16։

Այսպիսով տեսնում ենք, որ Դաշնակցության հիմքը կամ այն մասը, որ իր ուսերի վրա է կրել կուսակցական ամբողջ բեռը այս համգումարում ներկայացված է։ Մի հանդամանք ևս նկատի պիտի ունենանք. դա մասնակցողների տարիքն է։ Ամենի բարձր տարիքը 30—40 տարիք ունեցողներն են։ Այս տոկոսը համապատասխանում է մեծ ստաժ ունեցողների տոկոսին։ Տարիքը արժեքավոր է այն տեսակետով, որ ցույց է տալիս, թե հեռացողները հեռացայում ել պիտի աշխատեն ակտիվ կերպով վոչ միայն յերկրի քաղաքական ապահովության, այլ և մեր սոցիալական հնկա պայքարի և յերկրի վերաշինության համար։

Դաշնակցությունից հեռացող շարքայինների խոշոր մասը կազմում է գյուղացիությունը. մյուս մասը ուսուցիչներ, գյուղական ինտելիգենտներ և բանվորներ են։ Սրանց թողած թղթերը և դեկլարացիաները Դաշնակցության պատմության լավագույն վավերագրերը կը դառնան։ Նկատելի յերևույթ է, վոր քաղաքական անգրագիտության հետ հասարակ գրագիտությունն ևս թույլ է, հեռացողների մեջ։ Սրանց 30%-ը բոլորովին անգրագետ են հազիվ գրագետներ կազմում են 40%. միջնակարգ կրթություն ունեն 20%-ը, իսկ բարձր կրթությունը 4%. սրա պատճառը այն է, վոր Դաշնակցությունը ուշադրություն չի դարձրել նրանց կրթության վրա։ Մեկը, վոր իր ամբողջ կյանքը տվել է Դաշնակցության, չի ստացել միջոց գոնե կիսագրագետ լինելու։ Յերբ հարցնում եք պատճառը, նա ասում է. «կուսակցական գործերը չեին թողնում ուրիշ բանով զբաղվելու»։ Դաշնակցությունից հեռացած այս մասսայի խոշոր մասի հեռացման պատճառը Դաշնակցության հակաշխատավորական ընթացքն է յեղել։ Շարքային, ակտիվ դաշնակցականներն ել հեռանում են, համարելով Դաշնակցությունը իրենց համար անհարազատ։ Կան նաև Դաշնակցության քաղաքական տեսակետները չբաժանելու համար հեռացող ընկերներ։

Հայաստանում անշուշտ մնում են անհատ դաշնակցականներ, վորոնք տարիներ շարունակ աշխատելով, չեին կարող իսկ դնել իրենց գործնեության վրա. դա ևս դրական գիծ պետք է համարել. այդպիսիների համար դեկլարացիան քաղաքական մահ եր նշանակում. նրանց համար այդ քայլ չառնելը քաղաքացիական քաջության ապացույց պիտի համարել։

Գյուղացիներից ստացված են բազմաթիվ գրություններ, վորոնք գեղեցիկ նյութ են ծանոթանալու համար գյուղական աշխարհի հոգեբանության հետ։ Նկատվել են վորոշ անհատներ, գյուղական վորոշ պատասխանատու անձեր, վորոնք թայֆայական պատճառներով հալածանքի են յենթարկել նախկին դաշնակցական աշխատավոր գյուղացիներին, համարելով նրանց հակահեղափոխական։

Գավառներից Նոր-Բայազետում, Եջմիածնում, Ալեքսանդրում և Լոռում քայքայման շարժումը բավականին ուժեղ է յեղել։ Մի քանի վայրերում շարժումը ցանկալի կերպով չի տարվել, վորովհետև աշխատանքին մասնակցել են և վոչ դաշնակցական ընկերներ։ Բյուրոն այդպիսի շարժում համարել է անվավեր։

Նախկին դաշնակցական մի շարք ընկերներ, որոնք չենթարկվել են դաժան, դիմում էին Բյուրոյին դե լարացիաներով, հույս ունենալու որ Բյուրոն նրանց համար կապահովի իրենց գործը. սակայն այդ դիմումները չեն մտցված գործերի մեջ և Բյուրոն այդպիսի գործերի չե մասնակցել, հաժարելով պաշտոնյաների գործը Դաշնակցության քայքայումից անկախ գործ։

Բյուրոն ուզում էր ունենալ նաև իր թերթը, որպեսզի կարողանար ուղղորդել արտասահմանյան շարքային ընկերներին, ծանոթացնելու նրանց մեր շարժման հետ և կապ հաստատելու մեր և նրանց միջև. «Լրաբերը» կլինի այդպիսին, այս համագումարի աղագիր արձանագրություններն էլ կհրատարակվին, որով արտասահմանը կարող է լրիվ տեղեկություն ունենալ մեր շարժման մասին։ Բազմի ընկերների հետ մենք կապ ստեղծեցինք։ Բազմից յեկան ընկերներ և նրանց հետ ունեցանք մի քանի նիստեր։ Նրանց հիմնական առաջարկը համակովկասյան համագումար հրավիրելն էր. այդ հարցը թողնված է ուրիշ ընթացիկ հարցերի հետ համագումարի քննության։

Մի յերկու խոսք Բյուրոյի հրատարակած կոչի մասին։ Բյուրոյի կազմի մեջ մտել են նաև գավառի ընկերներ։ Այդ կոչի տակ ստորագրված են մի յերկու ընկերների անուններ, որոնք ներկա չեն յեղել, բայց հեռագրով նրանց համաձայնությունն առնված է, մի հոգի միայն հայտնեց, որ լինքը կոչի խմբագրական մի կետի հետ համաձայն չե. կարգադրվեց, որ կոչի հրատարակումը ուշանա, մինչև, որ այդ խնդիրն էլ հարթվեց։

Վերջացնելով իմ զեկուցումը, պարտք եմ համարում ասելու, որ այս շարժումը մի քաղաքական բեվերանս անելու համար չե յերբեք. սա բղխում է մեր հեղափոխական խոր համոզումից. մեր նախկին կուսակցությունը անելիք չունի։ Մենք համոզված ենք, որ դաշնակցական մասան կասի իր վերջ խոսքը և կգծի իր ուղին։ Բյուրոն համոզված է յեղել, որ շարքային դաշնակցականը կարևորություն չի տա այն ասեկոսներին, թե այս շարժումը կատարվել է որոշ ճնշման տակ և կամ կազմակերպված է որոշ դիտումով։ Վստահ ենք, որ Դաշնակցության այս համագումարը չի սայթաքի, նա իր վերագնահատությունը կտա ըստ արժանվույն և հաստատ ուղի կգծի իր համար, մի ուղի՝ որ վա-

յել կլինի քաղաքական անցյալ ունեցող հեղափոխական ընկերներին (Ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.—Հարցեր կան։ Առաջարկում եմ Բյուրոյի զեկուցումն առնել ի գիտուԹյուն և հաստատելուց հետո անցնել մյուս խնդիրներին։

ԲԱԿՈՒՆՑ.— Դուցե ըստ էության խոսողներ կան. նախագահի առաջարկը վաղաժամ է։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Հարց. Բյուրոյի անդամների մեջ սկզբունքային տարաձայնուԹյուններ չեն յեղել։

ԲԱԿՈՒՆՑ.—Ի հարկե կարող էլին լինել և յեղել են՝ որինակ ժեկը կարող է ասել, վոր ԴաշնակցուԹյան գոյուԹյունը անհրաժեշտ եր, մյուսը վոչ։ Այդ սկզբունքային տարաձայնուԹյունները պիտի հաժարել դրական յերևույԹ և վոչ բացասական։

ՆԱԽԱԳԱՀ.—Ըստ էության խոսողներ կան։

ԱՓԵԼ.—Լսելով Բյուրոյի նախագահի զեկուցումը, մենք բոլորի սրտին էլ մոտիկ ենք գտնում այն։ Զեկուցման մեջ իմացանք, վոր Վիեննայի համագումարը վոչ ցանկալի գունավորումն է ստացել. դա հաժենայն դեպս մեզ չի վերաբերում, քանի վոր Հայաստանի դաշնակցական մասսան չի մասնակցել դրան։ ԳրագիտուԹյան վերաբերյալ յես պետք է ասեմ, վոր ԴաշնակցուԹյունը շատ աշխատանք է կատարել ԹԷ յերկրի ներսում և ԹԷ դրսում, իր հնարավոր միջոցները գործադրելով, վոր գրագիտուԹյունը տարածվի իր անդամների մեջ. այսոր շատ գործիչներ գիտենք, վորոնք ԴաշնակցուԹյան միջոցով են ուսում առել։

ԲԱԿՈՒՆՑ.— Արտասահմանի դիրքը մեզ համար ազդակ պիտի լինի, վոր մենք համապատասխան քայլեր առնենք։ Որինակ յեԹե արտասահմանը վորոշեր քայքայել ԴաշնակցուԹյունը, մենք ձայն չպիտի հա էլինք։ Վիեննայի շարժումը յեկավ մեր այս ձեռնարկին ավելի Թափ տալու. գրագիտուԹյան խնդրին գալով իմ խոսքը վերաբերում է ավելի քաղաքական անգրագիտուԹյան։ Ցես համաձայն եմ, վոր իրոք ԴաշնակցուԹյունը իր շուրջ աշխատանք է կատարել Տաճկաստանում, իսկ իր անդամների մեջ քաղաքական աշխատանք քիչ է տարել։ ԴաշնակցուԹյունը մի մագաղին եր, ուր ամեն տեսակ քաղաքական հայոցումներ ունեցողները կարող էլին տեղավորվել։

ԱԼԹՈՒՆՑԱՆ.—Ընկերներ, այս շարժումը վորքան գնահատելի

ու անկեղծ, այնուամենայնիվ չեմ, որպես նախկին շարքային դաշնակցական, չեմ կարող չհայտնել այն վիրավորական զգացումը, որ ես ունեցել եմ ինձ։ Ցավ եմ այդ պատգամավորներից եմ, բայց պիտի ասեմ, որ մենք համաձայնելից հետո մեծ աշխատանք ունենք անելու այդ մասնայի մեջ, կամ այդ մասնան խոչ պիտի քաշվի իր անցյալ գործունեության վրա, և կամ պիտի ասի իր խոսքը։ Թող ինձ ներվի իմ անկեղծության համար, որդյոք այս շարժումը ավելի դրական հետևանքների չե՞ր հասնի, եթե հաժողովարի միջոցը յերկարեր և նախապատրաստական աշխատանքները տարվեյին ավելի լայն ծավալով։ Այդյոք Նախաձեռնող Բյուրոն իր աշխատանքը վերջացած է համարում։

ՇՈՎՅԱՆ.—Ընկերներ, մի քանի խոսք այն մասին, թե Դաշնակցությունը կրթական գործ տարել է, թե չէ։ այս հարցն ըստ արժանույն չգնահատվեց այստեղ։ Այսօր քաղգրագիտությունը այնքան է տարածվել, որ յուրաքանչյուր դյուղացի կարող է իր կարծիքը հայտնել։ Դաշնակցության ակզբնավորության ժամանակ մարքսիստական խոսք յերբեք չկար. քաղգաստիարակություն այն ժամանակ տարվել է նարոդնիկական ոգով, իսկ այսօրվա հարցերը անուծելի պրոբլեմներ եյին մեզ համար։ Հայ մլիտը ռուսականի մաքից եր վերցնում իր գաղափարական անունդը, իսկ այդ գաղափարները եսերական և նարոդնիկական եյին։ Չի կարելի ասել, թե այս կամ այն անհատը քաղաքական ներկա ըմբռնումի չունենալով, քաղաքականապես անգրագետ եր։ Ամբողջ հայկական միտքը, հայ առաջադիմական գործը այդ ժամանակ Դաշնակցության ղեկավարությամբ և յեղել։ Դաշնակցությունը դրական վիճակարի գործ է կատարել հայ կյանքի կուլտուրական ասպարիզում. այդ չպիտի ուրանալ, բայց մենք, որ մինչև հիմա ձեռք-ձեռքի դրած ենք Դաշնակցության հետ, այսօրվանից հայտարարում ենք. ըրանի որ դուք աշխատավորությունը անտես եք առնում, մենք հեռանում ենք ձեզանից։ Բայց սա չի նշանակում, որ Դաշնակցության անցյալի մեղքը մեզ վրա ել չի ընկնում։ Յերեկվա վողջույնի ճառեր ասողները կարծում եյին, թե իրենք յերկնքումն են գտնվել։ Վե՛չ, մենք մի մասին ենք յեղել, հասկացել ենք իրար, իսկ այժմ բաժանվում ենք այդ կուսակցությունից (բուռն ծափեր)։

ՆԱՒԱՍԱՀ. Վիճաբանությունը վերջացավ. վերջին խոսքը արվում է ընկ. ղեկուցողին։

ԲԱԿՈՒՆՑ.—Ընկ. Ալթունյանին։ Դաշնակցությունը գոյություն չունի Ալեքպոլում, վոր Ալթունյանին ուղարկեր այստեղ. այնտեղ կան անհատներ միայն, վորոնք անհատաբար ել ընտրել են ընկ. Ալթունյանին և ուղարկել այստեղ։ Արդեն այս համագումարն ել կոչվում է Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար։ Իսկ ընկեր Ծովյանին առարկելու վոչինչ չունեմ, քանի վոր յես ել համաձայն եմ ընկերոջ հետ, վոր Դաշնակցությունը անցյալում կատարել է կուլտուրական գործ. հետագայում գուցե ավելի բան ասենք այդ առթիվ, քան ասաց նա։

ՆԱԽԱԳԱՀ.—Բյուրոյի զեկուցման առթիվ առաջարկված է բանաձև. ուրիշ բանաձևեր կան։—Չկան։—Կարդում եմ բանաձևը։ Առարկություններ կամ դիտողություններ չկան բանաձևի շուրջը։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—«Հաստատել» բառը փոխել «հավանություն» բառով։

ՄԻՀՐԱՆ.—Առաջարկում եմ բանաձևի մեջ գրել «հաստատել զեկուցումը» և վոչ գործունեությունը։

ՊԵՏՐՈՍՅԱՆ.—Զեկուցումը յեղել է այն գործունեության առթիվ, վոր Բյուրոն արել է. դուք այժմ պիտի ասեք, թե Բյուրոն այդ աշխատանքը լավ է արել թե վատ։

ՄԻՀՐԱՆ.—Մենք հաստատում ենք միայն Բյուրոյի այս զեկուցման մեջ յեղած գործունեությունը. գուցե նա ունեցել է և այն տեսակի գործունեություն, վոր չենք կարող հաստատել։

ՇԱՎԱՐՇ.—Առաջարկում եմ բանաձևի մեջ հիշված «նախկին դաշնակցականների համագումար» դարձվածքը փոխել «Դաշնակցությունից հեռացածների համագումար» դարձվածքով։ Ցես դրտնում եմ, վոր սա ինքնալիկվիդացիա արողների համագումար է. դրսում գուցե մնացել են շատ դաշնակցականներ. համագումարը նրանց մասին չի կարող վորոշում տալ։

ՆԱԽԱԳԱՀ.—«Նախկին» բառը բավարարում է ընկ. Շավարշի առաջարկին։

ՇԱՎԱՐՇ.—Ցես չբավարարվեցի։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Աբարանում շատ դաշնակցականներ կան, վորոնք ներկայացուցիչ չունեն այստեղ, մենք ինչպես կարող ենք նրանց լիկվիդացիայի յենթարկել։

ՆԱԽԱԳԱՀ.—Այդ հետո կպարզվի։

ՄԻ ՁԱՅՆ.—Չպարզվեց, զեկուցումը թե՛ գործունեությունը։

ՄԻ ՁԱՅՆ.—Համաձայնում եմ թե չէ։

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ.— Այստեղ մի փոքր թյուրիմացություն կա։ Այն ընկերները, որոնք ուզում են միայն հաստատել զեկուցումը, այդ մտահոգությունն ունին, թե Բյուրոն ինչ որ գաղտնի գործունեություն ունի, որն այստեղ չպարզվեց և որ չպիտի հաստատել։ Յեթե մենք բանաձևն ընդունենք նույնությամբ, ինչ-նին հասկանալի պիտի լինի, որ մենք դրանով հաստատած պիտի լինենք այստեղ պարզված գործունեությունը և թե, միաժամանակ, մենք դրանից դուրս այլ գործունեություն չենք կարող յերեվակայել Բյուրոյի համար։ Իսկ յեթե դուք ունեք կասկած կունենաք, կա այստեղ ստենոգրաֆիկ արձանագրություն, որը կարող եք ստուգել։ Վորևե գործունեություն միշտ հաստատվում է վորոշ զեկուցումից հետո։

ՆԱԽԱԳԱՀ.— Կարդում է բանաձևը.

«Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը լսելով նախաձեռնող Բյուրոյի նախագահ ընկ. Ադ. Բակունցի զեկուցումը նախաձեռնող Բյուրոյի գործունեության մասին, որոշեց հաստատել նախաձեռնող Բյուրոյի ամբողջ գործնեությունը, այդ գործունեությունն ընդունել պատմական մի անհրաժեշտություն Դաշնակցության քայքայման պրոցեսում և անցնել որակարգի միւս խնդիրներին»։

ՆԱԽԱԳԱՀ.—Բանաձևի շուրջը այլևս ձայները սպառված են։ Մի անգամ ել եմ կարդում 1-ին և 2-րդ բանաձևերը։

ՄԻՀՐԱՆ.—Յես պահանջում եմ որ իմ բանաձևը արտահայտվի նույնությամբ, այսինքը «հաստատել զեկումը» և վոչ գործունեությունը։

ՆԱԽԱԳԱՀ.—Յես այդ առաջարկը գտնում եմ անտրամաբանական և նույնիսկ անհեթեթ. ինչ է նշանակում զեկուցումը հաստատել. չե՞ որ նա բղխում է գործնեությունից։

ՄԻ ՍԱՍՈՒՆՑԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Մենք հաստատում ենք մեր ականջով լսածը միայն։

ԲԱԿՈՒՆՑ.—Առաջարկում եմ շարունակել վիճաբանությունը բանաձևի շուրջը, որպեսզի Բյուրիմացությունը պարզվի։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընդհարկության եմ դնում ընկ. Բակունցի առաջարկը։ Մերժվում է։ Այժմ քվեարկում եմ բանաձևերը։ Անցնում է առաջին բանաձևը՝ նույնությամբ։

ՊՈՂՈՍՅԱՆ.— Ըստ կարգի՝ Ծուրաքանչյուր բանաձևը պետք է տալ դրավոր և քվեարկել նույնությամբ, որպեսզի նման թյուրիմացություններ չպատահեն։

ՆԱԽԱԳԱՀ.—Առաջարկ կա միջազգային դրության մասին լսել ընկ. Մռավյանի զեկուցումը (ծափեր)։ Ընկ. Մռավյանը այժմ ժամանակ չունի զեկուցելու. զեկուցումը հետաձգվում է յերեկոյան նիստին։

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.—Առաջարկում եմ յերեկոյան նիստին առաջին հերթին լսել Մռավյանի զեկուցումը։ Ընդունվում է։ Թույլ տվեք համագումարի անունից դիմել ընկ. Մռավյանին։ Ընդունվում է։

ՆԱԽԱԳԱՀ.— Որակարգի մեջ տրամաբանական հաջորդություն պահպանելու համար առաջարկում եմ նախքան ժանդատային Հանձնաժողովի զեկուցման անցնելը, լսել Բագվի ընկերների կողմից ինֆորմացիոն զեկուցում։— Ընդունվում է։

ՊԵՏՐՈՍՅԱՆ (Բագվի պատգամավոր)— Ընկերներ, Դաշնակցության քայքայման պրոցեսը մեզ մոտ նկատելի եր 19 թվականից, յերբ կուսակցության զեկավար ուժերը անցել էին Հայաստան, վորով Բագվի բանվորական շարքային տարրերը մնացել էին առանց զեկավարի։ Ահա այդ ժամանակվանից Բագվում կոնկրետ կերպով դրված եր Դաշնակցությունը Ադրբեջանի տեռմաններում լիկվիդացիայի յենթարկ՛լու խնդիրը, վորի շուրջը մեր մեջ բացվել եր վիճաբանություն։ Դրանից հետո, 1920 թվին, յերբ Սովետական իշխանությունը յեկավ Ադրբեջան, Դաշնակցության շարքային մասը իրեն կտրված համարից Դաշնակցությունից, հանեց համապատասխան բանաձև և շնորհավորելով Կորդային իշխանության գալուստը, իրեն դրեց նրա տրամադրության տակ, միասին աշխատելու համար, բայց վորովհետև պայմանները յուրահատուկ էին, Կորդային իշխանությունը վերջին առաջարկը չընդունեց։

Այնուհետև քայքայման պրոցեսը գնալով խորացավ. վերջիվերջո միտք հղացավ ձևակերպել այդ պրոցեսը։ Միայն այս տարի, սեպտեմբեր ամսում, մի խումբ ընկերներ կազմեցին մի հանձնաժողով և զեկլարացիա տվին։ Դրանից հետո ընդհանուր ժողով հրավիրվեց Բագվում, ուր դրվեցին զանազան խնդիրներ, քննադատվեց Դաշնակցության գործունեությունը և ընտրվեց լիկվիդացիոն բյուրո, վորին հանձնարարվեց կապ հաստատել Հայաստանի հա-

խաձեռնող Բյուրոյի հետ։ Վորոշվեց նույնպես լայն պրոպագանդա անել շրջաններում, կազմակերպել ժողովներ, նախապատրաստելու համար Բագվի բայոնի կոնֆերանսը, ապա և ընդհանուր Ադրբեջանի կոնֆերանս, վորից հետո հրավիրել համադաշնակցականն կամ համամովկասյան նախկին դաշնակցականների համագումար։ Հոկտեմբերի 18-ից հետո լիկվիդացիոն Բյուրոն անցնում է գործի և սկսում հող պատրաստել, բայց վորովհետև հենց այդ ժամանակ Բագվում կատարվում էին մի շարք ընտրություններ և նախապատրաստություն էին տեսնում Բագվի խորհուրդի ընտրությունների և Հոկտեմբերյան հեղափոխության 6-դ տարեդարձի համար, այդ պատճառով հնարավոր չեղավ անմիջական աշխատանքներ դիմել։ Նոյեմբերի 12-ի սկսվում են աշխատանքները, ռակայն այս համագումարի փութացումը մեզ ստիպեց արագացնել գործը։

Ունեցանք ժողովներ Բալախանում, Սեվ և Սպիտակ քաղաքներում, Բիբի-Եյբաթում և շրջաններում, ուր Բագվի կոնֆերանսի համար ընտրություններ էին լինում։ Այդ կոնֆերանսը կայացավ Բագվում նոյեմբերի 17-ին. Այնտեղ վորոշվեց, I-ին մասնակցել նախկին դաշնակցականների Համահայաստանյան համագումարին. II-րդ, Բագվի մեջ և սահմաններում Դաշնակցությունը փաստորեն համարել լիկվիդացիայի ենթարկված. III-րդ. առաջարկել այս համագումարին, վոր վորոշվի հրավիրել Համամովկասյան կամ Համադաշնակցական համագումար։ Ահա սրանք են այն կոնկրետ վորոշումները, վոր տվեց կոնֆերանսը։ Ինչ վերաբերում է Բագվի ընկերների սկզբունքային տեսակետներին, դրա մասին կտեսնենք վերագնահատման ժամանակ, իսկ առայժմ միայն այսքանն եմ ասում, վոր Բագվի և նրա բայոնների նախկին դաշնակցականների տեսակետը հետևյալն է։— Մեր գործունեությունը Դաշնակցության մեջ յեղել է սխալ, Դաշնակցությունը մեզ գցել է մի փակուղի, վորից չէինք կարող դուրս գալ։ Դաշնակցության գործունեությունը մեծ վնաս է հասցրել դասակարգային շահերին։ Բագվի աշխատավորական պրոլետարական մասը կանգնած է 3-դ Ինտերնացիոնալի պլատֆորմի վրա, գիտակցելով, վոր նա է մեզ տանելու դեպի դասակարգային կռիվը և հաղթանակը։

ՇԱՎԱՐՇ.— Հարց։ Մի՞թե Բագվում Դաշնակցությունը ունեցել է բանվորական կազմակերպություն և մի՞թե Բագվի աշխատավորությունը մեկայն այն ժամանակ դուրս չեկավ փակուղուց,

յերբ Ժողովրդային իշխանությունը յեկավ։ Նրանք, այդ ինտելիգենտները, չեյի՞ն կարող դուրս գալ Դաշնակցությունից ինչպես Ամաբեկյանը։

ԽԱՉ. ՏԵՐ-ԹՈՎՄԱՍՅԱՆ.—Սխալ ե հայտարարել, վոր Դաշնակցությունը բագվում գաղտակարգային խնդիրներով չի զբաղվել. նա վիճակի դեր ե կատարել այդ ուղղությամբ Բալախանում։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Ինձ պարզ յերևաց, յեթե Բագվի դաշնակցականները 17—18 թվերից հեռացել են Դաշնակցությունից. ինչպե՞ս ե, վոր նրանք պատգամավոր են ուղարկում այս համագումարին. հետո, յերբ թյուրքերը մտան Բագու, ինչ դիրք բռնեցին այդ դաշնակցականները։

ՉԵԿՈՒՑՈՂ.—Փակուղու մասին մեր շիտակ խոսքը կասենք, յերբ կարգը գա։ Ինչ վերաբերում ե 2-րդ հարցին, յես ասի վոր քայքայման պրոցեսը նկատվել ե 19 և վոչ 18 թվին, իսկ 20 թվին, սովետական իշխանության հաստատումով Բագվի դաշնակցականների ձախ թևը կատարել ե իր դիմումը։

ՆԱԽԱԳԱՀ.—Առաջարկվում ե հետևյալ բանաձևը.—«Բագվի գեկուցումը առնելով ի գիտություն՝ անցնել հերթական խնդրին»։—Ընդունվում ե։ Այժմ տրվում ե 5 րոպե դադար։

ՆԱԽԱԳԱՀ.—Նիստը վերսկսվում ե։ Խոսքը պատկանում ե ժանդատային հանձնաժողովի գեկուցողին։

ԱՄՐԱՋՅԱՆ.—Վորովհետև մանդատային հանձնաժողովին տրված եր քիչ ժամանակ, դրա համար մենք հնարավորություն չունեցանք հավաքելու բոլոր տվյալները պատգամավորների վերաբերյալ՝ այդ առթիվ մենք հերթական նիստերից մեկում կգեկուցենք։ Այժմ տալիս եմ միայն թվական տվյալները (կցել մանդատային հանձնաժողովի գեկուցումը)։

3 Պատգամավորների անկետաների չեն վավերացրել. նրանցից 2-ը Նոր-Բայազետից են, վորոնց մանդատների մեջ գրված ե յեղել «հավակիր» և «դիմակավոր» բառեր. իսկ 3-րդը—Տիգրան Վանյան, անցել ե կոմմունիստական կուսակցության մեջ, իբր թեկնածու Թալինի շրջանի 5 պատգամավորների մանդատները չեն ստուգված, անկետաները չլինելու համար։ Հանձնաժողովը հայտնում ե, վոր բոլոր պատգամավորները ստաժ ունեցող դաշնակցականներ են։

ՆԱԽԱԳԱՀ.—Հարցեր կա՞ն։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Ուղղում։ Թալինի անկեատանները լեցված են և ներկայացված ընկ. Բակունցին։

ԲԱԿՈՒՆՑ.—Ցես անդամ չեմ հանձնաժողովին, բայց կարող եմ ասել, որ Զանգեզուրի պատգամավորները վաղը առավոտ կհասնեն։ Ինչ վերաբերում է մի քանիսի մանդատները չհաստատելուն, յես հանձնաժողովի պատճառաբանությունը գտնում եմ իրավացի. նույնիսկ պետք է այդպիսիներին պատասխանատվության յենթարկել։ Տիգրան Վանյանը, իբրև թեկնածու կոմ. կուսակցության՝ նույնպես իրավունք չունի պատգամավոր համարվելու։

ԱՄՐԱԶՅԱՆ.—Ցես տեղեկություն ունի միայն ներկաների մասին։

ՆԱԽԱԳԱՀ.—Թույլ տվեք հանձնաժողովի զեկուցումն առնել և գիտության և յեզրակացությունը հաստատել։ Ընդունվում է։ Որ-ա-կարգի հարցերը վերջացան։ Նիստը հայտարարում եմ փակված։

Նիստը փակվում է ժ. 12-ին։

ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Նոյեմբերի 21-ի յերեկոյան ժամը 5-ին կայացավ համագումարի գ. նիստը։ Նախագահում եր ընկ. Պողոս Տեր-Պողոսյանը։

ՆԱԽԱԳԱՀ.— Համագումարի 3-րդ նիստը հայտարարում եմ բացված։ 2-րդ նիստում համագումարը ցանկություն հայտնեց լսելու ընկ. Մռավյանի զեկուցումը։ Խոսքը պատկանում է ընկ. Մռավյանին, զեկուցելու խորհրդային յերկրների միջազգային դրության և ներքին խնդիրների մասին։ (Յերկարատև ծափեր)։

Ա. ՄՌԱՎՅԱՆ.— Ընկերներ, դուք ցանկացել եք ծանոթանալ միջազգային կացության հետ, մասնավորապես Արևմտյան Յեվրոպայի քաղաքական դրության հետ։ Յես կարծում եմ դա բղխել է այն աղբյուրից, վոր դուք ուզել եք ձեր քաղաքական աշխատանքները հասկանալ յեվրոպական դեպքերի լույսի տակ, ուզում եք պարզել, թե հեռու փոքրիկ Յերևանում կատարվող ձեր գործերը կապ ունի յեվրոպական բանվորության և համաշխարհային աշխատավորության պայքարի հետ։ Կարծում եմ դա է դեկարել ձեզ։ Այդ հետաքրքրությունը յես կբավարարեմ իմ ուժերի չափ։ Յերբ մենք կոմմունիստներս խոսում ենք միջազգային կացության մասին, խոսում ենք նկատի առնելով խորհրդային հանրապետությունների միջազգային շահերը, խնդրին մոտենում ենք մեր Միության պահպանության և նրա հետագա շահերի ապահովման տեսակետից։ Այս տեսակետից մոտենալով Խորհրդային Միությանը շրջապատող կապիտալիստական աշխարհին, պիտի շեշտել այն փաստը, վոր կապիտալիստական աշխարհը, հակառակ այն խաղաղության, վոր տիրում է մեր Միության մեջ, գտնվում է անլուծելի հակասությունների դրկում։ Այդպես է դրությունը, սկսած մոտիկ Արևելքից, անցնելով Թյուրքիա և հասնելով յեվրոպական յերկրները։ Այդ բոլոր յերկրներում տիրում է քաոսային դրություն, վորը արտացոլում է դրանց դասակարգային բաժանման դիմագիծը։ Այդ յերկրներում մոտիկ ապագայում հանգիստ և խաղաղություն չի սպասվում. ընդհակառակը նրանց քաղաքական դրությունը հղի ամեն տեսակ դեպքերով։ Լոնդոնից սկսած մինչև

Գեկլին վոչ մի կառավարության նախագահ չի կարող յերեկոյան ասել, թե նա հաջորդ առավոտը կլինի դարձյալ կառավարության գլուխ կանգնած և չի բռնկի սոցիալական ապստամբություն կամ քաղաքական այլ խոշոր դեպք։ Անգլիական բուրժուական մի թերթ, Լոյդ Ջորջի անկումից հետո, շատ ճիշտ կերպով նկատեց, վոր ամենահաստատ կառավարությունը, դա Խորհրդային կառավարությունն է և միայն Լենինն է, վոր չի վախենում տապալումից։ Մնացած բոլոր կառավարությունները գտնվում են տապալման վտանգի տակ։

Այստեղ հարկավոր է կանգ առնել յեվրոպական կյանքի այն կարևոր յերևույթների վրա, վորոնք վերջին ժամանակներս կատարվում էն Յեվրոպայում և վորոնք գրավել են ընդհանուր ուշադրություն։ Խոսքս Գերմանիայի հեղափոխության մասին է, այն հեղափոխության, վորը հասարվում է սկսված և վորը դեռ ևս չի հաղթել։ Ճիշտ է նա գտնվում է առայժմ հաղթվածի վիճակում, քան հաղթողի, բայց դրությունը դեռ անորոշ է, մոտիկ ապագան մշուշապատ, պարզ է միայն մի բան, վոր այդ հեղափոխությունը որոհասական նշանակություն ունի բուրժուական հասարակության համար։ Մի փոքր առաջ թերթում կարդում եյի անգլիական վարչապետ Բալդվինի ճառը։ Նա ասում է, թե Յեվրոպայում շուտով խաղաղություն կլինի, բայց նրա տնտեսական դրությունը դեռ յերկար ժամանակ չի լավանա։ Բալդվինը կարճ է մտածում, յերբ կարծում է, թե տնտեսական անկայուն վիճակում հնար է ստեղծել քաղաքական կայուն կացություն։ Յեվրոպայի տնտեսական տագնապը վոչ մի լավ քաղաքական բան չի խոստանում Յեվրոպային։ Բալդվինը անուղղակի կերպով խոստանում է, վոր Յեվրոպայի գլխին կախված են ամպեր։ Այդ ամպացուցից գերմանական հեղափոխությունը։ Այո, ընկերներ, գերմանական հեղափոխությունը այսոր մի համառ փաստ է Յեվրոպայի համար։

Ինչու Խորհրդային յերկիրը այսքան բուռն հետաքրքրություն և ցույց տալիս գերմանական դեպքերին։ Դուք գիտեք, վոր 1919 թվի հունիսին ստորագրվեց Վերսալի դաշնագիրը, վորով Գերմանիայի վրին փաթաթեց մի հսկայական բեռ։ Այդ դաշնագրով Գերմանիան դարձավ մի կթան կով, վորի տակից հանել են հորթը և վոր պիտի կթվի այնքան, մինչև վոր արյուն կաթի ստինքներից։ Մանավորապես ֆրանսիական կապիտալը նպատակ ունի Գերմանիա-

յին գցելու մի դրության մեջ, որ նա այլևս գլուխ չբարձրացնի։ Վերսայլի դաշնագրի հեղինակ կլեմանսոյի լկտի արտահայտությամբ գերմանական ժողովրդի թիվը 20 միլիոնով ավել է, նրա 65 միլիոն ազգաբնակչության փոխարեն լավ է լեթե լինի ընդամենը 45 միլիոն և նա կարծում է, որ այդպիսով կվերանա գերմանական վտանգը։ Վոչ վոք չի կարող 20 միլիոն ազգաբնակչություն վոչընչացնել և չնայած Գերմանիայի ծանր կացության, նա չի հրաժարվում աշխատանքից ու գիտությունից։

Իզուր է գործադրել բոլոր միջոցները ստրկացնելու Գերմանիային և նրան իսպառ դուրս գցելու Եվրոպական քարտեզից։ Այս է ահա ֆրանսիական բուրժուական կառավարության քաղաքականությունը, որ գործադրվում է շատ խիստ ու հաժառ կերպով։ Վերսալի դաշնագիրը մի քանի հարյուրավոր կետեր ունի, որով պիտի կքնեյին Գերմանիան և արնաքամ անեյին նրան։ Մոտ 65 միլիոն ազգաբնակության համար թողնվում է մի միայն հարյուր հազարանոց մի բանակ, որը չնայած շատ է խաղաղ պայմաններում, բայց շատ քիչ արտաքին վտանգի դեմ։ Նրան իրավունք չի տրվում ռազմանավեր, թնդանոթ ու զինամթերք և ոդանավեր ունենալ, որոնք անհրաժեշտ են զինվորական պայմաններում։ Ուրեմն որպես զինվորական մի ուժ Գերմանիան հաշվից դուրս է հանվում, սակայն այդ հաղթանակով Ֆրանսիան չի բավականանում և նա ձգտում է Գերմանիային տալ տնտեսական այնպիսի հարված, որից նա այլևս ուշքի չգա ու չկարողանա վերականգնել տնտեսապես։ Այդ ծրագիրը չի հաջողվել ամբողջովին, բայց և այնպես Գերմանական բուրժուազիան շատ բան է կորցրել, նա կորցրել է արտաքին շուկաները, կորցրել է գերմանական միլիտարիզմի հզոր պաշտպանությունը։ Ցավ այն, ինչ այդ բուրժուազիան չի կարողանում ձեռք բերել դրսից, ցանկանում է ձեռք բերել Գերման պրոլետարիատից։ Գերմանական բանվորը ստանում է Ֆրանսիական բանվորի սաացածի հազիվ կեսը։ Նա կորցրել է իր տնտեսական գրավումների մեծ մասը։ Սակայն և այնպես ծանր է Գերմանական արդյունաբերության վիճակը։ Ֆրանսիան խլում է Գերմանիայից Ռուրի քարածուխը, որով շնչում է Գերմանիան։ Այժմ փորձեր են կատարվում համաձայնություն կայացնել Ֆրանսիական և գերմանական բուրժուազիայի միջև, միասին շահագործելու Գերմանիայի ածխահանքերը։ Դրանց միությունը պիտի շա-

հագործե քարածուխը Գերմանիայում և յերկաթը Ֆրանսիայում։ Բելգիայում Ֆրանսիան ստացել է բավականաչափ յերկաթ, վորի շահագործման համար անհրաժեշտ է Բուրի կոկսը։

Բուրի գրավումից հետո ցամաքային Եվրոպայի տերը Ֆրանսիան է դառնում, քանի վոր Եվրոպայի քարածուխի ու յերկաթի գլխավոր հանքերը գտնվում են Ֆրանսիայի ձեռքում։ Այս ուժերն է ահա, վոր այն է ներշնչում Անգլիային, վորն ևս քարածուխ և յերկաթ ունի, վորով անգլիական իմպերիալիզմը գրավել է աշխարհի կեսը։ Գարգվում է, վոր Անգլիայի համար Եվրոպայում այսոր վտանգավոր հակառակորդ է բարձրանում։ Եվրոպայում առաջանում է մի ուժեղ պետություն և դա Ֆրանսիան է։ Եվրոպան անլուծելի հակամարտությունների մեջ է, Անգլիան և Ֆրանսիան կանգնել են իրար դիմաց և այնպես, ինչպես 10 տարի առաջ բոլորիս հայտար պարզ եր, վոր Անգլիայի և Գերմանիայի միջև պատերազմ պիտի ծագի, նույնպես և այսոր պատերազմ է ծագելու Անգլիայի և Ֆրանսիայի միջև, վորովհետև զորեղանալով յերկուսը իրար կողք ապրել չեն կարող։ Այդ այդպես է։ Փաստորեն այժմ Եվրոպայում կազմված են յերկու բանակներ, վորոնցից մեկը պաշտպանում է Անգլիային, իսկ մյուսը Ֆրանսիային։ Ֆրանսիան ծառայեցնում է իրեն Չեխոսլավակային, Բումինիային և այլ պետություններին, իսկ Անգլիան Հունգարիային և այլն։ Մի քանի ամիս առաջ Եվրոպայում բարդություններ առաջացան, վորի հետևանքով շարժվեցին այդ ժամը պետությունները և պարզվեց նրանց բռնելիք դիրքը։ Այսոր ուրեմն բուրժուական պետությունները գինվում են իրար դեմ։ Ֆրանսիան մեծ քանակությամբ աերոպլաններ և պատրաստում, վորոնք մի քանի ժամում մոխիր պիտի դարձնեն անգլիական արդյունաբերությունը։ Անգլիան նույնպես խոշոր թվով սավառնակներ ունի և կարող է ծանր հարվածներ տալ Ֆրանսիային։ Սպասվում է, վոր նոր պատերազմն իր սարսափներով կգերազանցի մեծ պատերազմին։ Անգլիական և Ֆրանսիական իմպերիալիստական իմբաղորությունները պատրաստ են և ահա այժմ այդ վտանգի ամբարների մեջ ծագել և գերմանական հեղափոխությունը։

Ֆրանսակոն և Անգլիական իմպերալիստները ծրագրել են Գերմանիան ոգտագործել իրենց համար։ Անգլիան ձգտում է վորոշ չափով ուժեղացնել Գերմանիային, վորպեսզի նա պարպանա ու

պատվար կանգնի Ֆրանսիայի դեմ։ Գերման ժողովրդի մեծ մասը բանվորներ են, նրա 54%-ը, 65 միլիոն ազգաբնակութիւնից։ Ամբողջ ուժ կներկայացնի իրանից այդ բանվորութիւնը, յեթե նա կանգնած լինի կառավարութեան գլուխ։ Շարեգամանը պատրաստել և վորոշ չափով պաշտպան կանգնել միապետականներին և դրանով վախ ազդել Ֆրանսիայի վրա։ Գերմանիան տալու եր 132 միլիարդ մարկ։ Այդ պարտքից նա տվել է ընդամենը 20 միլիարդ, բայց մարկն այժմ շատ է ընկել. 1 ռուբլին հավասար է 1000 միլիարդ գերմանական մարկին։ Գերմանական տնտեսութիւնը քայքայվել է խաղաո և այս հանգամանքը նրա բուրժուազիային հնարավորութիւն չի տալիս իրագործելու իր ծրագիրները։ Նա չի դիմանում և Գերմանիան զեկավարել չի կարողանում։ Սա պիտի խոստովանեն գերմանական բոլոր ազնիվ քաղաքացիները։ Այնպես, ինչպես Հայաստանում Համո Ոհանջանյանի և Ս. Վրացյանի կաբինետը 20 թվի աշնանը կորցրել եր իրեն և չեր կարողանում կառավարել, նույն դրութեան մեջ է այժմ գերմանական բուրժուազիան։ Ճիշտ այդպես էլ 1917 թվին Կերենսկին եր կորցրել իշխանութիւնը և չնայած նրա ճառերին, ապատնալիքներին, նրա բնակարանից կես վերստի վրա Բոլշևիկները հրատարակում էին իրենց թերթը, վորի փակման հրամանը ստորագրել եր հենց ինքը Կերենսկին։ Գերմանական գորքը Տյուրինգիայում տապալել է բանվորական կառավարութիւնը, բայց հենց ճիշտ այդտեղ Բոլշևիկները հարձակվել են բանտի վրա և ազատել իրենց ընկերներին։ Ուրիշ վայրերում փակված կոմունիստական թերթերը շարունակում են կանոնավոր լույս տեսնել։ Բրեմենում դրութիւնը նույն է։ Անկեղծ կոմկուսակցութիւնը մի քանի որ առաջ քաղաքային ընտրութիւնների ժամանակ ստացել է 24,000 ձայն, իսկ բուրժուական կոսակցութիւնները 21 հազար։

Պարզ է, վոր թեև բուրժուազիան նստած է կառավարութեան աթոռի վրա, բայց կառավարել և պրոլետարիատին գործ ու հաց տալ չի կարողանում։ Բերլինում, վոր կարգապահութեան յերևելի մի անկյուն է համարվել, ուր փողոցները որական 2 անգամ լվացվում եր պատերազմից առաջ և ուր ծխախոտը դեսին գցել չեր կարելի, քաղցածները կողոպտում են խանութները և վոստիկանութիւնը անզոր է նրանց դեմ։ Գերմանական ժողովուրդը գարհուրելի շրջան է ապրում, և յեթե հեղափոխութիւնը հաջողութեամբ չվերջանա, նա կայլասերվի և կդառնա ասկ գազութային

մի Հնդկաստան, Փաստ է, որ գերմանական բանվորության 6 %-ը կամ չի աշխատում կամ աշխատում է որևէ 3 ժամ։ Ներանց ստացած շաբաթական ռոճիկը, 25 միլիարդ մարկ հազիվ կբավականացնի մի բանվորի 2 որում և վատ և, յեթե նա ընտանիք էլ ունեցավ, նա չի ապրի։ Բժիշկները քննել են գերմանացի դպրոցական յերեխաներին և պարզել, որ 3 միլիոնը ներանցից թոքախտավոր է։ Յերեխաների մի խոշոր մասը՝ 60%-ը հիվանդ է «րախիտ» հիվանդությամբ, որ հետևանք է սննդի պակասության Հայաստանում սարսափներ շատ ենք տեսել, բայց մենք գարմանում ենք Գերմանիայի վրա։ Պատմում են, որ սովորական բան է դարձել, յերբ յերեխաներն ու ուժասպառ ծերերը ամեն որ թափվում են քաղաքից դուրս գտնված կարտոֆիլի ցանքսերի վրա, որպեսզի մի կտոր ուտելու բան գտնեն։ Տանտիրուհիները տասնյակ վերստերով ճանապարհ են գնում, որպեսզի մի կտոր փայտ գտնեն։ Գերմանական բուրժուազիան բոլոր աշխարհամասերում գործ է փնտրում, որպեսզի դուրս գա իր դրությունից։ Նա իր վալյուտան տեղափոխում է Ամերիկյան բանկերը։ Շտիննեսը, որ Գերմանիայի չոծված թագավոր է համարվում, մեծ նավթային տրեստ է կազմել և ուզում է շահագործել Հարավային Ամերիկայի նավթը։ Այսպիսով գերման բուրժուազիայի մի մասը յերկրից դուրսն է գտնվում։ Այդպես էլ հայ բուրժուանները Ղուկասյանը, Լիանոզովը, Սեյլանովը և ուրիշները նույնպես իրենց վոսկիներով այժմ գործեր են սկսել Յեվրոպայում։ Յերևի հայ բուրժուական հայրենասերների սիրտը թրթռում է այս փաստից։ Բայց դրանից ոգուտ չկա Աբարանի գյուղացուն։ Ներանց ունեցած վոսկին կարող է իրանց անձնատուր փրկել, բայց վոչ սոցիալապես։ Գերմանիայից բուրժուազիան չի կարող իր հետ վերցնել հողը և քարածուխը։ Դրանք մնալու են և ստեղծված դրության միակ յելքը բանվորա-գյուղացիական հեղափոխության մեջ է։ Գերմանական բանվորությունը դժբախտաբար գնում է սոցիալ դեմոկրատիայի հետևից, այստեղ է գերմանական հեղափոխության դժբախտությունը։ Բրեմենում ս. դ. քաղաքային ընտրություններից ստացել են 60 հազար ձայն և այդ հասկանալի է, որովհետև նա 50 տարվա պատմություն ունի և անցյալում լավ է ծառայել բանվոր դասակարգին։

Նա 2 միլիոն կազմակերպված բանվորներ է ունեցել և ցույց է տվել իր բանվորական լինելը, բայց վոչ հեղափոխական։ Հան-

բանվորության նախադաշ Երերոը (սոցիալ դեմոկրատ) նվեր է տրվել Համբուրգի պոլիցիականներին, որոնք ճնշել են հեղափոխությունը։ Սա մի զարհուրելի փաստ է և այս դեկավարներին բանվորությունն իր ուսերից վայր գցել չի կարողանում։ Սակայն դրությունը անհուսալի չէ։ Բերլինի ս. դ. կազմակերպության կոնֆերանսը որոշում է հանել Երերտի դեմ և վճռել կենտրոնական կոմիտեն վերընտրելու։ Ընտրությունների ժամանակ անցել են ձախ սոցիալ դեմոկրատները, բայց նրանք այնքան ձախ են, որքան Վ. Նավասարդյանն ու Ս. Վրացյանը Քաոսյանի համեմատությամբ։ Գերմանիայի քաղաքական դեկը գտնվում է պինեվաճառների, մեշչանների և քաղաքական նաժուսր ձախած ինտելիգենտների ձեռքին։ Հարյուրներով ու հազարներով ձերբակալվում են կոմմունիստներ, ծեծվում ու սպանվում որը ցերեկով փողոցի մեջ, չարգվում են բանվորական ակումբները և չարաչարծները հետևում անպատիժ։ Զնայած այս բոլորին կոմկուսակցությունը Գերմանիայում ավելի ու ավելի զորեղանում է և կենսունակ դառնում։ Այս հանգամանքը դալիս է ապացուցելու, որ հեղափոխությունը Գերմանիայում պարտվել չէ կարող, նա պիտի հաղթի. (Ծափեր)։

Պետք է շեշտել մի հանգամանք, որ կոմկուսակցությունը Գերմանիայում հակառակ պոլիցիայի և զորքի դրդումներին, հրապարակ չի բերում իր ուժերը, նա սպասում է վճռական րոպեին, որպեսզի հարվածը լինի տեղին և ծառայի իր նպատակին։ Նա ամիսներ առաջ ուներ 220 հազար կազմակերպված ու դինված հարյուրակներ, որոնք այժմ 3-400 հազարի են հասել. հեղափոխության հաղթանակի համար դա բավ ուժ է։

Գերմանական հեղափոխությանը ինչ է սպասում նրա հաղթանակի հետևյալ որը։ Արտաքին ճնշումների տեսակետից գերմ. հեղափոխության դրությունը չպիտի համարել անհուսալի։ Կարծում ենք խելագարություն կլիներ կռվել նրա գեմ։ Յեթե վարևե մեկը ցանկանա իր զորքը մտցնել հեղափոխական Գերմանիան, նա պիտի իմանա, որ դինվորական հագուստ հագած բանվորներն ու դյուղացիները հեշտությամբ չեն զենք բարձրացնի գերման բանվորի վրա։ Տրոցկին իր ճառերից մեկում ասաց, որ Ջրանսիան ճնշելու համար Գերմ. հեղափոխությունը մի միլիոն զորք պիտի մտցնի Գերմանիա, սակայն նրա հետ պիտի պատահի

այն, ինչ Ուկրանիայում պատահեց գերժան զորքերի հետ. 18 թվին 300 հազարանոց գերմանական բանակը 4-5 ամիս նստել էր Ուկրանիայում և չնայած գտնվում էր Սկարապադոկու կառավարության ձեռ, այնուամենայնիվ վարակվեցին «բալշևիզմի թունով» և յերբ վերադարձան Արևմ. Եվրոպա, լքեցին գերժանական բանակները։ Ֆրանսիան զինում է մանր պետություններին և նրանց կանգնեցնում հեղափոխության դեմ։ Վերջերս նա 800 միլիոն ֆրանկի ռազմամթերք և ժամակարարել Չեխոսլովակիային, Լեհաստանին ու Ռումանիային։ Լեհաստանը դեկավարվում է ֆրանսիական զինվորական շտաբի հրամաններով ու յենթարկվում նրան, բայց կասկածում ենք, վոր լեհական զորքը դուրս կգա գերմանական բանվորների դեմ և նրան ճնշի։ Բազմաթիվ հպատակ ազգեր ունի Լեհաստանը, վորոնց նա ճնշում է այնպես, ինչպես ճնշում էր հին Ռուսաստանը, մենշևիկյան Վրաստանը և դաշնակցական Հայաստանը իրենց հպատակ ազգերին։ Վրաստանն ընկավ հենց Լոռու ապստամբության պատճառով. նրա զորքը քայքայվեց Լոռիում։ Դաշնակցականները իրենց զորքերը կազմալուծել էին Զանգիբասարում և Աղբաբայում։ Լեհաստանը 30 մլիոն ազգաբնակություն ունի, վորից 10 միլիոնը այլազգիներ են։ Դրանք լեհական պետականության կատաղի ազգայնական քաղաքականության ճնշման տակ սոսկալի կացության մեջ են և հենց այդ ճնշումն է, վոր ներքուստ պայթեցնելու յե Լեհաստանը։ Ռուսաստանի ցարական կառավարությունն ևս խորտակվեց իր ազգային քաղաքականության շնորհիվ. նույն բանը կատարվեց և Ավստրո-Հունգարիայի հետ։ Ահա թե ինչու Լեհաստանը, այլ և Չեխո-Սլովակիան, չեն ներկայացնում մեծ վտանգ գերմանական հեղափոխության համար և նա սիրտ հաղթի։ Սորանով վերջացնում եմ իմ զեկուցումը մեր արտաքին դրության մասին, ընդմիջումից հետո յես կխոսեմ Միության ներքին դրության և ազգային քաղաքականության մասին։ (Ջերմ ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.— 10 րոպե ընդմիջում։

(Նիստն ընդմիջվում է 10 րոպեով).

ՆԱԽԱԳԱՀ.— Ընկերներ, նիստը հայտարարում եմ վերաբացված։ Խոսքը պատկանում է ընկ. Մռավյանին։

ՄՌԱՎՅԱՆ.— Ընկերներ, ուրեմն ընդհանուր գծերով յես պատկերացրի բո բժուական Եվրոպայի դրությունը և համանական հա-

ժաքեցի գերմանական հեղափոխության հաղթանակը։ Դառնանք մեր ներքին կացությանն։ Բորբոդային Միության յերկրները, ինչպես գիտեք, ավելի գյուղատնտեսական յերկրներ են, քան արդյունաբերական և մեր յերկրների հացը բավականացնում է թե մեզ և թե ուրիշներին։ Մեր հացը, վուշը, անտառները և բազմաթիվ հանքերը հսկայական հարստություն են կազմում։ Դեռ պատերազմից առաջ Ռուսաստանն արտահանում էր 80 միլիոն վոսկու ձու և թռչուններ։ Մեր խոշոր արդյունաբերությունը թույլ է և յերկրի տնտեսությունը պահանջում է արտաքին շուկաներ, վորոնցից նշանակալից են Իտալիան, վոր չնայած ֆաշիստական է և գտնվում է Մուսոլինու դիկտատորության տակ, բայց նա լրջորեն զբաղված է մեզ հետ առևտրական սերտ հարաբերություններ ընդլայնելու։ Ցրանսիան մտադիր է տալ մեզ գործարանական ապրանքներ և փոխարենը հաց ստանալ։ Բայց մեր յերկրի համար ավելի արժեքավոր է գերմանական շուկան, վորովհետև Անգլիան ու Ցրանսիան մի որ կարող են դադարել մեզ հետ կապ ունենալուց, վորովհետև նրանք ունեն բազմաթիվ գաղութներ, վորոնց թալանում են։ Գործնական տեսակետից մեզ համար անհրաժեշտ է Գերմանիան, վորի տեխնիկայից ոգտվելով կուժեղացնենք և մեզ, իսկ մեր հացով ու հում նյութով կբավարարենք նրան։ Մենք բազմաթիվ հանքեր ունենք, ինչպես Զանդեզուրի, Բազվի և այլն, վորոնց ոգտագործել չենք կարողանում շնորհիվ տեխնիկայի բացակայության։ Ահա թե ինչու խոշոր նշանակություն ունի մեզ համար գերմանական տեխնիկան այդ դեպում և մեր բանվորությունը և նա շահագրգռված է գերմանական հեղափոխության հաղթանակով։ Ահա թե ինչու մեր բոլոր թերթերում ամեն որ կգտնեք նվիրատվություններ գերմանական պրոլետարիատին։ Վորքան էլ վոր մենք ուժեղ ենք դեռ մեզ, այնուամենայնիվ չենք ուռանում խոստովանել, վոր կապիտալիստական աշխարհը մեզնից ուժեղ է։ Սակայն մենք չենք հուսահատվում, վորովհետև բանվորությունը նրանց մոտ ակտիվություն և ցուցադրում և համակրանք դեպի Բորբոդային Միությունը։ Յեթե ցանկանում ենք հարատև լինի մեր գոյությունը, պետք է ուժեղացնենք նարմիր բանակը և մեր տնտեսությունը, դիմադրելու կապիտալի արշավանքներին։ Վերջինս դեռևս սուր ատամներ ունի, որինակ Քրքզնի ուլտիմատումը։ Հիշենք նաև Վորովսկու սպանությունը, վորի սպանողին Անարոն-

յանի յերդած բուրժուական Շվեյցարիան արդարացրեց։ Այս 3 տարում մենք տնտեսապես ուժեղացել ենք և հանգիստ ենք առնում։ Բայց հաճախ մենք չենք կարողանում գնահատել այդ բարիքները, ինչպես այդ պատահում է անձնական կյանքում։ Շատ ասպարիզներում մենք դեռ չենք իրականացրել մեր ծրագիրը 100-%-ով։ Այդ բոլորը պետք է իրագործել և դրան մենք անպայման կհասանենք ձեռք-ձեռքի տված մեր նոր բարեկամների հետ, հանձինս նրա նախկին դաշնակցականների (ծափեր)։ Մենք մեր ձեռքին ենք պահել մեր յերկրի կարևոր գործունները, յերկաթուղին, հողը խոշոր գործարանները։ Մենք թույլ չենք տալիս, որ բուրժուազիան շահագործի բանվորության և մեծ ժողովրդության խնդիրը և մեզ համար դյուղացուն դուրս բերել մանր առևտրականների ձեռքից, պարզացնելով կոոպերացիան։ Մեր կարմիր բանակը այս 6 տարվա ընթացքում այնքան է ուժեղացել, որ դարձել է անհաղթելի. (ձայներ՝ կեցցե կարմիր բանակը)։ Մենք բացել ենք բազմաթիվ գինվորական և հրամանատարական դպրոցներ, ուր սովորում են ռուսական հազարավոր յերիտասարդներ։ Յեթե կանգ առնենք Անդրկովկասի դրության վրա, պետք է ասենք, որ սկսած 1905 թ. մինչև այժմ նման խաղաղություն չի յեղել։ Հարկավոր է պարզել այն ազգային քաղաքականությունը, որով ղեկավարվում է մեր Միության կառավարությունը։ Սկսած 1898 թվից մեր կուսակցությունը նկատել է, որ հասարակական կյանքը գնում է դեպի միջազգայնացում։ Բուրժուական պետությունները դուրս են գալիս իրանց ազգային սահմանից և գրավում նոր յերկրներ։ Անգլիան 45 միլիոն ազգաբնակություն ունի, սակայն նա տեր է 450 միլիոն հպատակների։ Վերջին տարիներս նկատվում է, որ հպատակ ազգերը վոտքի են կանգնում և պաշտպանում իրենց իրավունքները։ 2-րդ Ինտերնացիոնալում յեղել են մարքսիստ հավատվող մարդիկ, որոնք հայտարարել են, թե վատ չե, որ կուլտուրական Անգլիան յենթարկում է իրեն անկուլտուրական Հնդկաստանը և յենելով դրանից արդարացնում են կապիտալի ավերածությունները գաղութներում։ Առաջին դեկրետներից մեկով, Սորհրդային Ռուսաստանի կառավարությունը անկախ հայտարարեց Ֆինլանդիան, ընդունեց Հայաստանի ինքնորոշման հարցը։ Սորհրդային Ռուսաստանը յերբեք նպատակ չուներ, որպես մի մեծ յերկիր, ոչնչել փոքրերին։ Ինչ ելին անում Հայաստանի և

Վրաստանի ազգայնական կառավարությունը։ Ինչպես տեսաք Վրաստանն ոգտվելով իր աշխարհագրական դիրքից, տոկոսներ է վերցնում Հայաստան մուծվող ապրանքներից, ճնշում Լոռին և այլն։ Հայաստանի մասին դուք գիտեք, որ կար «մաքրելու» քաղաքականությունը։ Դաշնակցությունը կազմալուծվեց, որովհետև «ծովից-ծով» յերազներով էր տարված. նա կանգ առավ Բոյուք-Վեդի պատերի տակ։ Պատմությունն իր որենքներն ունի և բազմազգի բուրժուական պետությունները իրանց սխալ քաղաքականության շնորհիվ անպայման խորտակվում են։ Յերևանի նահանգը Ռուսաստանի մի գաղութն էր, որտեղից դուրս էր բերվում բամբակ և այլ նյութերը դեպի Ռուսաստան։ Պոլսի թերթերը գրում են, թե նույն գաղութային քաղաքականությունը ունի և այժմյան Ռուսաստանը։ Բայց ով է տվել Հայաստանին միլիոններով ոսկի դրամ, ով է տվել տեկստիլ գործարան, 21 թվի Ռուսաստանի սովի ժամանակ մենք ստացանք հարյուր հազարավոր փթերով ցորեն։ Կային մի ժամանակ մարդիկ, որոնք պնդում էին, թե Հայաստանը պետք է ունենա սեփական որիենտացիա։ Բայց մեր դաշը Ռուսաստանի և այլ Խորհրդային հանրապետությունների հետ բոնի չի։ Յեթե վաղը մեր Խորհուրդների համագումարը վորոշի դուրս գալ Խորհրդային Միությունից, հավատացած յեղեք, որ մեր դաշնակիցները ուժով մեզ չեն կապի. բայց կարող է արդյոք Հայաստանը ապրել անկախ։ Յես պատասխանում եմ՝ վոչ։ Հայաստանը իր անկախության շատ չնչին ժամն է կորցրել։ Տարբերությունն այն է, որ մինչև նրա Արտաքին Գործոց կոմիսար Մռավյանի իմպերիալիստական պետությունների հետ խոսում է Չիչերինը, որ իր հետևին կանդնած ունի 160 միլիոնանոց մի ժողովուրդ, իսկ Մռավյանը մեկ միլիոն քաղցած ու ծարավ գյուղացիներ ու վորբեր։ Մենք պետք է գործակցենք Մոսկվայի պրոլետարիատին, նա մեր ամենալավ դաշնակիցն է։ Հայաստանի սահմանների խնդիրը Վրաստանի ու Ադրբեջանի հետ մենք լուծել ենք մի քանի րոպեում, նույն ձևով լուծված են և Դաշնակցության համար անլուծելի մնացած մի քանի խնդիրներ և Հայաստանն այժմ շրջապատված մահմեդականներով ապրում է նրանց հետ համերաշխ կյանքով։ (Ձայներ՝ կեցցե ազգերի համերաշխությունը)։

Ընկերներ, յես վերջացնելով իմ խոսքը, ասում եմ հետևյալը, —ինչքան էլ որ մենք հեռու ենք բավարար բարեկեցիկ կյանքից, ինչքան էլ մենք աղքատ ենք և շատ անելիքներ դեռ ունենք,

այնուամենայնիվ մենք ասում ենք, որ 1923 թվի նոյեմբերի 21-ին Խորհրդային Հայաստանի և առհասարակ Խորհրդային Միության դրությունը չերբևիցե այնքան կայուն ու ապահով չի եղել ինչքան չերբեե (ծափեր)։ Իմպերիալիստական աշխարհի բոլոր ինտրիգների, ինչպես և մենշևիկների, դաշնակցականների և մուսաֆաթականների դեմ մենք կազմակերպել ենք և կազմակերպում ենք մեր կարմիր բանակը, վերականգնում ենք մեր գյուղատնտեսությունը, մեր ազգային կուլտուրան։ Դուք կարողեք կարդալ թվական տվյալները, թե Դաշնակցության ժամանակ քանի գլուխ և լուլա տեսել, քանի դպրոց և չեղել, իսկ այժմ քանի։ Դաշնակցության քայքայման պրոցեսում, ինչպես և Ռուսաստանի մենշեվիկների և եսերների քայքայման ժամանակ նկատված գյուղացիների բանվորների և աշխատավոր ինտելիգենտների ազատագրումը ազգային կապանքներից դրական չերևույթ է և այդ տարրը գալիս է ասելու, որ մենք կոմունիստներս, վատ բան չենք արել այս չերկրում հաստատելով մուրճի և մանգաղի իշխանությունը, թեկուզ կարմիր սվինների ոգնությամբ։ (Ցերկարատև ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.—Ցերե հարցեր կան, խնդրեմ ուղարկել գրավոր։

ԲԱԿՈՒՆՑ.—Ըստ կարգի։ Այս աուդիտորիայի առաջ չի կարելի խոսել. կամ հարկավոր է նիստը փակել, որովհետև ժամանակը անցել է և հավաքել հարցերը, վաղը պատասխանելու համար, կամ ընդմիջում անել, ապա պատգամավորների առաջ միայն կատարել վիճաբանություն։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Առաջարկում են հարցերին պատասխանել այժմ, իսկ ըստ էության խոսել վաղը։

ԲԱԿՈՒՆՑ.—Ցես հակառակ չեմ միայն հարցերը լսելու առաջարկին, դրանց պատասխանները ահագին ժամանակ կխլեն գեկուցողից։ Լավագույն է նիստը հայտարարել փակված. հարցերը տալ գեկուցողին գրավոր, որոնց նա կպատասխանի վաղը։

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Քանի որ բեգլամենտը խախտված է և գեկուցման տրված է 3 ժամ ժամանակ, առաջարկում եմ նիստի ժամանակը չսահմանափակել. կարելի չե մինչև ժամը 12-ը աշխատել։ (Ձայներ-«Ձենք կարող»)։

ՆԱԽԱԳԱՀ.—Քվեարկում եմ 2 առաջարկները։ Անցնում է ընկ. Բակունցի առաջարկը։

Նիստը հայտարարում եմ փակված։

Նիստը փակվում է 9 և 45 րոպեին։

ՀՈՐՈՐԴ ԵՒՍՏ

Նոյեմբերի 22-ին, առավոտեան ժամը 11 անց 45 րոպե նախագահում է ընկ. Սիմեոն Փոլյան։

ՆԱԽԱԳԱՀ.— Համագումարի 4-րդ նիստը հայտարարում եմ բացված. Խոսքը պատկանում է ընկ. Մռավյանին, յերեկվա զեկուցման առթիվ տրված հարցումներին պատասխանելու համար։

ՄՌԱՎՅԱՆ.—Ընկերներ, այստեղ բազմաթիվ հարցեր են տրված։ Շատերը կրկնված են, կաշխատեմ պատասխանել կարճ։

1. Ինչ է Ամերիկայի տեսակետը Յեվրոպայի անցքերի վերաբերյալ։ –

—Ամերիկան զուտ կապիտալիստական յերկիր է. նա Յեվրոպային նայում է այն տեսակետից, թե ինչ կարող է ստանալ։ Նա վոչինչ չի ուզում զոհել Յեվրոպայի համար։ Նա այս րոպեիս մոտ 800 միլիոն դոլար է փոխառություն տալիս Գերմանիային, հաց գնելու համար։ Նա այդ փողը տալիս է Ամերիկյան հացավաճառներին, Գերմանյա՝ հաց տանելու համար։ Դա մի տեսակ սուբսիդիա է Ամերիկայի հացավաճառներին։ Ամերիկյան այժմ զբաղված է Ամերիկայի գրավմամբ, ուզում է խլել Մեքսիկայի նավթահանքերը։ Դրա համար էլ նա իրեն հեռու է պահում Յեվրոպական գործերից։

2. Յեթե գեռ ժամանակը չէ Գերմանական հեղափոխության, ապա ինչով բացատրել Համբուրգի ապստամբությունը։

—Համբուրգում ապստամբությունը առաջացել է զուտ ազատների կողմից։ Դժվար եր նրանց կանգնեցնել, մեր կուսակցությունը հարկադրված է յեղել միջամտել։ Գերմանիայի կոմկուսը այժմ խուսափում է մեծ ճակատամարտից։

3. Գերմանական հեղափոխության ուշացման դեպքում յերկյուղ չկա միջպետության առաջ գալու։

Այդ յերկյուղը վորոշ չափով կա. Գերմանիան հանրապետական չէ բոլորովին։ Ինչպես գիտեք Բադաժառանգը մտել է Գերմանիա։ Յեթե հաջողվի վիլպետություն հաստատել, դա մի դժբաղդություն կլինի։ Հոհենցոլերների դահ բարձրանալը

Ֆրանսիային ավելի կզրգռի և նոր արյունահեղ պատերազմ կբոզ և առաջանալ։

Գերմանի պրոլետարիատի դեկավար կոմկուսակցությունը կըռվում և միապետական շարժման դեմ և հետևությամբ գլուխ չի ծռի միապետության առաջ։

4. Քեմալի պետությունք ինչ վերաբերմունք և ցույց տալիս կոմունիստներին իր յերկրում և ինչ հարաբերության մեջ և մեր պետության հետ։

— Թյուրքիայում, ինչպես մյուս բուրժուական յերկրներում, կոմունիստական կուսակցությունը անլեգալ է։ Յերբ Քեմալը 20—21 թվականին կռվում եր իմպերիալիստ պետություններին դեմ, նա փորձ եր անում հիմնել պաշտոնական կոմունիստական կուսակցություն, ցանկանալով նրան դարձնել իր հյու հպատակը, սակայն այդ փորձը անհաջող անցավ։ Մի շարք յերիտասարդ թյուրքեր հեռուսական ճիգ թափեցին կոմկուսակցությունը կազմակերպելու համար. այդ կազմակերպությունը կա այժմ, թեև ուժեղ չե, քանի որ բանվորական դասակարգը նույնպես ուժեղ չե այնտեղ։ Դուք հիշում եք, որ մի շարք թյուրք կոմունիստ ընկերներ ծովը թափվեցին. Սուրհի և այլն հալածանքի յենթարկվեցին ու բանտարկվեցին։

5.— Ինչ դիրք և բռնել Միջերդային հանրապետությունը Ղարսի և Սուրմալուի հարցի հանդեպ։

— Դուք գիտեք, որ 21 թվին հոկտեմբերի 18-ին մենք դաշն կնքեցինք Թյուրքիայի հետ, Ախուրյանը և Արաքսը սահման ընդունելով։ Մենք հրաժարվեցինք Ղարսից և Սուրմալուից, որովհետև Հայաստանի ժողովուրդի շահն եր պահանջում այդ։ Այդպիսի պայմաններում մենք չենք կարող մի քանի գավառները գերադասել Թյուրքիայի բարեկամությունից։ Մենք խաղաղությունը գնել ենք թանգ գնով և վոչ մի մտադրություն չունենք ետ տալու։ Այդ յերկու գավառների փոխարեն մենք ունենք այստեղ ճահիճներ. յերեք չորացնենք նրանց, յերեք ջրենք մեծ և փոքր Սարդարաբատի, Ջեղվարդի, Արազդայանի դաշտերը, տասնյակ հազարավոր դյուզացիություն կտեղավորենք այդ հողերի վրա։ Փոխանակ դաշնակցականների նման գենք ճոճելու Թյուրքերի դեմ, մենք գերադասում ենք բոլոր ուժերը գործադրել ո րչի ուղղությամբ յերկրի արդյունաբերության և կուլտուրայի բարձրացման

ասպարեզում, որը ավելի շահավետ է Հայաստանի աշխատավորության համար։ Այսոր ավելի քիչ, քան յերբեք, տրամադիր չենք խոսելու Մուրմանսկի և Ղարսի մասին։

6. —Ինչով բացատրել ֆաշիզմի յերկպառակությունը Գերմանիայում և արդյոք դա ինչ աստիճան նպաստավոր կարելի յե համարել հեղափոխության համար։

— Նպաստավոր է, յերբ թշնամու բանակը մի քանի մասերի յե բաժանում և յերբ տարաձայնություններ կան նրանց մեջ։ Այնտեղ գեներալները իրար հետ մրցում են շրջման դեկավարությունը ստանձնելու համար. ահա այդ տարաձայնությունները նպաստավոր են հեղափոխության համար։

7.— Ինչ է կարծ կասուցկու վերաբերմունքը դեպի գերմանական հեղափոխությունը։

Կասուցկին այսոր մի կենդանի մեռել է. նրան վոչ վոք չի լսում։

Ինչպես վերջացավ Անգլիական ուլտիմատումը։

— Այդ խնդիրը վաղված է արդեն։ Անգլիական կառավարությունը մի շարք խիստ պահանջներ արավ Ռուսաստանից, վորոնք չկատարվեցին մեր կողմից։ Մեր ներկայացուցիչները չնայած Քերզոնի պահանջին, այժմ շարունակում են իրենց աշխատանքները Պարսկաստանում և Ավղանիստանում։

10.— Յերթե Յեվրոպական պետությունների միջև նոր պատերազմ սկսվի, Ռուրհրդային իշխանություն ինչ դիրք կբռնի նրանց հանդեպ— Ի հարկե մենք կաշխատենք չմիջամտել Յեվրոպական պատերազմին, ինչքան նրանք մեզ չեն դիպչի։ Այդ պատերազմը բանվորների և գյուղացիների արյան գնով է կատարվելու։ Դրա համար էլ մենք կողմնակից ենք խաղաղության։ Մի քանի անգամ Ռուրհրդային վշխանությունը զինաթափման հարց է դրել Ջենովայի և Լոզանի կոնֆերանսներում, բայց նրա ձայնը ծնացել է ձայն բարբառո հանապատի, կապիտալիստական գիշատիչների համար։

11.— Ինչ վիճակի մեջ է միջին Յեվրոպայի Միացյալ Նահանգների գաղափարը։

— Այդ գաղափարը պատերազմի ժամանակ առաջ չեկավ, բատ վորում, բոլոր պետությունները պիտի չենթարկվեին զերմանական բուրժուազիային։ Մենք դրան հակադրել ենք ուրիշ գաղա-

փար—միջին Եվրոպայի Խորհրդային Միության գաղափարը։ Ընկ. Տրոցկին այդ մասին գրել է։ Մեր ընկերները այսօր Գերմանիայում տարածում են այդ միտքը։

12.— Ինչ է տրվում այժմ Արևելքում։

Եթե այս հարցը Հնդկաստանի, Եգիպտոսի և Միջագետքի մասին է, պիտի ասեմ հետևյալը.— Եգիպտոսում 2 տարի առաջ կար ազգային ուժեղ շարժում Անգլիայի դեմ. ի վերջո համաձայնություն կայացավ Անգլիական իմպերիալիստների հետ և ստեղծվեց բուրժուական կառավարություն, իսկ ավելի դեմոկրատական և բանվորական տարրերը դեռ այնքան ուժեղ չեն, բուրժուազիայի դեմ հեղափոխություն բարձրացնելու համար։ Ավելի վատ դրություն է Միջագետքում։ Անգլիական կառավարությունը բոլոր միջոցները ի գործ է դնում տեղական իշխանություններին կաշառելու, որպեսզի նրանց միջոցով իշխե գյուղացիների վրա։ Այնտեղ պարտիզանական ապստամբություններ են եղել։ Բանը հասել է այնտեղ, որ աթաբական շեյխերը բողոքում են անգլիական կառավարության դեմ, որը Միջագետքից արտաքսել է նրանց և այժմ այդ շեյխերը ապաստանել են Պարսկաստան։ Շարժման դժբախտությունն այն է, որ յերկիրը գյուղացիական է։ Անգլիական կառավարությունը ունի այնտեղ ուժեղ տեխնիկա, որի դեմ տեղացիք պայքարում են դժվարությամբ։

Նույն շարժումը նաև նկատվում է Հնդկաստանում, որտեղ շարունակվում են ուժեղ գործադուլներ և ցույցեր։ Շարժման ղեկավարը բուրժուազիան է։ Դժվար է ասել, թե ով կհաղթանակի, բայց շարժումը որեցոր ուժեղանում է և անգլիական իմպերիալիզմը թուլանում է։ Աշխատավորական մասսան այնտեղ սպասում է, որ Խորհրդային կառավարությունը վարոշ ոգնություն կհասցնի իրեն։ Թեև Խորհրդային Միությունը չի կարող զորքով ոգնել, բայց ճնշված ժողովուրդների համակրանքը Խորհրդային Միության նկատմամբ վորոշ դրական ֆակտոր է Արևելքում հեղափոխության հաջողության։

13.— Ինչպես է Տաճկաստանի փոխհարաբերությունը Խորհրդային յերկրների հետ։

— Այդ հարաբերությունները շարունակվում են ինչ բարեկամական, քանի որ թուրքիայի մասսաները զգում են, թե ինչ մեծ դեր ունեցավ Խորհրդային Ռուսաստանի պաշտպանությունը

թյուրքիայի համար, ընդդեմ եվրոպական իմպերիալիզմի մղած կռվում։

14.— Արևմտյան Եվրոպայի գյուղացիությունը ինչ վերաբերմունք և ցույց տալիս գերմանական հեղափոխության և առհասարակ պրոլետարական հեղափոխության հանդեպ։

Այնտեղ կա ուժեղ կուլակություն, մանավանդ Բավարիայում, որը ուժեղ բերդն է ֆաշիզմի։ Գերմանիայում կա այսպես կոչված «չունիմ», սակավահող գյուղացիություն և մլլիոնավոր գյուղական բանվորություն։ Գերմանական կալվածատերերը մլլիոնավոր մշակներ են աշխատեցնում իրենց հողերում։ Ահա այդ մշակներն են, որ բնական դաշնակիցներն են գերմանական հեղափոխության։ Թերթերում կարդում ենք, որ նրանք հավագուժարներ են հրավիրում և մարտնչող բանվորության, հումկուսակցության հետ կապ են պահպանում։ Լեհաստանում և Բումինիայում գյուղացիական հարցը ավելի սուր և գրված. այնտեղ կան մեծ կալվածատերեր։ Վերջերս գյուղացիական ապստամբություններ են տեղի ունեցել թե Գերմանիայում, թե Լեհաստանում և թե Բումինիայում։ Այնտեղ մեր ընկերներն ունեն բանվորա-գյուղացիական կառավարության լոզունգը։

15. Ինչպես Շտրեզեմանի կաբինետի կազմվելը, ինչ վերաբերմունք ուներ Մուսոլինին դեպի սովետական կառավարությունը։

—Դժվար թե Շտրեզեմանի կաբինետը ազդած լիներ Մուսոլինիի քաղաքականության վրա։ Բայց Իտալիան մեծ կախում ունի Անգլիայից, որից ածուխ և ստանում և Ամերիկայից, որից հաց և ստանում։ Իտալիան ուզում և ազատվել մեծ պետությունների ազդեցությունից և առևտրական դաշն կապել Խորհրդային Միության հետ։

16. Եթե պատահի, որ Գերմանական հեղափոխությունը պարտվի ու ֆիսպետական տիրապետության հաստատման հետևանքով մի ևս կոալիցիա հարձակում սկսի Խորհրդային Ֆեդերացիայի վրա և եթե իր կամքից անկախ Խորհրդային զորքերը թեկուզ ժամանակավորապես հարկադրված լինեն թողնել մեր սահմանները, արդյոք հայ ժողովուրդը չենթակա չի լինի սրածության և եթե այո, ապա ինչ չերաշխիքներ կան այդ վտանգը կանխելու համար։

Ի հարկ և կարելի և մեջտեղ եկ չերևակայել ավելի վատը. թե

վիապետությունը Գերմանիայում կհաղթանակի, թե գերմանական բուրժուազիան իր ծառայությունը կստաջարկի Անգլիային և Ֆրանսիային ընդդեմ Խորհրդային Միության։ Ցես ասացի, որ մենք մեր բոլոր ուժերով կդիմագրենք։ Ասացի նույնպես, որ դժվար թե Ֆրանսիան և Անգլիան իրենց բանակները մեծ չափերով շարժեն մեր դեմ. Գերմանական բանվորությունը կարող է նրան արգելք լինել։ Այսօր մի նշան չկա յենթագրելու, թե կարմիր բանակը կարող է թողնել Հայաստանի սահմանները։ Ցեթ 17 թվին ռուսական գինվորները հեռացան, մինոլորդը և պայմանները այլ էին։ Ցերը այսօր նրանք մեզ մոտ իրենց գդում են այնպես, ինչպես իրենց տանը, հոգեբանական պատճառ չունեն այլևս հեռանալու։ Գուց է կարծում եք, թի ֆիզիքական պատճառ կարող է լինել։ Ցես այդ կարծիքին չեմ։ Ինչպես էլ որ լինեն պայմանները, մենք մեզ բավականաչափ ուժեղ ենք զդում և մեր սահմանները կարող ենք պաշտպանել ամեն անակնկալից։ Անդրկովկասյան հանրապետությունը խաղաղության ձգտելով հանդերձ, չի հրաժարվում բանակը կազմակերպել և ուժեղացնել։ Այս պայմաններում կարծում եմ հարց ոչով ընկերոջ վախը անտեղի է։ Ցեթե անգամ մեծ միջազգային ընդհարումներ լինեն, Խորհրդային Միությունը կունենա միշտ բավականաչափ ուժեր իր սահմանները պաշտպանելու համար. մենք դրան ոմ կասկած չունենք։

Ընկերները թույլ տվեք մի շարք հարցերի չպատասխանել։ Նրանք մեզ շատ հեռու կտանեն, ժամանակն էլ սարճ է։

17. Ինչով բացատրել այն իրողությունը, որ ֆաշիստական կազմակերպության յետևից գնում է պրոլետարիատի մի հոծ մեծամասնություն։

Դժվար թե ճիշտ է այդ։ Ֆաշիստների հետևից գնում են բանվորներից միայն փոքր խմբեր։ Այդ բանը պատահեց գլխավորապես Իտալիայում, ուր բանվորները հույս ունեյին, թե ֆաշիստների սուրը կարող է գինուններ կորզել կապիտալիստներից։ Բայց վերջերս մեծ հիասթափություն կա հենց նույն իսկ Իտալիայում։ Այնտեղ մեծ գործադուլներ են անում բանվորները, հակառակ ֆաշիստ ղեկավարներին։ Գերմանիայում նույնպես ֆաշիստները փորձ արին բանվորներին իրենց կողմը քաշելու։ Գարենի սպառման ժամանակ, բանվորներին գրգռելով, հրեյական չարդեր և թալան կազմակերպեցին։ Սակայն գժվար է հավատալ, թե այդ ընթացքը կը-

շարունակվի։ Ճաշիզմի դլխավոր պաշտպանները նախկին ոֆիցերներ, ուսանողներ և բուրժուաներ են։

19. Ըստ ընկ. զեկուցողի կոմկուսը Գերմանիայում ունի 300 հազար լավ սպառազինված ուժ. ինչպես և, վոր մենք այստեղ իմանում ենք այդ մասին, իսկ Գերմանիայի կառավարությունը չգիտե. իսկ յերթե գիտե, ինչպես և հանդուրժում և չի գրավում ռազմամթերքը և չի զինաթափում նրանց։

—Նա շատ կցանկանար այդ անել, բայց չի հաջողվում։

20. Ռուսական եսսերական և մենշևիկական կուսակցությունները իրենց իսկ կողմից դեյուրե լուծված են համարվում Ռուսաստանում, թե վոչ։ Արտասահմանում ցրացած նրանց զեկավարղերը (վոչ բելոգվարդիականները) այժմ ինչ վերաբերմունք ունին դեպի Խորհրդային իշխանությունը։

—Այո, նրանց կազմակերպությունը մեծ չափերով կատարվել է։ Շարքային եսսերների համակրությունը կայացել և արդեն, վորը հայտարարել և այդ կազմակերպությունը։ Այժմ Ռուսաստանում մենշևիկների համակրանքը և պատրաստվում, նույն նպատակով։ Եսսերների և մենշևիկների զեկավարները արտասահմանում ցրում են իրենց անհաշտ դիրքերում, նման դաշնակցական զեկավարների. նրանք հույս ունին թե Եվրոպական պետությունները մի որ կմիջամտեն Խորհրդայի Միության գործերին և նրանց միջոցով իրենք կմտնեն յերկիր. կամ մի որ մեր բանվորությունն ու գյուղացիությունը կարող և ապստամբվել և տապալել Խորհրդային իշխանությունը։ Սակայն նրանք քիչ հետևողներ ունեն։ Գիտեք վոր Խորհրդային իշխանության կատաղի հակառակորդ Տյուտյունիկը, վոր հարձակում գործեց Խորհրդային իշխանության դեմ, այժմ յերես և դարձրել նրանցից և յեկել Ուկրաինա, վորի տված փաստերից իմանում ենք, թե ինչ մեծ ոժանդակություն և ցույց տվել Եվրոպան ընդդեմ Ռուսաստանի։ Չվիցերիայում տեղի ունեցած Վարոլևկու սպանման դատավարության ժամանակ նախկին սպիտակ գվարդիական գեներալ Դոբրովոլսկին բարեկամ և հայտարարել իրեն Խորհրդային իշխանության։ Գնաք և գիտենալ, վոր արտասահմանում գեներալները յենթարկվում են արհամարանքի դրա համար էլ նրանք հետդհետ և տրամադրվում են դեպի Խորհրդային իշխանությունը, համաքելով նրան ազգային իշխանություն։ Այո, մենք ազգային իշխանություն ենք, բայց վոչ բուրժուական իմաստով։

22.—Ի՞նչ կապ կա գերմանական սոցիալ դեմոկրատիայի և արտասահման ապաստանած ռուս եմիգրանտների միջև։

Ռուս կամ վրաց մենշևիկները յավ բարեկամներ են գերմանական սոցիալ դեմոկրատիային, վորովհետև նրանք էլ նույնն են անում, ինչ այդ եմիգրանտները անում էին այստեղ։

23.—Ի՞նչ դրության մեջ է Սորհրդային իշխանության առևտրական դաշինքը Գերմանիայի հետ։

Գերման բուրժուազիան ցանկանում է ավելի Ամերիկայի հետ առևտուր անել, քան Ռուսաստանի հետ. այնուամենայնիվ բազմաթիվ գերման կապիտալիստներ ցանկանում են կոնցեսիաներ վերցնել Ռուսաստանից։ Արդեն հայտնի կրուպը Հյուսիսային Կովկասում 10.000 դեսիատին հող է վերցրել աշխատանքներ սկսելու համար։

24.—Ի՞նչ մասնակցություն ունեցավ հայ բոլշևիկյան կուսակցությունը Ղարսի անկման գործում 1920 թ.։

Վոչ մի մասնակցություն. հայ բոլշևիկները Ղարսի անկման ժամանակ բանտում նստած էին։ Ղարսի ճակատում կովողները դաշնակցական խմբապետներն էին իրենց զորքերով։ Դաշնակցականն շեֆերն են միշտ տարածում այդ պրովակացիան։ Ձեռ չերեկ ձեզ ասի դաշնակցական բանակի քայքայման պատճառները. նրանք, դաշնակցական զորքերը, թալանի վարժվելով, չեյին կարող տաճկական ավելի կանոնավոր բանակին դիմադրել, նման 1918 թ. գերմանական զինվորներին, վորոնք մոնելով Ուկրաինա, թալանեցին և դրանով քայքայվեցան ու մեծապես նպաստեցին գերմանական բանակի կազմալուծման։ Իսկ ասածել, վոր հայ բոլշևիկները մտել են Ղարսի զինվորների մեջ և իրենց ագիտացիայով քայքայել նրանց, միանգամայն անհեթեթություն է։

25.—Սորհրդային Միությունը ինչ միջոցներ է ձեռք առել կամ ինչպես է մտածում լուծելու տաճկահայ գաղթականների հարցը, թե այստեղ Կովկասում և թե Սորհրդային Միությունների սահմաններից դուրս։

Դուք գիտեք, վոր Լոզանի կոնֆերանսում Սորհրդային կառավարության ներկայացուցիչ ընկ. Չիչերինը հայտնեց, թե Ռուսաստանը կարող է ընդունել 500,000 հայ գաղթականություն։ Ընկ. Չիչերինը գրավոր կերպով այդ ցանկությունը հայտնեց Լոզանում գտնված մի քանի ամերիկյան ներկայացուցիչների։ Այդ խոստումը

Խորհրդային Ռուսաստանը կիրագործի. բայց, ինչպես Զիշերինն է ասել Խորհրդային Միությունը հնարավորություն չունի նրանց համար տնտեսություն ստեղծել, դրա համար միլիոններ են պետք։ Զիշերինը գրել եր, որ յերթե Ամերիկյան բարեգործական հիմնարկությունները իրենց վրա վերցնեն ճանապարհի և տնտեսություն կազմակերպելու ծախսը, Ռուսաստանը պատրաստ է նրանց ընդունելու։ Ամերիկյան ներկայացուցիչ Մոնդոմերին յեկել եր Կովկաս, վերադարձին նա հայտնել եր Զիշերինին, թե ամերիկյան հիմնարկությունները կտան այդ ծախսերը։ Խորհրդային կառավարությունը ընդառաջ գնալով այդ պատրաստակամության, վորոշել և արդեն հողերի վայրը։ Սակայն մինչև այժմ Մոնդոմերիից դեռ դրական պատասխան չի ստացվել։ Վերջերս կարծես դործը լայն հիմքերի վրա է դրվում և գուցե կարելի լինի առաջին հերթին 20-30 հազար գաղթականություն տեղափոխել։

Հայաստանի Խորհրդային իշխանությունն էլ անգործ չեր։ Յեղիպտոսի բարեգործական ընկերության ներկայացուցիչ և ՀՈԿ-ի պատգամավոր Կարինյանի հետ ստորագրել ենք պայման այս գարնանը 3,000 վորբ յերեխաներ ընդունելու Հայաստան։ Մենք նրանց հող կտանք, կապելով նրանց հողային աշխատանքների հետ։

26.— Վոր Խորհրդային Հայաստանի վերաբերմունքը դեպի վորբատանություն կազմող ազգությունները շատ բարյացակամ է, դա վիճակամայն վողջունելի է. սակայն հետաքրքիր է իմանալ արդեմ է նույն բարյացակամ վերաբերմունքը դեպի վորբատանություն կազմող ազգությունները մեր հարևան հանրապետություններում։

— Յես յերեկ ասի, վոր գուցե Հայաստանում կան հայ պաշտոնյաներ, վորոնք վերևից են նայում թյուրքերին, յեզդիներին և այլն։ Գուցե նույնը նկատվի նաև վրաստանում, Ադրբեջանում կամ նույնիսկ Ռուսաստանում։ Սակայն մենք ասում ենք, վոր Խորհրդային իշխանությունը միջոցներ ունի կռվելու և կռվում է նման հակահեղափոխական յերևույթների դեմ։

27. Ինչու Ախալքալաքը չի միանում Խորհրդային Հայաստանին, յերբ նրա ազգաբնակչության մեծագույն տոկոսը կազմում են հայեր։

— Ախալքալաքի հայ գյուղացիությունը այդ չի պահանջել։

28. Թալինի կուսակցական հրահանգիչը թուլ և տալիս նախ-

կին դաշնակցական աշխատավոր դյուղացիներին կուլակ անվանել. ինչու և նա անտեղի վիրավորում նրանց։

— Ձես չգիտեմ թե Թալինի հրահանգիչը կուլակներին և ասել «կուլակ», թե աշխատավորներին։ Դա հետաքրքիր հարց է, յես կառուգեմ այդ փաստը և կպատասխանեմ «Խորհրդային Հայաստանում»։ (Բուռն ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.— Ըստ հյուքյան խոսողներ կան։ — Ձկան։ Հայտարարում եմ 5 րոպեյով ընդմիջում։ —

ՆԱԽԱՀԱՀԱՀ.—Նիստը վերսկսվում է։ Ընկ. Մռավյանի տեկուցման առթիվ ստացված է մի բանաձև, որը առաջարկվում է ժողովին ի հավանություն։

Պ. Տ-ՊՈՂՈՍՅԱՆ.—կարդում է բանաձևը։

ՆԱԽԱԳԱՀ.— Առարկություններ կան։ (Ձայներ՝ դա բանաձև չէ, շատ է յերկար)։

ԲԱԿՈՒՆՑ.—Բանաձևը 2 մասից է բաղկացած՝ ներկա մոմենտի քաղաքական նկարագիրը և ազգային խնդիրը։ Առաջի մասի վերաբերյալ ել մենք պիտի հայտնենք մեր վերաբերմունքը։ Ձես առաջարկումեմ այդ մասը հանձնել խմբագրական հանձնաժողովին, որ ամփոփի, հետո ներկայացնի։ Սրանից բացի բանաձևում չի ասված թե համագումարը ում կողմն է անցնում, ֆաշիստական Յեվրոպայի, թե հեղափոխական պրոլետարիատի։

Տ-ՊՈՂՈՍՅԱՆ.— Ձես ընդունում եմ ընկ. Բակունցի I ին առաջարկությունը. իսկ յերկրորդը վոչ. յուրաքանչյուր բանաձև բղխած կլինի տեկուցումից կամ դասախոսությունից, տալով վերոշ թեզիսները. այդպես ել արված է. իսկ ասել թե սա հոդված է և վոչ բանաձև, սխալ է։ Այս համագումարը չպիտի գոհանա կարճ բանաձևով։ Այստեղ պարզված են ներկա քաղաքական մոմենտի բոլոր դլխավոր կողմերը։ Ընդհանուր բառերով չպիտի գոհանալ։ Առաջարկում եմ ընդունել բանաձևը և ավելացնել ընկ. Բակունցի առաջարկը ճշտել մեր դիրքը դեպի բանաձևի թեզիսները։

ՀՐԱՉ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—Բանաձևը պետք է լինի ուժեղ և շոշափի միայն հիմնավոր կետերը. այս բանաձևը յերկար է։

ՆԱԽԱԳԱՀ.— Ստացված է և մի ուրիշ բանաձև, որի բովանդակությունը գրեթե նույնն է։

Տ-ՊՈՂՈՍՅԱՆ.—Համագումարի գործն է բանաձևը հանձնել խմբագրական հանձնաժողովին, սակայն սխալ է հասկանալ, որ

Խըր Թե բանաձևում ազգային խնդրի մասին խոսք կա։ Թյուրիմացության տեղի տվողը յերևի Ղարաբաղի կամ ազգային ավտոնոմիայի հարցն է. սա մի իլլյուստրացիա է և վոչ ազգային հարց, ցույց տալու համար Թե ինչ վիճակ է ապրում ներկա Խորհրդային ֆեդերացիան։ Ձես պնդում եմ, վոր այս 2 կետերն էլ պետք է լինեն բանաձևում, ավելացրած ընկ. Բակունցի տեսակետը, համագումարի վերաբերմունքի մասին։

ՆԱԽԱԳԱՀ.—*Քվեարկում եմ ընկ. Տեր-Պողոսյանի առաջարկը։ Ընդունվում է։*

Ընկերներ ինչպես գիտեք համագումարը, վորոշեց հեռագիր ուղարկել ընկ. Լենին ն, Տրոցկուն և Զինովևին. այդ հեռագիրը կազմած է. այժմ կարդում յենք ի հաստատություն։

ՊԵՏՐՈՍՅԱՆ.— *կարդում է հեռագիրը։ (Ծափեր)։*

ՏԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ.— *Առաջարկում եմ հեռագիրներն ուղարկել յուրաքանչյուրին առանձին-առանձին և մի քիչ փոփոխել իմաստը, ավելի համառոտել։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ.— *Ձես դեմ եմ այդ առաջարկին։ Մենք հեռագիրն ուղարկում ենք համաշխարհային հեղափոխության 3 ղեկավարներին, անհարժար է նրանց հեռագրել առանց վերագնահատելու մեր անցյալը. յերեք թողնվի վերագնահատման մասը և համաձայն կլինեմ առանձին-առանձին ուղարկելու։*

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— *Քանի վոր մեն սկզբում վորոշել ենք վոդջույնի հեռագիրը ուղարկել ընկ. ընկ. Լենինին, Տրոցկուն և Զինովևին, առայժմ միայն այդ հեռագիրն ուղարկենք, իսկ վերագնահատման մասը թողնենք Դաշնակցության վերագնահատումից հետո։*

ՀՐԱՉՅԱ.— *Յերկու տեսակ հեռագրի կարիք չկա. առաջարկում եմ հեռագիրը հետաձգել և տալ Դաշնակցության վերագնահատությունն անելուց հետո։*

ՆԱԽԱԳԱՀ.— *Քվեարկում եմ (յերեք) առաջարկներ։ — Անցնում է յերրորդ առաջարկը։*

ՆԱԽԱԳԱՀ.— *Նիստը հայտարարում եմ փակված։*

Հայ ժողովրդի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը ելույթ է ունենում Կարմիր բանակի զորամասերից մեկում

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Համագումարի 5-րդ նիստը կայացած նոյեմբերի 22-ի յերեկոյան ժամը 6 և կեսին Պետական թատրոնի դահլիճում նախագահությամբ ընկ. Գր. Բալասբեկյանի։

ՆԱԽԱԳԱՀ.—Համագումարի 5-րդ նիստը հայտարվում եմ բացված. խոսքը պատկանում է ընկ. Ս. Փոլյանին զեկուցելու Դաշնակցության վերագնահատման մասին։

ՁԱՅՆԵՐ.—Մնդրում ենք հեռացնել նրանց, ովքեր պատգամավորներ չեն։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, սրահում ներկա գտնվող վոչ պատգամավորներին խնդրում ենք թողնել դահլիճը (վոչ պատգամավորները հեռանում են դահլիճից)։

Ս. ՓՈԼՅԱՆ.—Ընկերներ, այս որը շատ նշանակալից է և նա մեր կյանքում հավանորեն պիտի դառնա նուիրքան պատմական, վորքան Դաշնակցության կազմակերպվելու որը։ Այսոր հավաքվել են վերագնահատելու Դաշնակցությունը և իրենց խոսքն ասելու նրանք, վորքան յերկար տարիներ անձնվերությամբ աշխատել են այդ կուսակցության մեջ։ Յեվ դա շատ բնական է. մենք ապրում ենք պատմական այնպիսի մի շրջան, յերբ իրական փաստ է դարձել սոցիալիստական հեղափոխությունը, վորի ընթացքով չափազանց արվել ու քաղաքացիական պատերազմի յենթարկվել դասակարգային պայքարն ու հարաբերությունները։ Դասակարգային կռվի պատմության այդ շրջանը պահանջում է բոլոր քաղաքական կուսակցություններից, անգամ անհատներից պարզելու իրենց վերաբերմունքը նոր կյանքի հանդեպ, վորոշելու թե ում հետ է ինքը—մարտնչող բանվորության ու գյուղացիության, թե բուրժուազիայի։ Մեր վերաբերմունքը պարզ է. մենք կարող ենք և պետք է լինենք սոցիալիստական հեղափոխության բանակի—մարդկությունը բոլոր տեսակի ճնշումներից ու հարստահարություններից ազատագրելու համար մարտնչող բանվոր-գյուղացիական զանգվածների հետ։ Բայց վորովհետև մենք պատկանել ենք մի կուսակցության, վորն ունեցել է վորոշ իդեալներ, պայ-

քարել և յերկար տարիներ, տվել և հակայական գոհեր, և վորից սակայն, մենք հրաժարվում ենք, ապա մեզ անհրաժեշտ և վերանայել մեր անցած ուղինները, լրջորեն քննադատել ու վերագնահատել Դաշնակցության գործունեությունը, վորպեսզի այն վորոշումը, վոր պիտի կայացնի համագումարը՝ լինի դիտակցական, համոզված, վոչ վոքի սրտում չթողնելով այլևս կասկածի ու կակծի և վոչ մի նշույլ։

Խնդիրը շատ լուրջ է, ընկերներ, և յես նպատակ չունեմ թեթև կերպով անցնել այս հարցի վրայով. յես ձեր առաջ կդնեմ պատմական փաստերը իմ ուժերի ներածին չափ կաշխատեմ պարզաբանել և հանել վորոշ յեզրակացություններ։

70-ական թվականների արշալույսին մեր յերկիրը ներկայացնում եր հետևյալ պատկերը,—մեր գյուղացիության աշխատավոր տարրերը դրված լինելով կիսաճորտային վիճակում թըպրտում եին իրենց խղճուկ ու աննշան հողակտորի վերա, վորն իր տված չնչին արդյունքով չեր կարողանում բավարարել գյուղացու ամենակենսական կարիքները անգամ. բացի իր անմիջական կարիքներից գյուղացին թե կառավարության թե կալվածատերերի պիտի վճարեր զանազան տեսակի հարկեր և տուրքեր։ Սակայն իր չնչին հողամասից այդ բոլոր պահանջները բավարարելու չափ արդյունք չստանալով գյուղացին հարկադրված եր դիմել կալվածատերերին կապալով հող՝ վերցնելու համար։ Անձնական աշխատանքով իր հողը չմշակող կալվածատերը ուրախությամբ ընդառաջում է գյուղացուն և ոգտվելով նրա անճարությունից իրրև կապալավարձ հաճախ վերցնում է նրանից բերքի կեսը։ Հայ աշխատավորը, սակավահողության պատճառով վարում եր մի չարքաշ ու կիսաքաղց գոյություն. ուժեղ կարիքը ձգում եր նրան կալվածատիրոջ ճիրանների մեջ։ Տնտեսական այդ հանգամանքը 70-ական թվականներին հայ իրականության մեջ դառնում է պատճառ մի խոշոր հասարակական յերևույթի, վոր մեծ մտահոգություն է պատճառում այն ժամանակվա մտավոր բանկության. դա գաղթն եր, պանդխտելը գյուղից դեպի քաղաք, ուր գյուղացին յերազում եր աշխատանք գտնել ու մի կերպ բարելավել իր թշվառ դրությունը։ Հակառակ այն ժամանակվա հայ մտավոր կոչվից մղվող ուժեղ հակագաղթական պրոպագանդայի— գաղթականությունը վոչ միայն չթուլացավ, այլ ընդհակառակը հետզհետե ծավալվեց, շնորհիվ այն հանգամանքի, վոր

այդ նույն ժամանակներն Անդրկովկաս մուտք գործած ու մեծ թափով զարգացող առևտրաարդյունաբերական կապիտալը սկսեց քայքայել գյուղական համայնքները և նահապետական ընտանիքը, (նահապետական սովորույթներն ու հասկացողությունները)։ Նույն կապիտալն էր քայքայում նաև քաղաքների համքարությունները ու մանր արհեստավորությունը։ Գաղթականությունը գլխավորապես դիմում են դեպի բանվորական կենտրոնները—Բաքու, Թիֆլիս, Բաթում, ուր նաֆթարդյունաբերությունը հսկայական քայլերով զարգանում էր, պահանջելով նույն չափերով բանվորական ուժ։

Անդրկովկասյան առևտրի ու արդյունաբերության հենց սկզբից հայերը գրավում են գերակշռող դիրքեր։ Որինակ, կազմելով Բաքվի ցեղական բնակչության 18% ը հայերը տիրում էին ամբողջ արդյունաբերության 45%-ին այն ժամանակ, յերբ արտասահմանյան կապիտալը Բաքվում ուներ 21.000.000 ռուբ. դրամագլուխ, միայն Մանթաշյանը ուներ 22 միլիոն. հայկական կապիտալը միասին վերցրած հավասարվում էր 32 միլիոնի։ Հայ բանվորների տոկոսային հարաբերությունը նույնպես բարձր էր՝ համեմատած մյուս ազգերի բանվորների թվի հետ։

Այսպիսով, ուրեմն, կապիտալի զարգացմամբ Թե գյուղացիությունը և Թե մանր արհեստավորությունը, չդիմանալով մրցման, կորցնում էին իրենց տնտեսական վերջի հենակետները և կենտրոնանալով քաղաքներում, կանգնում պրոլետարիզացիայի ճանապարհին։ Այս յերևույթը ժամանակակից մանր-բուրժուական ժողովրդականության կողմից հայտարարվեց ազգային աղետ։ Տնտեսական այս անորոշ վիճակից ուռեցված մի անորոշ հոգեկան կացություն էր ստրում ժողովուրդը-մանր բուրժուազիան, յերբ ժամանակակից առաջավոր մտավորականության կողմից հրապարակ նետվեց հայրենիք ունենալու գաղափարը, վորտեղ հայ գյուղացին ու արհեստավորը կը կարողանային պահպանել իրենց տնտեսությունը, չլինի ցրվի և այդպիսով կը պահպաներին ազգությունը։ Անհասարակ, ինքնամփոփ տնտեսության սիրահար մանր բուրժուական տարրերը հեշտությամբ ընդունեցին հայրենիք ունենալու այդ գաղափարը, վորովհետև դա բղխում էր նրանց տնտեսական վիճակից և յեռանդով փարեցին նրան. դա միակ յելքն էր համարվում ստեղծված դրությունից դուրս գալու համար։ Ժամանակակից ին-

տելլիգենցիայի կողմից այդ գաղափարը հայտարարվեց համաժողովրդական մի իդեալ, որը և հայրենասիրական գրականության բոլոր ձևերով աշխատում էին ժողովրդականացնել ու դարձնել յուրաքանչյուրի սեփականություն։ Այդ գաղափարի խորացման մեծապես նպաստում էր նաև Ռուս բռնակալության կողմից տարվող ռուսացման քաղաքականությունը։ Հարկավոր էր ուրեմն հայրենիք, «ազգը» փրկելու համար և գա պիտի լիներ Տաճկա-Հայաստանը։

Այսպես էր դրությունը Անդրկովկասում։ Ինչ էր ներկայացնում այդ ժամանակներում Տաճկա-Հայաստանը.—նկարագրած յերևույթները տեղի ունեին և այն տեղ. բացի դրանից Տաճկական ֆեոդալական դինվորատիրական բռնակալության լծի տակ հայ ժողովուրդը վոչ միայն շահագործվում էր ըստ ամենայնի, այլ և նրա ֆիզիքական գոյությունը շարունակ յենթակա էր վտանգի։ Հայը ռայա էր և նրան անպատիժ կողոպտում, թալանում, սպանում էին։ Այս դառն վիճակն էր, վոր տաճկահայերին ևս բերավ ու կանդնեցրեց քաղաքական մտորումների ճամբին—ժեռնելու կամ ազատվելու յերկընտրանքին։ Այս դաժան իրականությունից էլ կյանք առավ ապագայի նույնքան դաժան նշանաբանը վոր և դարձավ Դաշնակցության լոզունգը։ Մահ կամ ազատություն։ Այսպիսով թե անտեսապես, թե գաղափարապես հայրենիք ստեղծելու կարիքը հասունանում էր։ Հույսերն ավելի պայծառանում ու իրական կերպարանք և ստանում, յերբ պայթում է 1878 թվի ռուս-տաճկական պատերազմը։ Այդ ժամանակ Գրիգոր Արծրունին ամենակտրուկ կերպով դրեց Հայաստանի անկախության խնդիրը Ռուսաստանի ոգնության։ Հայերը կարծում էին, թե Ռուսաստանի աջակցությամբ կազատագրվի Տաճկահայաստանը և այդպիսով կը նվաճվի իրենց ամենակարած «հայրենիքը»։ Պատերազմը վերջանում է տալով հայերին Սանստեֆանոյի 16-րդ հոդվածը, վորով Տաճկաստանը պիտի բարենորոգումներ մտցներ հայերի բնակած վայրերում (Տաճկահայաստանում)։ Այդ հոդվածը մի քանի ամսից հետո փոխվում է Բերլինի դաշնագրության 61-րդ հոդվածին. բովանդակությունը դրնել նույնն է մնում, այն տարբերությամբ միայն, վոր Տաճկաստանում ունեցած ազդեցությունը Ռուսաստանից անցնում է Յեվրոպական 6 մեծ պետությունների։ Սա դիպլոմատիական առաջին և շատ բնորոշ խաղն եր հայկական հարցի շուրջը.

Անգլիան Ռուսաստանի մշտական թշնամին լինելով վախենում եր, որ վերջինս Հայաստանի վրայով կը գրավի դեպի իր գազութները տանող ճանապարհները՝ Տաճկահայաստանի բարենորոգման հարցը հանում է նրա ազդեցութիւնից և յենթարկում 6 պետութիւններին։ Այդ թվականներին Ռուսաստանի անմիջական ոգնութեամբ ազատվում է Բոլգարիան, որի որինակը հայերին ավելի ևս խրախուսում է. լիբերալ շրջանները հրաշունչ հոդվածներով, բանաստեղծութիւններով ու վեպերով վառում էին ժողովրդի յերևակայութիւնը հայրենասեր քարոզներով։ Գր. Արծրունին, Րաֆֆին, Գամառ Քաթիպան հսկայական դեր են կատարել այդ գործում։ Ցերը կան տնտեսական հիմնունքներ, կա հասունացած գաղափար, անհրաժեշտորեն առաջ են գալիս նաև կազմակերպութիւններ, որ խորհում են դրանց իրագործելու մասին։ Հայերի մեջ նույնպես յերեվան են գալիս քաղաքական կուսակցութիւններ, իրենց նպատակ դնելով Տաճկահայերի ազատագրութեան խնդիրը։ Ստեղծվում են Արմենական, ապա Հնչակյան և 90-ական թվականներից Դաշնակցութիւնը, որ ամենից նշանավոր կազմակերպչական գործն է կատարում հայ իրականութեան մեջ։

Նրա մասին էլ պետք է լինի մեր խոսքը այսոր։

Դաշնակցութիւնը հրապարակ յեկավ «Հայ հեղափոխականների Դաշնակցութիւն» անունով, որ սկզբում շատ հավեստ պահանջներ եր առաջադրում—Հայաստանի համար մի ընդհանուր նահանգապետ, որ նշանակում է Սուլթանը մեծ պետութիւնների համաձայնութեամբ, նահանգապետին կից հայերից և թուրքերից վարչական խորհուրդ, հայկական միլիցիայի, յեկամուտները գործադրել յերկրի համար և այլն։

Այս պահանջներն իրագործելու համար Դաշնակցութիւնն ընդունում է ահաբեկումների և ժողովրդական ապստամբութիւնների մեթոդը։ Այդ ապստամբութիւնները և ահաբեկումները մի կողմից նպատակ ունեին հեղափոխական-ռազմիկ վոգի ներշնչել ժողովրդին. մյուս կողմից էլ, որ գլխավորն է, պիտի միշտ վառ պահեին հայկական հարցը միջազգային դիպլոմատիական սեղանի վրա, գրավելով այդպիսով մեծ պետութիւնների ուշադրութիւնը և առաջ բերեին նրանց միջամտութիւնը հոգուտ հայկական դատի։

Այդ տաքտիկայի հիմքում դրված եր Թյուրքիայի, իբրև պետութեան անհուսալիորեն հոռի լինելը, նրա մոտակա կործանումը

իրեն հիվանդ մարդու, եվրոպական դիպլոմատիայի շահագրգռածությանը Թյուրքիայի կործանման մեջ և վերջապես քաղաքակիրթ պետությունների «մարդասիրական» մղումները դեպի մի ժողովուրդ, որ կռվում է ազատության համար։

Այս նպատակներով Դաշնակցությունն աշխատում է գինել ժողովուրդը, կազմակերպում է գինված խմբեր և ուղարկում յերկիր։

Իր հիմնադրման առաջին տարին Դաշնակցությունը յերկիր է ճանապարհում իր առաջին խումբը Կուկունյանի գլխավորությամբ. խումբը սակայն յերկիր չի հասնում, ռուսական իշխանության կողմից ձերբակալվում է սահմանի վրա և դատվում, որպես ավազակային մի խումբ։ Այս դեպքը հենց առաջին իսկ որից պարզեց ռուս բռնակալության վերաբերմունքը դեպի հայ-ազատագրական շարժումը։ Պետք եր հանել հայ ժողովրդին յեղերակացության, ռուսական բռնակալությունը ինչքան էլ որ դեմ լիներ Ցարիզմին, այնուամենայնիվ նա չեր կարող հանդուրժել որևէ ազատագրական – հեղափոխական շարժում իր սահմաններին շատ մոտ յերկրաժամում. մանավանդ, որ այդ շարժումը սկսել եր մի ժողովուրդ, որի մի հատվածը ռուսահպատակներ նա յերկյուղ եր կրում այդ շարժման ազդեցությից. Կովկասի նկատմամբ։

Կուկունյանը իր ընկերների հետ դատապարտվելով տաժանակիր աշխատանքների աքսորվում է Սիբիր. արշավանքները սակայն կանգ չեն առնում։ Դաշնակցությունը նորանոր խմբեր և մտցնում յերկիր, որոնք կռվի յեն բռնվում քրդերի ու կառավարական զորքերի հետ, ապստամբություններ են կազմակերպում, ահաբեկումներ են կատարում և այլն։ Այդ կռիվները ինչպես ասվեց վերեվ, նպատակ ունեյին եվրոպական դիպլոմատիայի միջամտությունն առաջ բերելու, այդ պատճառով էլ նրանք միշտ էլ կրում եյին ցուցարարական բնույթ, յերբեք չխոխվելով հեղափոխական հարատեվ կռվի, թեկուզ հենց Թրքա-Հայաստանյան մասշտաբով։

Դաշնակցության այդ տեսակի գործերից նշանավոր և վանի ինքնապաշտպանությունը։ 1896 թ. սուլթանը այդտեղ էլ ուզում իր ջարդը կազմակերպել, սակայն հանդիպում է դիմադրության. Արմենական, Հնչակյան և դաշնակցական ուժերը միանալով դաշնակցական Պետրոսի գլխավորությամբ 7 որ հերոսաբար կռվելուց հետո հրազատոնների պահանջով քաղաքը, նրանց միանում և ժող

1000 վանեցի, ճանապարհին նրանք շրջապատվելով քրդերից (Մազրիկ ցեղից) բոլորն էլ կոտորվում են։ Մյուս նշանավոր գործը Բանկ-Ոտտոմանի գրավումն եր, որ նպատակ ուներ վերջապես լուծել դիպլոմատիայի համառ լուռթյունը. դիպլոմատիան լինչպես դիտեք չխոսեց, վճռական միջամտություն տեղի չունեցավ. սուլթանը այստեղ էլ ոգտվեց հանգամանքից և սարքեց նոր կոտորած։ Վերջապես նշանավոր է նաև Ջանասորի արշավանքը. այստեղ ռազմադիտական հաջողությամբ դաշնակցական խմբերը պաշարում են քրդական Մազրիկ ցեղը և տեղի է ունենում այն, ինչ ասում է աշուղը. «մի ժամվա մեջ Մազրիկ ցեղը ջնջվեցավ»։

Այստեղ Դաշնակցությունը քե Պեռայի ու ընկերների վրեժն եր լուծում, թե պատժի վախ եր ներշնչում քրդական աշիրեթներին, թե ապահովում եր գենքի փոխադրման իր ճանապարհը և թե կատարում եր խոշոր ցույց յեվրոպական դիպլոմատիայի առաջ։

Սակայն այդ բոլոր ցուցերը, գոնեն ու արյունը. առաջ չբերին ակնկալվող միջամտություն. սուլթանը ոգտվելով դիպլոմատիական վճռականությունից ու վոխադարձ մրցակցությունից, առիթը բաց չեր թողնում և ամեն մի շարժումից ու կռվից հետո կատարում եր հայերին բնաջնջելու հրեշային ծրագիրը։ Այդ ծրագիրը շատ պարզ եր և սուլթանի բռնակալությունը վոճրագործի սառնասրտությամբ 1894—1896 թ. կոտորեց 300,000 հայ, մտածելով այդպիսով լուծել հայկական հարցը և ազատել Տաճկաստանը յեվրոպական միջամտության վտանգից։

Այդ մեծ ու չտեսնված վոճրագործության ժամանակ հենց յեվրոպական նավերը կանգնած էին Բոսֆորում և հայկական հուսահատ ազաչանքներին նրանք պատասխանեցին, վոր մեր նավերը Տավրոսի լեռներում լողալ չեն կարող։ Դաշնակցությունը սակայն չհանեց զրանից գոնե համապատասխան յեզրակացություն ու շարունակեց իր տաքտիկան, վոր բղխելով նրա իդեալիստական պատմահայեցողությունից, չեր հիմնավորված իրական ու գիտական տվյալներով, չեր համապատասխանում շրջապատող պայմաններին և շարունակ զարկվելով իրականության, ջարդվում եր, դժբախտաբար իր հետ չարդելով նաև հայ ժողովրդի խոշոր մասը։

Գործելակերպի մեջ կար մի մեծ սխալ, վորը մինչև վերջն էլ Դաշնակցությունը չկարողացավ հասկանալ և ուղղել։ Աբդուլհամիդ բազմաթիվ փաստերից հետո անգամ Դաշնակցությունը չկարողա-

ցավ ըմբռնել, վոր յեվրոպական իմպերալիստական պետությունները առանց իրական շահեր ունենալու չեն ծախսի մի ֆունտ նավթ նույնիսկ վորև ե փոքր ժողովրդի գեղեցիկ աչքերի համար։ Լինդհակառակը, նրանք ամեն րոպե պատրաստ են կոխկռտել ամեն մի ժողովուրդ, յեթե դա պահանջում ե նրանց գոհհիկ, նյութական շահը։

Նա չհասկացավ, վոր հենց այդ շահերի հակամարտությունն ե Թյուրքիայի շուրջը, վորը արդելք ե լինում միջամտության հոգուտ հայկական դատի և չմրոնելով այս շատ պարզ ճշմարտությունը, նա տարիներ անվերջ շարունակեց իր «հայդուկային» քաղաքականությունը, վորը միշտ գերագնահատելով սեփական ուժերը, հաշվի չառնելով հակառակորդի հզորությունը հայ ժողովրդի նկատմամբ աչքաթող անելով իրական պայմանները,—դարձավ ավանտյուրանների մի ամբողջ շարան, դառնալով միաժամանակ ճակատագրական հայկական դատի և Դաշնակցության համար։

Տաճկահայ դատի համար ձեռնտակար ե յեղել նաև Կովկասում նստած, յերկրում հեղափոխական շարժումներ առաջ բերելը. ձեռնտակար ե յեղել մանավանդ այն, վոր ռուսահայերը հենց սկզբից տաճկահայերի ազատագրության գործը վերցնելով իրենց խնամակալության ներքո, թուլացրին նրանց ինքնագործունեության թափը։

Այսպիսով ուրեմն Դաշնակցությունը չգտավ այն միջոցը, վոր հայկական հարցը հաներ այն փակուղուց, ուր նա ժղված եր իրական հանգամանքներով։

Շատերը ձեզնից ցավ կզգան գուցե, յեթե յես ասեմ, վոր Դաշնակցությունը հայ ժանր-բուրժուազիայի ազգային-քաղաքական ժողովուրդների արտահայտիչն ու իրագործիչն ե յեղել գուցե անգիտակցաբար, բայց այդ այդպես ե։

Դաշնակցությունը իր Տաճկաստանյան գործունեության ընթացքում չափազանց ակտիվ լինելով այնտեղ, բոլորովին պասսիվ եր Ռուսաստանում, չնայած, վոր այստեղ հալածանքը պակաս չափեր չուներ։

Լինելով գուտ ազգային կուսակցություն և իր մեջ ընդունելով ամեն դասակարգի ժարդիկ, Դաշնակցությունը իր հայրենասիրական քարոզներով մեծ ձեռնտակ ե հասցրել հայ աշխատավոր մասաներին, մթացնելով նրանց դասակարգային գիտակցությունը և մեկուսացնելով նրանց հարևան ազգերի աշխատավոր դանգվածներից։

1903 թ. Գոլիցինյան բռնությունների և հայտկեր քաղաքականության հետևանքով Դաշնակցությունն իր գործունեությունը տարածում և կովկասում ևս, ուր նա արտահայտվում է յեկեղեցական կալվածների գրավման շուրջը կազմակերպած հակակառավարական ցույցերով և մի շարք ահաբեկումներով։

Այդ թվականներին հեղափոխական շարժումն սկսել էր ծավալվել Ռուսաստանում. ռուս-յապոնական պատերազմի ընթացքում ցարի բռնապետության կրած պարտությունները ավելի ևս զարկ տվին հեղափոխական շարժման, որը պայթեց 1905 թվին, առաջ բերելով սոցիալ-քաղաքական խոշոր խնդիրներ։

Հայ բանվորությունն այդ շրջանում արդեն դուրս էր յեկել իր սաղմային վիճակից և հանդես էր գալիս իբրև ուրույն դասակարգ, որ ուներ ուրույն պահանջներ թե բուրժուազիայից և թե կուսակցությունից։

Իսկ խոշոր բուրժուազիան, որ մինչև այդ զուտ ազգային մի տարր էր, որ վոչինչ ընդհանուր չուներ «ազգի» հետ, նեղված մի կողմից արտասահմանյան կապիտալի մրցումից, իսկ մյուս կողմից յերկյուղ կրելով բանվորության ըմբոստացումներից, մոտենում է Դաշնակցության, մասնակցելով «ազգային գործերին»։

Ռուսաստանի հեղափոխական շարժումները չէին կարող ազդեցություն չթողնել հայ աշխատավորության վրա, որն և կրտժուկ պահանջ է դնում կուսակցության առաջ դասակարգային իմաստով։

Կուսակցությունը փլուզումից փրկելու և մասսաները ձեռքից չթողնելու համար, Դաշնակցությունը հարկադրված էր իրեն հայտարարել սոցիալիստական կուսակցություն, մի վարկյան անգամ չհեղվելով իր հիմնական ազգային նպատակներից։

Լինելով հարկադրված դառնալ սոցիալիստական և տուրք տալ Ռուսաստանում աճող հեղափոխության, Դաշնակցությունն ընդունում է եսերական ծրագիր, որը չլինելով զուտ բանվորական, չէր խորթանում կուսակցության մեջ յեղած բուրժուական տարրերին, իսկ որ այդ տարրերը կային, վկայում է ինքը Դարբինյանը, յերբ ասում է թե գաղութահայ բուրժուազիան միշտ էլ մասնակցություն է ունեցել Դաշնակցության մեջ. բնական է, որ այդ տարրը չէր կարող թույլ տալ, որ կուսակցությունը հետապնդի զուտ բանվորական ծրագիրներ։

Ասացինք, որ Դաշնակցությունը «սոցիալիստական» դառնալով, չմոռաց իր հիմնական ազգային նպատակը, չհրաժարվեց ազգային կուսակցություն լինելուց, այդ իսկ պատճառով նրա սոցիալական կազմն իրենից ներկայացնում էր մի խայտաբղետ դանդված,—ատրուճը, խանութպան, բանվոր, գյուղացի, բուրժուա, կալվածատեր, չինովնիկ—բոլորը Դաշնակցության անդամներ էլին և հարատած անդամներ։

Սոցիալիստական գործունեության նախադիծն ուրեմն հարցը չլուծեց, որովհետև կուսակցությունը այնպես ձևաց նախկինը. այդ պատճառով սկսվեցին բողոքներ ու քննադատություն. 1905—06 թվերին կուսակցության ձախ թևին հարող մի շարք գործիչներ պահանջ դրին լինել կամ սոցիալիստական կամ ազգային. սակայն բավարարություն չգտնելով հեռացան կուսակցությունից։

1905 թվին սկսվում են հայ-բրքական կոտորածները, որ ռուսական ցարիզմի նյութած դավադրություններ էր, Ռուսաստանում բռնկված հեղափոխության դեմ։ Դաշնակցությունն այս ընդհարումների ժամանակ ստիպված էր զբաղվելու ինքնապաշտպանության գործով։ Սակայն ինչու պայթեց հայ-բրքական կոտորածը։ Այն շրջաններում, ուր աշխատավորությունը տակավին չունի դասակարգային գիտակցություն՝ բուրժուազիան նրան սիրում և գաղափարապես և ծառաբեցնում իր շահերին։ Աշխատավորին դասախարակում են այն վերդ, թե խանի, թավատի, մելիքի կամ վաճառականի շահն իր շահն է։ Այդպիսով հայ ու թուրք սիրող դասակարգերի շահը դառնում է նույն ազդությունները պահանջող աշխատավորության շահ։ Կռվեցնելով հային ու թուրքին ցարիզմն իր շահն ուներ այդ կռվից. այդպիսով նա կովկասյան աշխատավորությունը կտրում էր ռուսական ըմբոստ ցած աշխատավորությունից, վորով և թուլացնում էր հեղափոխության ուժը։ Ղեկավարելով այդ կռիվը, Դաշնակցությունը գիտակցաբար թե անգիտակցաբար կատարում է այն, ինչ պահանջում էր հակահեղափոխության շահը։

Ցերը պայթում է 1914 թվի իմպերիալիստական պատերազմը, Դաշնակցությունը հավատարիմ իր ազգային նյության, բոլորովին մոռանալով իր «սոցիալիստականությունը», առանց յերկար մտածելու հետևանքների մասին, առանց հաշվի առնելու օրիենտիվ հանգամանքները, խելագար թափով նետվում է գիշատիչ իմպերիալիստ-

ների դիրքը և մասնակցում պատերազմին, մորթես կողմ։ Հրապուրված ցարի սատրապ Վորոնցով-Դաշկովի խորամանկ ու խաբուսիկ խոստումներից, Դաշնակցությունը դատապարտելի կարճամտությամբ իր վերա վերցրեց կամավորական շարժումների ղեկավարությունը, առիթ հանդիսանալով դրանով, որ սուլթանն իրագործե իր վաղեմի ցանկությունը... և տաճկա-Հայաստանը փոխարկվեց ավերի ու մոխրակույտերի, ժողովուրդը գլխովին բնաջ ջվեց...

Այստեղ Դաշնակցությունը պարզորեն գործիք և դառնում ռուսական իմպերիալիզմի ձեռքին և նպաստում նրա աշխարհակալական ձգտումներին։ Ռուսական իմպերիալիզմի ավանդական նպատակն է յեղել ճանապարհ հարթել դեպի Միջերկրական ծով. նա ընթանում եր դեպի այդ նպատակի իրագործումը. հայ ժողովրդի գործակցությունը պետք եր նրան թերևս և ռուս բռնակալությունը հանձին Դաշնակցության լիապես ոգտագործեց այդ գործակցությունը, մինչև այն ժամանակ, յերբ նրա զորքերը հաղթանակորեն մտնում եյին Յերզնկա. այնուհետև Նա ինչպես միշտ մոռանում է իր խոստումները. փոխանակ Հայաստանը ազատելու, նա հրատարակում է մի օրենք, որով անհնարին է դարձնում հողերի վերադարձը իրենց նախկին տերերին, որոնք գաղթական եյին դարձել պատերազմի շնորհիվ. այլև մշակում է մի նախագիծ, որով Հայաստանում սիրտի հատատումներ Յեվրատյան կազակություն։

Այս բոլորը պարզորեն կարելի եր նախատեսել, յերևելով հենց Դաշնակցության պատմությունից։ Բայց Դաշնակցության ղեկավարների համար պատմության խնամատարություն գոյություն չունի։

Դաշնակցության հանցանքը այստեղ հրկնապատիկ է, քանի որ նա կամավորական շարժումները ղեկավարեց հակառակ ամենայն հայ ժողովրդի կամքի, հակառակ իր իսկ ամենաբարձր ժողովի (Երզրումի, 1914 թ.) վորոշման, հակառակ պատմական ու իրական հանգամանքների։

Պարզ է, որ Դաշնակցության այս ակտը չեր պարունակում ոչինչ հեղափոխական, ոչինչ սոցիալիստական. դա մի խելահեղ ավանտյուրա եր, մի հակաժողովրդական և յերբեք կուզեք ազգադավ մի գործ։

Ավելորդ է այստեղ խոսել այն դավաճանության մասին, որ II Ինտերնացիոնալը կատարեց սոցիալիզմի հանդեպ։ 1912 թվին Բազել քաղաքում բոլոր սոցիալիստական կուսակցությունները, վո-

?!

րոնք մտնում էին II Ինտերնացիոնալի մեջ, ի թիվս վորոնց և Դաշնակցությունը, վորոշում են պատերազմ ծագելու դեպքում ամեն միջոցներով խանգարել այն և ոգտվելով հանգամանքից մասսաները դուրս բերել իրենց կառավարությունների դեմ։ Ինչպես գիտեք, այդ վորոշումը մնաց վորոշում և միայն կոմունիստներն էին հանձին Լիբկնեխտի և Լենինի, վոր անշեղորեն պահանջում էին այդ վորոշման կիրառումը։

Դաշնակցությունն այդ վորոշումը մոռացողներից եր և նա այնքան հեռուն գնաց, վոր նույնիսկ իրրև կուսակցություն ակտիվ մասնակցեց իմպերիալիստական պատերազմին։

Դաշնակցության գործունեությունը թե Տաճկաստանում և թե Կովկասում մի խոշոր մինուս և յեղել հայ աշխատավորության համար դասակարգային պայքարի տեսակետից։ Լինելով ազգային ու մանր բուրժուական կուսակցություն, Դաշնակցության բանվորական ու արհեստակցական քաղաքականության հիմքում նույնպես դրված և յեղել միշտ ազգային դատի պաշտպանության պահանջը, վորպես հարց հարցոց։ Այս հանգամանքը մթագնել և հայ աշխատավորության դասակարգային գիտակցությունը։ Ազգասիրական հարատև պրոպագանդայով Դաշնակցությունը կդգիացրել և հայ աշխատավորին հարևան ազգերին պատկանող աշխատավորությունից, խնամքով միշտ ել հետ և կասեցրել հայ աշխատավորին դասակարգային կռվի գաղափարից։ Հասկանալի հանգամանք և սա ազգային մանր-բուրժուական կուսակցության համար։ Դաշնակցության արհեստակցական միությունները նույնպես կազմակերպվում էին ազգային հիմունքներով—դաշնակցականորեն. այնքան եր նեղ ու սահմանափակ Դաշնակցության ազգայնականությունը, վոր անգամ բանվորական խոշոր տոնակատարությունների ժամանակ, յերբ քաղաքի վողջ բանվորությունը հավաքվում եր միտինգի, վորտեղ հանդես էին գալիս բոլոր կուսակցությունները, Դաշնակցությունն այդ նույն վայրերում իրեն համար մի հատուկ ամբիոն եր դնում և կազմում առանձին միտինգ։

Սա շատ բնորոշ և Դաշնակցության համար։ Սա պարզ ցույց և տալիս, թե վորքան վախենում եր Դաշնակցությունը հայ և մյուս ազգերի բանվորության մեջացումից. այդ դեպքում հայ մասսաները դասակարգային գիտակցության գալով կկքեին Դաշնակցությունը, վորից կտուժեր հայկական դատը. պետք եր ուրեմն նրան պա-

հել ազգային շրջանակների և հայրենասիրական ոգևորման թափեցուցիչ ազդեցության տակ։ Դաշնակցությունն այդ գործը յերկար տարիներ կատարել է հաջողությամբ և հայ աշխատավորությունը դրա համար այսոր խորին վրդովմունքով վարձատրում է նրան, համարելով Դաշնակցությունը հակաաշխատավորական կուսակցություն։ Ցեվ հայ աշխատավորը իրավացի է։

Դաշնակցության սոցիալիզմի ու սոցիալիստականության մենք բախտ կունենանք ծանոթանալու մի քիչ հետո։

Ինչպես գիտեք 1917 թվի Ռուսաստանի պրոլետարական հեղափոխությունից հետո, նա բոլորովին պարզ կերպով անցավ հակառակ բանակը։ Վորպես մանր բուժուական ազգային կուսակցություն, նա այդ հեղափոխության մեջ իր գոյության ժխտումը տեսնելով, կտրականապես հրաժարվեց նրանից և գործակցեց Անդրկովկասյան մյուս հակահեղափոխական ուժերին, վորոնք միասին անջատեցին Կովկասյան աշխատավորությունը հեղափոխական Ռուսաստանից։

Այստեղից հենց պարզ է, վոր Դաշնակցության սոցիալիստականությունը բավականին...

ՁԱՅՆԵՐ.—Կասկածելի եր։

Ս. ՖՈԼՅԱՆ.—Այո ընկերներ, կասկածելի յեր և այդ պատճառով նա չմիացավ պրոլետարական հեղափոխության։ Նույն ձևով վարվեցին մենշևիկներն ու Մուսավաթը։ Այդ յերեք կուսակցությունը միասին անջատելով Կովկասը Ռուսաստանից կազմեցին Կովկասյան Սեյմը։ Բոլորիդ հիշողության մեջ թարմ է Սեյմի գործունեությունը։ Ազգային հակադիր շահերն ու պայքարը, վոր տեղի ուներ Սեյմում չեր կարող թույլ տալ նրան անցնել որդանական աշխատանքի, այդպես էլ յեղավ։ Հիշված յերեք կուսակցություններից յուրաքանչյուրին ուներ նվաճողական մեծամեծ գաղտնիներ ի հաշիվ մյուսների և բնական է, վոր այդպիսի կառավարությունը հարատև չեր կարող ու պիտի պայթեր։

Սեյմին դուրընթաց Բագվում բանվորությունը իշխանությունն իր ձեռքն առնելով հաստատում է Խորհրդային կառավարություն և չճանաչելով Սեյմը գալիս է միանալ բանվորա-գյուղացիական Ռուսաստանին։

Արժե մի վոքը կանգ առնել այդ դեպքերի վրա։ Բագվի Խորհրդային իշխանության հետ քիչ ժամանակ դնացին եսերները, ես-

դեկներն ու Դաշնակցությունը։ Սակայն նրանք շուտով փոխեցին իրենց ֆրոնտը և սկսեցին բանակցել անգլիացիների հետ, տաճիկներից քաղաքը փրկելու համար։ Բադուն ութ ամիս կառավարելուց հետո, Խորհրդային իշխանությունը չհամաձայնելով դաշնակցել իմպերիալիստների հետ, հրաժարվեց։ Հակախորհրդային կուսակցությունները՝ Դաշնակցությունն, եսերներն և մենշևիկներն իրենց ձեռքն առնելով քաղաքի պաշտպանությունը կազմում են մի կառավարություն, բացվի Խորհուրդ. Գործկոմի և Ցենտրոկասպիի դիկտատուրան, վոր անհապաղ կապեր է հաստատում անգլիական իմպերիալիստների հետ։

Մինչ այդ, կարմիր բանակը, վորի խոշոր մասը գտնվում էր Դաշնակցության ազդեցության տակ, արդեն սկսել էր բարոյալքվել հույս դնելով անգլիացիների մոտալուտ ողնության վրա, նա չէր կռվում, փախչում էր ճակատից, վորով թուլանում էր բանակը և կորցնում մարտունակությունը. դրա հետևանքը յեղավ նահանջը մինչև Բադու։

Քաղաքը պաշարված էր տաճիկներից, վորոնց հրավիրում և ամեն աջակցություն ցույց էր տալիս տեղական թուրքությունը։ Քաղաքի անկումը պարզ էր. այդ միջոցին թուրքական բանակից առաջարկ է ժամնում Ազգային բյուրոն, վորը ղեկավարում էր Դաշնակցությունը,—վորոշ պայմաններով հանձնել քաղաքը։ Առանց քննության առնելու, իր կենտ. կոմիտեյում Դաշնակցությունը տապալում և այդ առաջարկը։ Այստեղ ևս Դաշնակցությունը յերևան բերեց իր պատժական ավանտյուրիզմը, շրջապատող ուժերի ու պայմանների հաշվի չառնելը, սեփական ուժերի գերագնահատումը, վոր միշտ էլ ուղեկցվել է ազգային հակայական յեռանդի անխնա վատնումով։

Ինչ ուժերի վրա էր հույս դնում Դաշնակցությունը. անգլիացիները չկային, զրեթե բանակը լքվել ու կորցրել էր կռվելու ընդունակությունը։ Տեղական թրքությունը աջակցում էր քաղաքի անկման և այս պայմաններում անգամ Դաշնակցությունը քաղաքադիտական ընդունակության մի հյուլե անգամ չի հայտնաբերում, գոնե բանակցությունների միջոցով մեղմել հավանական աղետը։ Քաղաքն ընկավ. Դաշնակցությունը փախավ քաղաքից և ապաստանեց Պարսկաստանում։ Հետևանքը յեղավ այն դժոխային սպանդանոցը, վորի անունն է Բադվի կոտորած. 30.000 հայ այդ օրերում գոհ գնաց

այդտեղ։ Այդպես են պատկվել Դաշնակցության բոլոր գործերը նրա պատմության ամբողջ ընթացքում։

Յեթե Դաշնակցությունը հրաժարվեր Անգլիայի խոստումներից, անկեղծորեն փարած միայն Սորբրդային իշխանության ու միասին պաշտպանելին քաղաքը՝ հավիվ թե հետևանքները լիներին այն, ինչ վոր յեղավ։ Անգլիացիները վոչ մի իրական ույժ չեյին ներկայացնում, այլ մի քանի հարյուր զինվոր զանազան ժամանակներում քաղաք մտցնելով միայն խաբում ու հուսալքում եյին բանակը. դա շատ պարզ եր և Դաշնակցության համար, բայց նա հեռավոր հույսը գերադասեց իրական ույժից։ Դա քաղաքական մանկամտություն եր, վոր Դաշնակցության առանձնահատկությունն է կազմում։

Յես ձեզ ասացի, վոր Սեյմը հենց իրեն կազմող տարրերի հակադիր շահերից անխուսափելիորեն պիտի պայթեր և նա պայթեց, Անդրկովկասը բաժանելով 3 ազգային հանրապետությունների։ Այդպիսով ավելի ևս անգամահատվեց կովկասյան աշխատավորության որգանիզմը, ավելի ևս խորացավ ազգամիջյան առեղծվածությունն ու հակամարտությունը։

Վերջապես իրականացավ Դաշնակցության իդեալը — ազատ Հայաստանը, վորը սակայն ըստ Ահարոնյանի բնորոշման լայն «ներդեմոկրատիայի համար, շատ նեղ կենդանի ժողովրդի համար»։

Ինչպես եր կառավարում սակայն Դաշնակցությունն այդ փոքրիկ յերկիրը։ Իր յեռամյա տիրապետության ընթացքում Դաշնակցությունը վորպես պետական կուսակցություն, յերևան բերեց նեղ ազգային կուսակցության ամենահոռի կողմերը։ Ջնայած իր «սոցիալիստականության» ազգային հարցերն ու սահմանային վեճերը նա վճռում եր այնպես, ինչպես այդ անում եր Թուրք ֆեոդալների ու աղալարների կուսակցությունը «Մուսաֆաթը։ Դաշնակցությունը կիրառում եր հայտնի «նոսրացումը», Մուսաֆաթը նույնքան հայտնի «քյասարատը», վոր նշանակում է ժողովրդների յեղբայրասպան կտտրած, շեն ու ծաղկած շրջանների վայրագ ավերում, թալան, գաղթ, բարբարոսության։ Դաշնակց ությյան ազգային քաղաքականության կործանարարության մասին վկայում է մի փաստ, վորը վորպես մի սև տախտակ պիտի շարունակ ցցվի Դաշնակցության դաժբարանի վրա։ Դա Ղարաբաղի դժբախտ ժողովրդին հասցրած այն աոսկալի հարվածն է, վորը թևև չի տարբեր-

վում Դաշնակցության կողմից հայ ժողովրդին հասցրած մյուս հարվածներից, բայց վորպես ամենաթարմն ու ամենաքաոսնելին, պիտի միշտ հաշվի վորպես Դաշնակցության ավանտյուրիզմի չափանիշ։

Այն պայմաններում և այն ձևով, յերբ Դաշնակցությունը իր վոճրաժիտ ու անբարոտավան ագենտների ձեռքով սկսեց այդ ապստամբությունը, չեր սկսի և վոչ մի խելագար։

Մուսավաթը սուլթանի հարատատ պատճենն եր և ատիթ եր վորոնում հայկական այդ առողջ մնացած կենտրոնը մեջտեղից վերացնելու։ Ատիթը տալիս են Դաշնակցության մի քանի ագենտները, վորոնք Շուշում ատրճանակներից արձակելով սկսում են ապստամբություն, առանց գոնե ժողովրդին գգուշացնելու։ Նահանգապետ Սուլթանովը վառում է քաղաքը, թալանի ու սրածության մատնելով հայ բնակչության։ Այսպես կործանվում է Շուշին, կուլտուրական այդ մեծ կենտրոնը իր քառասուն դյուղերով։ Ցեթե մի ամսով ել ուշանար Մորդդային իշխանությունը—վոչ Ղարաբաղից կմնար միայն դառն հիշողություն, ինչպիսի հիշողություն մնացել է այժմ տարաբախտ Տաճկահայաստանից։

Յեվ Դաշնակցությունը այնքան հեղափոխական քաջություն չունեցավ իր մեջ, վոր արդար պատժի յենթարկեր մի ամբողջ դավաճան իրենց վիճասիրական տենչանքներին զոհ բերող անպատիվ հերոսներին։ Ընդհակառակը նրանց վիճավորապես ճանապարհեց Ամերիկա, վորոնք և կազմում են այժմ Դաշնակցության պարծանքը։

Թող դրանք լինեն Դաշնակցության պարծանքը, չենք նախանձում։

Կովկասյան հանրապետությունների որոք շնորհիվ նրանց շուվեն ու ապրպանավոր քաղաքականության, վորի յերկիրը դարձել եր ազգամիջյան գարհուրելի ատելության ու անսպառ կռիվների մի թատերաբեմ։ Ժողովուրդներն ապրում եյին ծանր կոշմարի տակ։

Մանավորապես Հայաստանը վորբալի վիճակի մեջ եր։ Դա մի յերկիր եր, ուր ժողովուրդը «չորս կողմից շրջապատված թշնամական ուժերով» տապակվում եր իր յուղի մեջ. այսպես եյին ասում հենց իրենք դաշնակցականները։ Շարունակական պատերազմների հետևանքով վորջ յերկիրը վեր եր ածվել մի պինվորական լագերի։ Ջկար այդ յերկրում և վոչ մի շինարար աշխատանք, մոռացված եր գիրքն ու դրականությունը, ժողովուրդը դալարում

եր սովի ճիրաններում, դաղթականները խմբերով մեռնում էին փողոցներում ու պարտեզների դռների առաջ, ժողովուրդը զրկված եր խաղաղ կյանքի վորևե հառանկարից, կուլտուրական զարգացման ամեն մի հնարավորություններից։ Հայաստանի ժողովրդի առաջ առանց ազգի խարության դրված եր մերկ ֆիզիքական գոյության խնդիրը։

Տեղն է այստեղ հիշել մատենադարանի ստեղծած կոշտարը և այն վոչ պակաս բացասական յերևույթը, վոր ստացել եր թայֆայականության բնույթ պետական բարձր շրջաններում.—«Դրոի խումբը, Դրոի տղերքը, կամ Ռուբենի խումբը, Ռուբենի տղերքը» և այլն։ Սրանք յերևույթներ էին, վոր մեծապես քայքայում էին պետական-հասարակական կյանքը, թուլացնում կառավարության հմայքը, վարկաբեկում բարձր իշխանությանը, վորը հենց ինքն եր թուլատրում այդպիսի խմբերի գոյությունը։

Վորպեսզի պարզ լինի Հայաստանի այդ ժամանակվա պատկերը, յես ձեզ կկարդամ մի փոքրիկ հատված Աստեղյանի «Ուր է յելքը» գրքից.—

«Յերկրագնդի վրա թերևս վոչ մի ժողովուրդ այնպիսի վոչբալի, այնպիսի որհասական և սոսկալի օրեր չի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տերրիտորիայի վրա։»

«Կյանքի բոլոր ասպարեզներն էլ արտահայտում են դառն ու լեղոտ ող և թունավորում ամբողջ յերկիրը սպանելով նրա կենսունակ ուժերը, խեղելով նրա ձգտումները ու կամքը։ Մի հակայական ժուրճ սխրության ու մռայլության, տանջանքի և մրմունջի կնիք է գամել այդ դժբախտ յերկրի արյունաներկ ճակատին։ Շրնչավոր եյակները, թե անշունչ իրերը, մերկ լեռները ու անտառապատ սարերը, թե գանգերով լեցուն ձորն ու արյունով վոռոգված դաշտերը, ամայի դարձած գյուղերը ու ավերված քաղաքները, դաշտերում ու բարձրավանդակներում նստած չունիմ գյուղացիները, թե քաղաքների խուցերում ու ավերակներում գոյությունը քաշ տվող քաղքենիները, տեղական բնիկ՝ խեղճացած ու թշվառության մատնված ազգաբնակությունը, թե թալանված ու սովալլուկ, լքված ու վայրենացած գաղթականությունը, բոլորն էլ վշտալից հայացքը արճճապատ յերկնակամարին հառած ոգնություն են հայցում, յելք են վորոնում։

Հայաստանում գոյությունը դարձել է անհնար, կյանքը դժոխք»։

Ճիշտ է այս բոլորը, ընկերներ.

ՉԱՃՆԵԼ... ճիշտ է։

Այսպես լինելով հանդերձ այս դժբաղդ յերկիրն իր ամբողջ բախտով կախված եր Անտանտի վորևե սպայի քմահաճույքից. անկախության մասին խոսք լինել չեր կարող։ Յեվ ինչպես Դաշնակցությունը կարող եր անկախ պետություն ստեղծել, յերբ նա ինքը չեր հավատում նրա գոյության, թերահավատ եր նրա ապագայի վերաբերմամբ։

Անտանտան Դաշնակցության ուղեկիցն է յեղել միշտ։ Անտանտան եր, վոր խորամանկ փափուկներով կովեցրեց յերկու հարևան ժողովուրդներին, վրացիներին ու հայերին, չեզոք գոնաները ստեղծելու և ապագայում սրան կամ նրան սիրաշահելու և նոր կռիվ պատրաստելու համար։ Սակայն Անտանտայի դերը շատ ավելի լավ բնորոշել են իրենք, մեր նախկին ղեկավարները. թույլ տվեք կարդալ Դրո-Ղազազյանի դեկլարացիայից Անտանտային վերաբերող կտորը.—«Անգլիացիների կովկաս գալը նույնպես չկարողացավ ազգային բաժանությունը վերջ տալ, իսկ տերիտորյանների սահմանները վորոշելու հարցում անգլիացիների գործադրած միջոցները իրենց մեջ կրում էին ապագայի յերկարատև յերկպառակության սերմեր, վորից պարզ յերևում եր, վոր նրանց ձեռնտու չե Անդրկովկասի ժողովուրդների խաղաղությունը։ Անտանտան մանր ազգություններին իբր ոդնելու ձգտումով վոչ միայն չի ազատում նրանց, այլ նրանց համար ստեղծում է նոր շղթաներ, իսկ հայ ժողովուրդի համար նոր անվերջ թշվառություններ և տանջանքներ, վորի որինակն է Կիլիկյան»։

Այստեղ այդ ավելացնելու վոչինչ չի մնում. սակայն ցավն այն է, վոր այդ հասկանանալով ու խոստավանելով, Դրո-Ղազազյանը շարունակում են մնալ Դաշնակցության մեջ, վորը չի հրաժարվել Անտանտայից և տակավին շարունակում է հուսալ նրանից անկախ Հայաստան։ Այստեղից պարզ է, թե վորքան անհետևողական են այդ դեկլարացիա տվողները և թե ինչպես միշտ դաշնակցականի խոսքը հակասում է նրա գործին։

Դաշնակցությունը դեռ շարունակում է մաշել Անտանտայի շեմքերը. նա չթափվեց ու խելքի չեկավ Լոզանի կոնֆերենցիայից հետո անգամ, յերբ Անտանտան ամենալկտի կերպով դրժեց իր խոստումները, ժոռացավ «փոքրիկ դաշնակից հայ ժողովրդի կրած տառապանքները» և դիվանագիտական սեղանից հետ մղեց նրա

հարյունոտ դատը» ընդմիշտ արխիվ գլորելով «ազգային ոջախի» խնդիրը, որ պետք է տային հայ ժողովրդին ծովից-ծով Հայաստանի փոխարեն։

Ընկերները, կուզեյի մի փաստ էլ բերել այն մասին, թե ինչպես էր Անտանտան ոգնում հայկական դատի լուծման։ — Յերբ առաջ էր յեկել մանդատի խնդիրը և Ամերիկան մտածում էր վերցնել Հայաստանի մանդատը՝ Անգլիան կորցրեց իր հանգիստը. վախենալով թե այդ պատրվակով Ամերիկան կը գրավե իր շուկաները և կթուլացնի անգլիական ազդեցությունն Արևելքում՝ նա մեծագումար (30 միլ. ֆ. ստերլինգ) հաշիվներ հրատարակեց այն ծախսերի մասին, որ արել է Հայաստանում պահվող անգլիական բանակի վրա. դրանով նա հասկացնում էր Ամերիկային՝ թե նա նույնպես ստիպված կլինի մեծաքանակ գումարներ ծախսել Հայաստանի վրա առանց ոգուտ ունենալու. ինչպես գիտեք վերջ իվերջո Ամերիկան հրաժարվեց Հայաստանի մանդատից և այն ժամանակ մի անգլիական բավական ազդեցիկ թերթ «Դեյլի մեյլ»՝ իմպերիալիստական անգթությամբ հայտարարում է, թե «յեթե Միացյալ Նահանգները մտադիր չեն հանձն առնել Հայաստանի մանդատը—հապա վորքան էլ սոսկալի լինի այդպիսի հեռանկարը, հայերը պետք է բնաջնջվեն»։

Իբր թե ինքը Անգլիան անմեղ էր և մասնակցություն չուներ այդ մանդատից հրաժարվելու պատմության մեջ։

Դաշնակցությունը վարելով հետևողական անտանտայասիրական քաղաքականություն մինչև վերջն էլ սերտ կապ էր պահում Դենիկինի հետ—մի ուժի, որ ձգտում էր վերականգնել ռուսական հին ռեժիմն ու բռնապետությունը։ Չեզնից ամեն մեկը թող պարզի իր համար, թե ինչ կլիներ հայ ժողովրդի վիճակը, յեթե հաղթեր Դենիկինը։ Հիշեցեք ռուսական բռնակալության քաղաքականությունը դեպի հայերն առհասարակ և կը պարզվի ձեզ համար նաև այն հանգամանքը, թե վորքան էր մտածում Դաշնակցությունը հայ ժողովրդի անկախության և հենց նրա գոյության մասին։

Մյուս կողմից Դաշնակցությունը յերբեք չձգտեց, չցանկացավ ունենալ իր ներկայացուցիչը Խորհրդային Ռուսաստանում և բարեկամական հարաբերություններ ստեղծել նրա հետ. ընդհակառակը՝ նա մերժեց խորհրդային իշխանության ամե-

նաանկեղծ և հայ ժողովրդի համար գերազանցապես ձեռնտու շատ առաջարկներ. ընկ. Մռավյանը պատմեց ձեղ արդեն այդ առաջարկների մասին պերճախոս փաստերով, յես այլևս կանգ չեմ առնի դրա վրա։

Անցնենք առաջ. ժամանակը կարճ է նյութը շատ. յես համառոտ եմ պատմում, որպեսզի կարողանամ սպառել իմ ասելիքը։

Հայտնի է ձեր, Դաշնակցությունը ջանք եր թափում կենսագործելու «ծովից-ծով Հայաստանի» «տղայական» (Վրացյանի խոսքն է) ծրագիրը։ Նա այս անգամ էլ, ինչպես միշտ գերագնահատելով իր ուժերը և հույսը դրած Անտանտի վրա, սկսում է ազբեսիվ գործողություններ Թուրքերի դեմ և գրավում է Ալթին։

Այդ ժամանակներում արդեն Քեմալը կազմակերպվել ու դարձել եր շատ գգալի ուժ. Դաշնակցությունն այդ գիտեր և հայդուկային հոգեբանությամբ հաշվի չեր առնում այդ։ Սկսվում է տաճիկների կողմից հակահարձակումը, որի ընթացքում ինչպես գիտեք Դաշնակցությունը շարունակ պարտվեց։ Տաճիկներն անցան Սարիղամիշը, Ղարսը, Սուրմալուն, անգամ Ալեքսոլը։ Ժողովրդի դառնության բաժակը լցված եր. արդեն նա յելք եր վորոնում։ Հայ աշխատավորությունը գտավ այդ յելքը։ Մայիսյան ժողովրդական ցասումը Դաշնակցության դեմ առաջին թուիշքն եր խեղդող փակուղուց յելնելու համար։ Աշխատավորությունը դասակարգային առողջ բնազդով հասկացավ, որ միայն Խորհրդային կարգերը կը տան յերկրին խաղաղություն և աշխատավորին աշխատանքի ապահովություն. ու նա վճռական շարժումով խլեց Դաշնակցությունից իշխանությունը և Հայաստանը հայտարարեց Խորհրդային հանրապետություն։ Դաշնակցությունը սակայն հանգիստ չնստեց. նա չեր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ ինքն այլևս կորցրել է իր գոյության իմաստը հայ իրականության մեջ։ Ձեվ սկսում է փետրվարյան հակահեղափոխական շարժումը. շատերը կարծում են, որ դա հետևանք եր ռազմական կոմունիզմի գործադրած խստությունների։ Սակայն դա սխալ է. դա բնաստավրացիոն մի շարժում եր, որով Դաշնակցությունը ցանկանում եր վերականգնել իր հեգեմոնությունը։ Բայց ինչպես գիտեք, խորհրդային իշխանությունը հնարավորություն տվեց քաղաքացիական կռվից։ Դաշնակցությունը փախավ Զանգեզուր, որտեղ նա պարտվելով խորհրդային իշխանությունից չվեց Պարսկաստան։

Խորհրդային իշխանության այս յերեք տարում կատարած աշխատանքը ձեր աչքի առաջ է. այդ իշխանության ոգնությամբ հայ աշխատավորը ձեռք բերեց խաղաղություն, որի շնորհիվ նա կպավ իր ընտարար աշխատանքին. դուք տեսնում եք, թե ինչպես Հայաստանի աշխատավորության ջանքերով որեցոր հարստանում, լուսավորվում, վերաշինվում ու վոոդվում է մեր յերկիրը. գոնված և ընդհանուր լեզու հարևան ազգերի աշխատավորության հետ սահմանային ու տերիտորյալ խնդիրները լուծվում են անցավ ու խաղաղ ճանապարհով, որինակ Ղարաքաղը։ Զարգանում է գիրն ու գրականությունը, գիտությունը արվեստը. զարգանում է լեզուն. Դաշնակցության տիրապետության ամբողջ ընթացքում հազիվ կարելի է հաշվել նոր տպագրված մի քանի անուն գիրք. խորհրդային կարգերի ~~կարգերի~~ այս յերեք տարում այդ ուղղությամբ կատարված է հսկայական աշխատանք, հրատարակված են հարյուրավոր գրքեր։ Ստեղծված է ժողովրդի համար կուլտուր-տնտեսական զարգացման լայն հնարավորություններ։ Այդ դուք տեսնում եք. կարիք չկա յերկարացնելու խորհրդային իշխանությունը գովքի չի սպասում։

Հետևենք Դաշնակցության, տեսնենք ինչ է անում նա արտասահմանում։

Ինչպես ասվեց մի քիչ առաջ Դաշնակցությունը պարտվեց և հայ աշխատավորության կամքով վտարվեց հայրենի յերկրից։ Լավ գիտակցելով, որ նա զրկված է յերկրում է իր ժասսաներից, և հասարակական բազայից՝ նա աշխատում է իր ազդեցությունը ժասսաների վրա պահել գոնե արտասահմանյան գաղութներում։ Նա շարունակում է իրեն ազգային գործերի միակ տերը համարել և տակավին հանդես է գալիս հայ ժողովրդի անունից կատարելով ինչ որ դիվանագիտական «գործեր»։ Ընկերներ, հայ աշխատավորությունը արդեն յեկել է այն ճիշտ համոզման, որ Դաշնակցությունը աշխատավորական կուսակցություն չի յեղել յերբեք և չլինելով այդպիսին նա յերբեք հետևողականորեն չի պաշտպանել աշխատավորության շահերը, նրա վարած քաղաքականությունը սկզբից մինչև վերջ յեղել է վնասակար ու արկածախնդրական։ Մեր գործը պիտի լինի խլել Դաշնակցության արտասահմանյան դեկավարներից հայ աշխատավորի անունից խոսելու իրավունքը։ Հայ աշխատավորությունից եր ստացել նա այդ իրավունքը, և այժմ

այդ աշխատավորությունն այլևս չի վստահում նրանց. թողնում է նրանց շարքերը և հետ է վերցնում իր տված իրավունքը։

Վոր Դաշնակցությունը սոցիալիստական կուսակցություն չի եղել—այդ ասում են իրենք, Դաշնակցության հայտնի դեկավարները. կուսակցության Ամերիկայում հրատարակվող լավ որդանը Դարբինյանի բերանով պարզ հայտարարել է, վոր սոցիալիզմը Դաշնակցության կողմից ընդունված է եղել յեվրոպական սոցիալիստների ազդեցությունը տաճկահայ դատի համար ոգտագործելու նպատակով։

Վիճել ուրեմն Դաշնակցության սոցիալիստականության մասին ավելորդ է, քանի վոր այդ լեգենդան վերանում է ըստինքյան իր իսկ դեկավարների հայտարարությամբ։

Հապա ինչ է մտածում անել Դաշնակցությունը, նա շարունակում է իրեն հավարել միակ պաշտպանն ու կրողը ազատ և անկախ Հայաստանի, վիլեննայի ժողովում նա վորոշել է, վոր «միացյալ և անկախ Հայաստանի պահանջը այսուհետև ևս պիտի մնա դեկավար սկզբունք Հ. Հ. Դաշնակցության քաղաքական գործունեության»։

Կուվի ինչ մեթոդներով, հասարակական ինչ ուժերի ոգնությամբ է մտածում Դաշնակությունը իրագործելու իր այդ «դեկավար սկզբունքը».

Այդ ճանապարհները գծում է Դարբինյանը. ահա նրանք. «...Հանուն մեր ազգային պետական նպատակին, մենք ժամանակավոր դաշնակիցներ փնտրենք ու գտնենք նայել քաղաքական այնպիսի ուժերուն մեջ, վորոնք նույնիսկ գաղափարական հակառակորդներ են ընկերվարության և դեմոկրատիայի։ Մեր հետամնաց ու արյունոտ իրականության դաժան պայմաններու ճնշող հարկին տակ մենք հարկադրված ենք չխորշելու նույնիսկ ամենասեվ քաղաքական ուժերուն հետ ժամանակավորապես գործակցելե, յեթե վորեվե չափով այդ կարող է մոտեցնել մեզ մեր ազգային ամենեն կենսական նպատակին իրագործման»։

«Բեմալի դեմ հակաբեմալական տարրերու հետ, բոլշեվիկներու դեմ հակաբոլշեվիկյան ուժերու հետ միասին մենք պիտի ջանանք վերացնել այն արգելքները, վորոնք ծառացած են մեր անկախության ճամբուն վրա»։

Հակաբոլշեվիկյան ուժերու հայտնի յեն. Անտանտան և այդ

և այն կազմակերպությունները, որ այժմ ֆաշիստներ են կոչվում։ Այդ միջոցներն ինչպես տեսնում եք նույնքան արկածախնդրական են, նույնքան ռոմանտիք, որքան և Դաշնակցության կռվի բոլոր միջոցները, որոնց շնորհիվ տաճկահայերի հարցը լուծվեց այնքան ողբերգական կերպով—Հայաստանը մնաց առանց հայերի։

Դաշնակցության ընտրած վերջին ճամբան կուսակցության մնացորդները տանում է դեպի միջազգային հակահեղափոխություն դեպի ֆաշիզմ, որի հաղթության դեպքում ռուսահայերի հարցն էլ անկասկածորեն կլուծվի այնպես, ինչպես լուծվեց տաճկահայերի հարցը։

Այս է Դաշնակցության գծած վերջին ուղին այս է նրա նորագույն մոտայնությունը։

Դրո-Ղազազյան գեկլարացիան, որ աշխատում է Դաշնակցության վողջ գործնեությունը արդարացնել օբեկտիվ պայմաններով մի տարտամ ու շաբլոն հայտարարություն է։ Մնալ Դաշնակցության մեջ, ընդունել նրա իդիոլոգիան և կանգնել III Ինտերնացիոնալի պլատֆորմի վրա անկարելի է. դա արվում է մասանների մոլորեցման և իրենց ազդեցության տակ պահելու նպատակով։

Դաշնակցությունը յերբեք էլ չի ունեցել մի որոշ, գիտնականորեն հիմնավորված իդոլոգիա. այդ տեսակետից նա այժմ ավելի վատ դրության մեջ է արտասահմանում. նա պառակտված է և այն տեղ. պառակտված է գաղափարապես, ինչպես տեսանք Դաբբինյանը քարոզում է ֆաշիզմ. Քալջաղնունին գնում է դեպի ռամկավարություն. Նավասարդյանը սոցիալիզմը դարձնում է «անտեսանելի որերի մի իդեալ»։ Մի խոսքով այնպիսի մի շփոթ, ինչպես միշտ յեղել է Դաշնակցությունը։ Վիեննայի ժողովում սակայն հաղթանակը տարել է Դաբբինյանի հոսանքը, որ նշանակում է Դաշնակցությունը պաշտոնապես ընդունել է Դաբբինյանի ասածները։

Դաշնակցության համար ճակատագրական մեծ հարված է Քալջաղնունու վերջին գիրքը, որի անունն է «Դաշնակցությունն այլևս անելիք չունի»։ Սա ասում է մի մարդ, որի մազերը ճերմակել են Դաշնակցության մեջ. բայց ավելի լավ է լսենք իրեն Քալջաղնունուն. ահա թե ինչ է գրում նա.—«Այսօր իբրև տնտե-

սական տարբ մնում է միայն Հայաստանի հանրապետության հայությունը և հայ քաղաքական մտքի անմիջական հոգատարության միակ առարկան պետք է լինի գոյություն ունեցող հանրապետությունն ու նրա շուրջն ապրող հայ ժողովուրդը։

«Հ. Հ. Դաշնակցությունն այլևս անելիք գործ չունի կամ ավելի ճիշտ մեկ գերագույն պարտականություն ունի հայ քաղաքական դատի ու իր սեփական անցյալի հանդեպ. այն է՝ իր իսկ վորոշումով, գիտակցորեն ու վճռականորեն վերջ տալ իր գոյության։

«Լինում են դրություններ, վորոնցից միակ պատվավոր ելքը ինքնասպանությունն է, մեր կուսակցությունն այդ դրության մեջ է։

Դաշնակցությունն իր դերը կատարել է, իր պաշտոնն ավարտել է. այսուհետև նրա գոյությունն ոչ թե ոգտակարություն չի կարող ունենալ, այլ միմիայն վնաս կարող է պատճառել։ Հ. Հ. Դաշնակցությունը մի գործիք եր հայկական պատմության ձեռքը։ Յերբ գործիքն իր գործը կատարում է, մաշվում կամ հինանում և կամ գործի շարունակությունը նոր գործիք է պահանջվում, հին գործիքը մի կողմ պետք է նետել։ Անցյալի գործիքը կարող է մնալ իբրև հարգանքի մի առարկա, բայց նրա տեղն այլևս ազգային թանգարանն է, և ոչ թե արհեստանոցում, ուր այսորվա կյանքն է պատրաստվում։

«Իսկապես այդ (այսինքն ինքնասպանությունը) պիտի անեյինք սրանից դեռ չորս-հինգ տարի առաջ, յերբ 1918 թ. հունիսին ստորագրեցինք Բաթումի դաշնագիրը, վորով հրապարակ եր իջնում ու մյուս պետությունների կողքին իր համեստ տեղը գրավում Հայ անկախ պետությունը, և յերբ նույն թվականի ոգոստոսին բացինք հայ խորհրդարանը, վորով նորածին պետությունն իրական ձեվ ու մարմին եր ստանում—ահա այն ժամանակ արդեն մենք պիտի կազմալուծվեյինք ու տեղ տայինք նոր քաղաքական խմբակցություններին։ Մեր պատմական միսիան վերջացած եր արդեն։

«Չհասկացանք, քաջություն չունեցանք հասկանալու։ Բայց թերևս այդ խանդավառության յեռ ու գեռի մեջ ներելի եր լեռնագանքների անձնատուր լինել և չգիտենալ իր անելիքը։ Բայց այսոր դրությունը շատ ավելի պարզ է, կյանքի պահանջը շատ ավելի հրամայական։ Չտեսնել այսոր իրականությունը, նշանակում է և կույր լինել յերկու աչքով։ Ցավ յեթե այսոր էլ վճռա-

կանութիւն չունենանք, մեր առջեւ կեցած է անխուսափելի հոգեվարք և քայքայում»։

Այսպես է խոսում Բաշնակցությունն և շատ ճիշտ է ասում նա։ Դաշնակցությունն այլեւս անելիք չունի և նա պետք է մեռնի։ Պատմության պահանջն ու անողոք օրամաբանությունն է դա։

Բայց Դաշնակցության աշխատավոր մասսան, որ այժմ կերես է դարձնում նրանից հազարներով, թողնում է Դաշնակցության շարքերն ու հեռանում անդարձ, որ կորում է նրա հետ բոլոր կապերը — դեռ անելիքներ ունի։ Համաշխարհային սոցիալիստական հեղափոխության նա մուրք ունի տալու։ Այրելով վերադարձի բոլոր կամուրջները նա վճռականապես կանգնում է III Ինտերնացիոնալի դրոշակի տակ, իր բոլանդակ ուժերն ու փորձը ի սպաս բերելով սոցիալիստական հեղափոխության։

Այս հաժագումարը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանում իր բոլոր ճյուղերով ու մարմիններով։ Ամենչնչին պիտի հայտարարի բոլոր այն մանդատները, որ տրված կլինին մեզանից Հայաստանի ներկայացուցիչներուն։

Ազգային հարցը բուրժուական հասարակարգում միշտ դրվել է տիրող դասակարգերի կողմից և միշտ ել լուծվել է նրանց ոգուին։ Մեզ համար է կասկածից դուրս է, որ միջազգային աշխատավորության հաղթանակով և բուրժուական հասարակակարգի լիակատար տապալումով միայն մանր ժողովուրդները ձեռք կբերեն իրենց ազատությունը և դուրս կգան այն փակուղուց, ուր այսոր մղել են նրանց գիշատիչ իմպերալիզմն ու բուրժուազիան։

Հայ աշխատավորությունն արդեն գտել է իր ուղին և նա անհողդողդ վճռակամով արդեն մեկնում է այն հոյակապ պայքարին, որը կբերում է համայն մարդկության ազատագրությունը ամեն տեսակի շահագործումից ու ճնշումներից։

Սոցիալիստական հեղափոխությունը ընթանում է իր հաղթական ուղիով. նա ով հարատած դասակն է դարերով շահագործված և այժմ հերոսաբար մարտնչող աշխատավորության՝ նա չի կարող մնալ անտարբեր այդ կռվին և չմիանալ հեղափոխության բանակին, որը գերմարդկային ճիգերով հրաշակերտում է Համաշխարհային խորհուրդների մեծ Ֆեդերացիան։

Բանվորա-գյուղացիական ժողովների հաղթության բոցերն կը լինի վերջին ժամը ժողովրդական դարավոր հնձնձանքների ու թշվառության։

Այդ հաղթանակը կլինի պայծառ արևածագը տանջված ժողովրդության մեծ ազատության և երջանկության.

Կեցցե՛ այդ հաղթանակը։ (Ցերկարատև ծափեր)

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ, զեկուցողին մի շարք հարցեր են տրված։ Նախագահությունը գտնում է, որ այս հարցերի պատասխանը առնվազն մի ժամ կտևի, դրա համար առաջարկվում է հարցաթերթերը տալ ընկ. զեկուցողին, որպես զի նա պատասխանի իր վերջին խոսքով։ Մինչ այդ բացենք վերճաբանությունները ըստ եության։

ՁԱՅՆԵՐ.—համաձայն ենք։

ԲԱԿՈՒՆՑ.— Ընկերներ, երբ պալատական կոնֆերանսում նման զեկուցում եր դրված, ես մի առաջարկ մտցրի, որ վերագնահատումից առաջ, յուրաքանչյուր վերագնահատող մի քիչ էլ իր անցյալ գործունեությունը գնահատեր և որովհետև այդ չեր նկատվում, ինձ թվում է պետք եր վերհիշել այն բոլոր պատմական պայմանները, որոնց մեջ այդ կուսակցությունը կատարել է քաղաքական անթիվ ակտեր։ Չե՞ որ ճշմարտություն է, որ այն դասակարգը որի անունից խոսում և գործում եր Դաշնակցությունը՝ հայկական մանր բուրժուազյան ժամանակին խոշոր հեղափոխական դեր է կատարել, յեղել է արտահայտիչը հայ քաղաքական մտքի տարիներ շարունակ։ Հայկական մանր բուրժուազիան, իբր այդպիսին, սեփական քաղաքականություն յերբեք չի վարել. այդ դասի ցանկությունների արտահայտիչ Դաշնակցությունն էլ ունեցել է օրիենտացիա, յեվրոպական այս կամ այն իմպերիալիստական պետությունների շահերի հետ կապված։ Հասկանալի է, որ մեր մանր բուրժուազիան Դաշնակցության որոք սպառեց յերկրի արտադրական բոլոր ուժերը և ստեղծեց այն կատաստրոֆան, որ Դաշնակցության լիկվիդացիայի նախադուռն յեղավ։

Յեթե Դաշնակցությունը վարել է հայկական չարաբաստիկ դատը և հասցրել ժողովրդին տնտեսական կործանման ու ֆիզիքական վոչնչացման յեզրին, ապա մեզ համար պարզ է այսօր, որ Դաշնակցության հետ միասին հայ բաղքենյական մտայնությունն

յենք դատապարտում, քանի որ այդ դատի պաշտպանությունը Դաշնակցությունը ստանձնել և իրենից առաջ յեղած քաղաքական խմբակներից։ Իսկ այդ խմբերի ծագման պատճառները թաղված են հայ պատմության խորքերում։

Յես բողոքում եմ մի արտահայտության դեմ. քննադատության ժամանակ, մանավանդ այստեղ, չի կարելի ասել մենք, դուք և այլն, բոլորս նախկին դաշնակցականներ ենք, և այս հանգամանքը թույլ չի տալիս գեկուցողին դուքով դիմելու լսարանին, որովհետև ինքն էլ դաշնակցական և յեղել։ Բոլորի հետ միասին ժամանակին յես արդարացրել եմ ինձ վրա դրած հույսերը, կատարել յեմ այն, ինչ թելադրում եր մեր շրջապատը։

Ընկերներ—Դաշնակցության պատմության մեջ Գարսկական հեղափոխությունը հեղափոխական լավագույն էջերից մեկն է, սակայն վերագնահատման ժամանակ այդ շարժումը անտես առնվեց (ծափեր)։ Բայց և որոշ հայտարարում եմ, որ Գարսկական շարժումը հեղափոխական շարժում եր և այդ Դաշնակցության վողջ անցյալի պարծանքներից լավագույնն է։ Յեթե 30 տարվա գործունեության ընթացքում սայթաքումներ ենք ունեցել և հանցապարտ ենք, ապա թույլ տվեք ասելու, որ Արեվելքի մեր հարեվան մի շարք հետամնաց ազգերի մեջ հեղափոխական շարժումներ ենք առաջացրել (յերկարատեվ ծափեր, բրավո, բրավո) Զեկուցման մեջ շեշտեց և գամավորական շարժման մասին։ Այդ շարժումը դեռ շատ է թարմ մեր հիշողության մեջ՝ գամավորական շարժման ժամանակ Դաշնակցությունը մեր ազատագրումը կապել եր ոտար պետությունների շահերին և դրա համար էլ մենք չարաչար տուժեցինք, գամավորական շարժումը միայն կրակի վրա յուղ լեցրեց և խորացրեց ազգամիջյան առելությունը։ Ի հարկե, կոտորածի պատասխանատվությանն խոշոր մասը ընկնում մեծ ու փոքր իմպերյալիստական պետությունների վրա։ Կգա ժամանակ, յերբ համաշխարհային հեղափոխությունը կհաղթի և բոլոր դիշատիչ աշխարհակալների հետ միասին նայեվ 1915 թ. կոտորածի ղեկավարները իրենց պարանոցը կթեքեն հաղթական պրոլետարյատի սուսերի առաջ։

Վերջացնենք. Դաշնակցությունը թարգմանն և յեղել մեր ցանկությունների։ Մեր սրտում այժմ ուժեղ վողբերգություն է կատարվում, որովհետև մենք դգում յենք, որ մեր գործնեության

արդյունքը խոշոր չափով չեղել և հոգուտ Հայ աշխատավորության թշնամիների՝ ռուս և տաճիկ բռնակալության. այս հանգամանքը մի ժեստ չի և վոչ էլ քաղաքական մի սիրաշահություն։ Պարզ և կտրուկ հայտարարում ենք, վոր անցյալում սայթաքումներ շատ ենք ունեցել։ Մեր վերաքննահատումը մուրճի ծանր հարված և մեր նախկին ղեկավարների համար։

Մի հարց եմ ուզում տալ ղեկուցողին։ Դաշնակցությունը հայկական մանր բուրժուազիայի մտայնության արտահայտիչն եր և ինչպես ցեղամ, վոր մտայնությունը վոչնչացավ, այդ մասին ղեկուցողը վոչինչ չասաց։ Սակայն պարզ ու վորոշ պիտի ասել, վոր Դաշնակցության ստեղծած պայմանների մեջ քայքայվեց հայ քաղքենիությունը, մանր բուրժուան, սպառվեցին նրա արտադրական ուժերը և այդ պատճառով էլ մեռավ այն արմատը, վորի վրա ամրացել եր Դաշնակցությունը։ Մենք գնալու ենք այժմ մի այլ ուղիով, վորդեգրել ենք այլ հասոզում և ցեթե վորևե վտանգ ըսպառնա խորհրդային ցերկրին, պատրաստ ենք պաշտպանելու մեր նոր ուղին և այնպես, ինչպես դաշնակցական խմբերը չնաշխարհիկ հերոսությամբ կռվել են անցյալում, մենք էլ կապացուցենք, վոր նույն վոգով կկռվենք, այս անգամ պրոլետարյատի համար, հեղափոխության համար (բրավո, բրավո, ցերկարատև ծափեր)

ԲԱԼԱՍԲԵԿՑԱՆ.—Ընկերներ, պետք է ընդգծեմ, վոր այս հաշվետվարն հավաքվել է ինքնաբուխ կերպով, վոչ մի ուժ չի հարկադրել վոր վերաքննահատենք Դաշնակցության։ Մեշչանական շրջաններում խոսվում է, թե մենք ցեկել ենք վորոշ ուժերի ճնշման տակ։ Պետք է ժխտենք այդ կարծիքը, առաջարկում եմ մի բանաձև հաստել այն իմաստով, վոր Դաշնակցությունը մեզ հասցրել է այս վիճակին և վոր սա Դաշնակցության ազատ մտքի մի ազատ ելքն է (ծափեր)։

Ինչ պայմաններում է աշխատել Դաշնակցությունը։ Նա ծնվել է 90-ական թվականների և վորդեգրել է 60—70-ական թվականների լոզունգները։ Նա կազմակերպել է հայ աշխատավորական մասսային, վորպես մի ազգություն, վորը արևի տակ վիճակ ստեղծի և ձգտի դեպի կուլտուրա։ Այս է պահանջել հին սերունդը։ Այդ միջավայրում տիրում եր մի սոսկալի բեժիմ։ Ընկերներ, Աբդուլ Համիդի գործը չգիտեմ ինչո՞ւ վերագրեցին Դաշնակցության, թե իբր նա է կատարել այդ գործերը. (ծափեր)։ Դաշնակցությունը

ձգտել այդ բեժիմից ազատել հայ ժողովուրդին և վորոշ գործ և կատարել, և սխալվել է քաղաքական խոշոր հեռատեսությունն չունենալով։ Նա չի ունեցել քաղաքական հստակ հեռանկարները, մտահոգվել և ազատագրական շարժումով, հայ գատի շուրջը աշխատանք և կատարել և գոհաբերություններ։ Այս է ահա, վոր հայ աշխատավորության վրա թանգ է նստել։ Անդկովկասի աշխատավորության պահանջը նա գոհաբերել է հայկական գատին։ Մեր գատի ուղիները հարթելով, նա մոռացել է իր հեղափոխական լոզունգները, վոր դրել է նրա վրա աշխատավորությունը։ Այս մըտքով ես հասկանում եմ ընկերներիայստեղ գալը։ Ձես էլ դրանցից մեկն եմ և ժամանակին բողոքել չեմ նրա դեմ։ Ասում է Դաշնակցությունը վոչ մի աշխատավորական գործ չի կատարել։ Գյուլխանդանյանն ու Ստեփյանը չեն Դաշնակցությունը, այլ ժենք, վոր մեր ուսերի վրա կրել, ժենք ենք նրա արժեքները։ Սխալ է ժխտել, վոր նա վոչ մի սոցիալիստական պրոգրեսիվ աշխատանք չի կատարել, սխալ է։ Գյուղացիք ճանանչում են Դաշնակցության. հողային հարցի և այլ խնդիրների մասին առաջին անգամ ձվ է հասկացրել նրանց։ Ջննելու ենք Դաշնակցությունը՝ վոր տանում է մեզ դեպի ֆաշիզմ, քննելու ենք և հակառակ ենք գնալու նրան։

Այժմ հետաքրքրվել ենք Դաշնակցությունից և ասում ենք, թե նրա քաղաքական ուղիները սխալ են եղել։ Նա միջազգային դիպլոմատիայի գերին է եղել, և դրա համար գնալու ենք նոր ուղիով, հայ և արևելքի այլ աշխատավորների պահանջած ճանապարհով (ծափեր)։

ՇԱՎԱՐՇ (ծափահարություններ).—Տո աղբեր լավինել կծափահարենք, վաճինել։

Ընկերներ. ես ամեն տեղ մի ավելորդ մարդ եմ եղել։ Դաշնակցության մեջ էլ 21 տարվա գինվոր եմ եղել և ոպոզիցիա չեմ կազմել։ Անկեղծ խոսքը լավ կլինի. վերցրեք թերթերը կարդացեք։ Ժողովրդական հերոս Անդրանիկը մի լավ խոսք է ասել, թե գաղափարի կռվի ժամանակ գենքերը վար պիտի դնել։ Բոպեներ կան, վոր տարիներ արժեն, և տարիներ կան, վորոնք բոպե էլ չարժեն։ Այժմ ըմբռնում ենք բանվորի շահերը, մտնում նրա մեջ և համբուրում նորը (ծափեր)։ Այստեղ վերագնահատում չեղավ։

Ներկայումս ես հայտնում եմ իմ դժգոհությունը Դաշնակցու-

թյան մասին և հրաժարվում։ Մինչև 14 թիվը նա բոլոր իր հասկացողության հայ հեղափոխական կուսակցություն էր։ Ցեվ աշխատանքը տարավ այնքան, որքան ըմբռնում էր։ Մենք սոցիալիստության մասին գաղափար չենք ունեցել, որովհետև խոսքը ժամանակին կասեն։ Ցես վորպես մի հասարակ զինվոր համբուրում եմ բոլոր նահատակների շիրիմները և հեռանում։ 14 թվից հետո Դաշնակցությունը հեղափոխական չի յեղել։ Կառավարությունը տանելիս նա հեղափոխական չեր և այստեղի բոլոր դաշնակցականներին մոտիկ ձեվով ասել եմ, վոր սուտ են ասում։ Ցերեք տարի կռիվ եր և բոլորը դեզերտիրներ եյին։ Հրամայում եյին ֆրոնտ գնալ, իսկ իրանք ճնում եյին և իրար աչք թող եյին փչում։ Ցես հեռանում եմ վոչ թե չեկայից վախեցած, այլ մի ուրիշ նպատակով, վորպեսզի պետք գամ հեղափոխության գործին։ Այստեղ ստեղծում եյին հայրենակցական միություններ, իսկ կառավարությունը դրում եր վորպեսզի չյերկպառակվեն։ Ցերեք տարվա ընթացքում բոլոր բախտախնդիր մարդիկ մտան Դաշնակցության մեջ և նա քանդվեց։ Կառավարությունը կարծում եր, թե ինքը անկործանելի յե, դրեց միացյալ և անկախ Հայաստանի խնդիրը, վորին տաճկահայությունը հակառակ եր։ 14 թվից հիասթափվեցինք Դաշնակցությունից և այժմ մեր դատը նրանց ձեռքին չե։ Մայիսի 28-ի անկախության ակտը սխալ քայլ է (վորոշվում է այլևս ժամանակ չտալ ընկերոջ)։

Ա. ՊՇՏՐՈՍՑՅԱՆ.—Ընկերներ. այստեղ զեկուցումներից իմացանք փաստեր, վոր Դաշնակցությունը իր քաղաքական գիծը չուղղեց Բանկոտոմանից, Ռանասորից և այլ դեպքերից հետո։ Ֆոլյանը նկարագրեց այն հասարակական կացությունը, վորում ծնվեց, բայց վոչ մի բացատրություն նրա պատմական և գաղափարախոսության հիմքերի մասին։

Վերցնենք Տաճկա-Հայաստանը։ Ասում են թե շահագործում եյին և դրա հետևանքով անշուշտ բողոք է առաջանում և պատրաստվում եին կռվով դուրս գալու, վորովհետև կար ազգային ինքնորոշման գաղափարը։ Բողոքելով բեժիմի դեմ մանր սեփականատերերը վախենում եյին, թե հարստությունը ձեռքից կվլեն, բայց վորոշակի այս կամ այն տեսակետի վրա չեն կանգնում և վարում են տատանվող քաղաքականություն։

Հայ իրականության մեջ ամբողջ ժողովրդական մասսան չի

յերեվում, անհատները կան, վորոնց մատի շարժումով շարժվում է մասսան։ Գյուղացիությունը հին և ուժեղ տրադիցյաներ ունի և կարծում է թե գործի գաղտնիքը վոչ թե տնտեսականի, այլ անհատների Աստուծո և այլ բաների մեջ է։ Այս մտածողությունը բղխում է նրա տնտեսական դրությունից։

ՁԱՅՆԵՐ.—Ըստ եյության ընկ. Պետրոսյան։

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ.—Այդ շարժումը գունավորված է, վոչ թե սեփական ույժի հավատով, այլ հույսը ուրիշ ուժերի վրա դնելով։ Սա մանր բուրժուական հոգեբանություն է։ Վորդեգրելով այսպիսի գաղափարներ, նա իրականությունը չի հասկանում և մնում է իր սկզբունքի վերա։ Դաշնակցությունը հույսը դնում է այդ նույն շարժման վերա և այդպիսի հանգամանքներում չի կարողանում գործնական լինել։

ՆԱԽԱԳԱՀ.—Ամփոփեք, յերեք րոպե է մնում։

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ.—Նրա փիլիսոփայական բմբռնումները իրականություն չեն ընդգրկում։ Լինելով բուրժուական հուսակցություն, նա սխալների մեջ ընկավ, վորովհետև ագգային ելեմենտը շատ ուժեղ եր նրա մեջ։ Անդրկովկասը մասերի բաժանվեց, վորովհետև կուսակցությունները գուտ ագգային եյին և գործնականում չեյին նկատում հոկտեմբերյան հեղափոխության բերած բարիքները։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկեր Պետրոսյան ձեր ժամանակը լրացավ։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ գուցե թույլ կտայիք խոսողների ցանկը փակել։ Արդեն գրված են 24 հոգի։

ԱՂՄՈՒԿ.—Չի կարելի փակել, կլսել ցուցակը, խնդրում ենք կարդալ (նախագահը կարդում է արտահայտվել կամեցողների ցուցակը)։

ԲԱՆՎՈՐ ՎԱՀԱՆ.—Ընկերներ ես Դաշնակցության անդամ եմ յեղել 25 տարի աշխատել եմ նրա շարքերում և յեկել եմ հարց տալու, թե արդյոք նա ճիշտ է գործել թե վոչ։ Յուրաքանչյուր գյուղացի, վոր մտածում է գնալու գործի, տեսնում է վոր սխալվել է և կամ յեթե ուրիշ լավ գործ է մտածել, հինը թողնում է։ Այսոր պատմական որ է և թաղել, մեռել բան չկա, ճիշտ է վոր ձեր հետևից մեռելներ են խոսում, կան դիակներ, վորոնք ձայն են տալիս ձեր հետևից, լսեցեք նրանց, (ծափեր)։ Պարսկաստանի հեղափոխությունը տարված է շնորհիվ Ռուսաստի մեր խոշոր լիդերի,

բայց ինչ վերաբերվում է նրա սխալներին, կան անշուշտ Մարդիկ Աստծուն մի ժամանակ հավատում էլին, կան այնպիսիները որոնք այսօր էլ յերկրպագում են, բայց նրանք հետզհետե վոչնչանում են և մենք էլ այդպես պիտի մտածենք։

1914 թվին, ինչպես ասացին մեր ղեկավարները են կազմակերպել կամավորական շարժումը։ Մի խմբակ, բաղկացած Աբրհամ Գյուլխանդանյանից, Արամ փաշից, Անդրանիկից, Վարանցով Դաշկովից և այլն հավաքվել են և վճռել ժողովրդի բախտը։ Բանվորի խոսքը անտես է արված, գործը կազմակերպել է այդ խումբը։ 1918 թվին Քալջանունին ընտրվեց մեզանից և մեր ծրագիրը իր հետ տարավ, սակայն այնտեղից դրա համար Ռուսաստի ձեռքով գալիս է մի խմբակ, վորպեսզի Քալջանունուն խափի, և սա կատարվում է մեր լիդերի ձեռքով։ Սա ցույց է տալիս, վոր մենք սոցիալիստներ չենք այլևս (ծափեր)։ Ընկերներ, այստեղ յեկողները լավ կշռել, չափել յեկել են և նրանք վորպես հեղափոխականներ ձեռները ծալած չպիտի նստեն, այլ պետք է մտածեն խեղճ գյուղացու մասին, մեր կառավարությունը խեղճերի կառավարությունն է (ծափեր)։ Նա ուզում է մեր յերկիրը շինել, յեկեք վորպես հեղափոխականներ նստենք, տանք մեր լոզունգները, ասենք մեր խոսքը բուրժուազիայի դեմ։ Կամ մահ կամ ազատություն (ծափեր)։ Ինտելիգենտներ ես շատ եմ տեսել, բայց խելոք մարդիկ, ինչպես Ստեփան Շահումյանն եր՝ քիչ (ձեռը տանում է դեպի Շահումյանի արձանը)։ Ցեկեք հոտընկայս հարգենք նրան (բոլորը լուռ վոտքի յեն կանգնում)։ կեցցե մեր ընկ. ԼԵՆԻՆԸ (ծափեր կեցցե, բրավո)։

ԳՐԻԳՈՐՅԱՆ.—Ընկերներ ես կարծում եմ, մենք բոլորս հեղափոխականներ ենք, մեր յերակներով հոսում է հեղափոխական արյուն և մենք անցյալի վերա չպետք է լաց լինենք, այլ յեթե նա սխալ է ընդգծենք նոր ուղիներ և գնանք։ Այժմ մի չափանիշ ընդունենք Դաշնակցության մոտենալու համար։ Վորպես աշխատավորական մարդիկ մոտենալով այդ տեսակետից նրան վիրավորական բան չենք ասում, բայց ճիշտ է վոր, նա սխալ է յեղել։ Դաշնակցությունը վոչ մի վարքագիծ չի ունեցել, վոր կարմիր թելով անցներ նրա միջով։ Տեսնում ես բանվորի մոտ նստած է մի տերտեր, սխալը հենց սրանումն է, վոր գործը չի դրել ճիշտ հողի վրա և աշխատավորությունը տուժել է։ Նա մի վոքր հանդես է գալիս

վորպես աշխատավորի և հետո էլ վորպես տերերի պաշտպան։ Այսպիսով նա ընդհանուր ուղի ունենալ չեր կարող։ Վորպես հեղափոխական քայլ հիշվեց միայն Պարսկաստանի հեղափոխությունը, բայց կան փաստեր, վորոնք բոլորովին հակառակ են ասում։ Դաշնակցությունը կռվել է Սուլթանի դեմ, բայց ինչ է շահվել դրանից։ Բոլոր բախտախնդիրները մտել են նրա մեջ և Դաշնակցությունը վերջ ի վերջո կործանվել է։

Ընկեր Բակունցը ասաց թե Դաշնակցությունը կամավորական շաժումի մեջ մեղք չունի, վորովհետև կազմակերպել են Կադետները և այլն։ Բայց Դաշնակցությունը ինչու չե ընդունել այդ վորոշումը։ Չե վոր նա 12 թվին վորոշել եր չմասնակցել կռվին։ Այս բոլորից հետո մեր վորոշումը կլինի չաշխատել նրա համար։ Ցերեխան յերբ ձեռքը կրակին է տալիս և այրվում է, հետո նա ձեռք չի տալիս. Դաշնակցությունը այդպես է արել և նրա ձեռքը այրվել է և այժմ ռեվոլյուցիայի ճանապարհով գիտակցության գալով չպիտի շարունակի իր աշխատանքը։ Մեր համագումարը պետք է անաչառ լինի վորպեսզի սխալներ չանի։ Իսկ հին կուսակցականները պետք է իրենց խղճի առաջ արդար մնան, վորովհետև նրանք կարիք են զգում իրենց խղճի թեթեվացման։ Սրանից հետո պետք է կպչենք նոր գործնական աշխատանքների և գնանք բոլորովին նոր և ուրիշ ուղիով (ծափեր)։

ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.—Ընկերներ. Դաշնակցությանը չպիտի մոռենալ վորպես մի սպանված վորսի, վորին ամեն ինչ կարելի յե ասել։ Շատերը նրան կուրորեն հետեվում են։ Վերագնահատելով տեսնում ենք, վոր յուրաքանչյուր կուսակցություն իր ժամանակին յեղել է հեղափոխական, բայց պատմությունը առաջ է գնում արագորեն և այս տեսակետից մենք վեհերոտ վերաբերմունք չպիտի ցույց տանք։ Հրաժարվելով մենք մեզ հարց պիտի տանք, արդյոք կկամենայինք լինել նրա մեջ, յեթե նա այժմ գոյություն ունենար։ Այս հարցին պետք է պատասխանենք վոչ՝ վորովհետև նա իր գույնը կորցրել է և մեզ տանում է դեպի կործանում։ Գիտեք, վոր նա յեղել է մանր բուրժուական կուսակցություն, բայց չպետք է ասել, վոր գիտակցաբար է նա յեղել, վորովհետև այսպես առել չենք կարող։ Նրա հետ մենք ծրագիրներ ենք կապել, վորոնք յեղել են սոցիալիստական։

Ձայներ.—Դուք դեռ շատ յերիտասարդ եք, ընկեր։

ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. –Ընկ. Բակունցը մի բան ասաց, թե մանր պետությունները ինքնուրույն որեներացիա և քաղաքականություն ունենալ չեն կարող։ Դաշնակցությունը իր որեներացիան և քաղաքականությունը ճիշտ կապել է այնպես, ինչպես դասակարգային կռիվը։ Նա դեկավարել է մանր բուրժուական մտավորականներով և այն ժամենտին, երբ բուրժուազիայի ուժը շոշափելի եր դառնում մեզ մոտ։ Նա հեղափոխական է եղել ժամանակին այնչափ, որչափ պաշտպանել է ժողովուրդը։ Իր ծրագրի սկզբում Դաշնակցությունը դրել է մի մեծ դեկլարացիա, սակայն գործնականում տատանվել է և կռվել նրա դեմ։ Ընկերներ, մեզ համար Դաշնակցության դեմքը պարզ է, որ նա մանր բուրժուական կուսակցություն է և մինացրել է աշխատավորության գիտակցությունը։ Նա չնայած շարունակում է իր գործը, սակայն պատմականորեն նա իր դերը վերջացրել է և այժմ նա պետք է պարզի, թե արդյոք բարիկադների վոր կողմն է անցնում, ֆաշիզմի թե հակաշխարհային հեղափոխության (ծափեր)։

Հ. ԿԱՐԻՆՅԱՆ.—Ընկերներ, Դաշնակցության վերագնահատումը անելիս չեթե մենք դիմենք ինքնաժխտման, այդ դեպքում վոչնչացրած կհամարենք նայեվ այն շարժումը, վորը սկսվել է հանձինս այս հակաֆաշիստների (ծափեր)։ Ընկերներ չես համաձայն չեմ ընկ. Բալասանյանի այն կարծիքին, թե նման շարժում Դաշնակցությունը ունեցել է հաճախ։ Մի՛րրանական ու Անջատական շարժումները չեն կարող նմանվել սրան, վոր ընդգրկում է լայն մասսաներ։ Սա նորություն է Դաշնակցության 33 ամյա կյանքում։ Սա 20-րդ դարու առաջին քառորդում խոշոր պատմական չերեվույթ է և մեր մասսայի ինքնաճանաչության արտահայտությունն։ Մենք չեկել ենք վերջացնելու մեր հաշիվը մի քաղաքական կազմակերպության հետ, վոր քառորդ դարից ավելի հայ ազատագրական ձգտումների արտահայտիչն է եղել։ Ինչո՞ւ մինչեվ այժմ Դաշնակցությունը կանգուն է մնացել, վորովհետև մինչեվ վորոշ ժամանակ նա իր միջավայրի արտահայտիչն է եղել։ Զքայքայվեց նա, վորովհետև հայ կյանքում այլ հավաքական հակադիր ուժ չուներ և ուղղված եր կալվածատիրական, բեկական ու խանական կարգերի դեմ։

Նա տվել է թանկագին զոհեր, ինչպես Զնդոնները, Զավենները, Ալոյան Քոթոթ ու Մի՛րրան յեվ այլն։ Նա հայ կյանքում բաց եր

թողել մի նշանաբան «Ձեկայք առ իս ամենայն վաստակյալք եւ ես հանգուցից զձեզ» այդպիսով Դաշնակցությունը վեր եր բոլոր դասակարգերից եւ ուներ իր մեջ բանվոր, գյուղացի, արհեստավոր, ազնվական, կալվածատեր, գյուղի քահանա, եպիսկոպոս, վարդապետ եւ անգամ կաթուղիկոսական թեկնածու։ Դաշնակցությունը 1909 թվից հետո լուն թուրքերին իրենց ազգային ձգտումների դեմ հակադրեց իր ձգտումը։ 14 թվի ժողովում նա կարծես բրոնում է գգաստության ճանապարհ, սակայն նրա մակսիմալիստական ձգտումները կամավորական շաժման մեջ ծավալվեցին, չնայած նա կարող եր այդ շարժումը դադել։ 1917 թվականին, երբ հոկտեմբերյան հեղափոխությունը յերեվան է հանում նոր հավաքական ուժ եւ հակադրում ազգային քաղաքական ձգտումներին, Դաշնակցությունը փոխանակ դաշնակցելու հեղափոխական Ռուսաստանին, մեկուսացրեց իրեն եւ դիմեց Ձեվրոպական իմպերալիզմի միջամտության։ Այս բոլորից հետո նույն քաղաքական կուրսն ընդգրկել՝ կնշանակի նորից ընկնել պատահականությունների, սովի ու ավերածությունների դիրկը։ Այս համագումարը յեկել է 4.000 նախկին շարքային դաշնակցականների կողմից ասելու, որ այլեվս խզվում է կապերը Դաշնակցության հետ եւ միանում միջազգային աշխատավորության շահերի կրող ու գործադրող հեղափոխական շտաբ 3-րդ Ինտերնացիոնալին (ծափեր)։

Ահա թե ինչու այս համագումարի արժեքը գոնում եւ պատմական յեվ յեզակի Դաշնակցության կյանքում (ծափեր)։

Ա. ՍԻՄՈՆՑԱՆ.—Ընկերներ, չնայած որ այսոր պատմական որ է, բայց մենք խնդիրներին մոտենում ենք շատ թեթեվ, կարծես յեկել յենք ինչ որ թաղում կատարելու։ Ցեթե Դաշնակցությունը բոլորին չի բավարարել, ապա ինչպես է նա ապրել։ Աստմ յեր սոցիալիստական չի յեղել։ Դա է որ կյանք է տվել նրան։ Դաշնակցության գոհերը ապարգյուն չեն անցել. վորովհետեվ նրանք մաքուր են յեղել յեվ մաքուր դործ են կատարել։ Շատերը նրանցից այդ պատճառով հանգստություն են գտել նույն իսկ ժանմեդականների մոտ ու հանգստացել։ Այդ բոլորը պատմություն անելու համար շատ ժամանակ է պետք, վորպեսզի պատմեմ։ Ինչպե՞ս է նա 30 տարի շարունակ ապրել։ Այդ ժամանակամիջոցում նա իր դերը կատարել է փայլուն ու փառավոր կերպով յեվ աշխատանքները պետք է հարգենք։ (ծափեր) Ինչքան էլ նրան որ

մեռցնենք նա չի մեռնի, վորովհետեվ նա յեղել է գաղափարական յեվ կմեռնի այն ժամանակ յերբ կչորանան նրա արմատները(սխալ է, սխալ է, աղմուկ)։

ՊԵՏՐՈՍՅԱՆ.—Այն հեղափոխականները, վորոնք իրենց կապերը կտրում են Դաշնակցությյան հետ չպետք է տատանվենն։ Սանոմենատալ վերաբերմունքի յեվ արցունքի կարիք չկա, յեթե ասենք կորչի Դաշնակցությունը (ծափեր) Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ նա այլեվս չի ապրի, յեվ նրա հանցանքը ՝ՃՈՒՄ է հանցանք։ Նրա գործնեյությունը յեղել է շովեն յեվ կործանարար։ Ասում յեն թե ստիպված է գրավելու ագգա.ին խնդիրով։ Դա միանգամայն սխալ է, վորովհետեվ նա վոտնատակ է տվել բանվորության շահերը յեվ կեղծել։

ԱՂՄՈՒԿ.—Սխալ է. անպատասխանատու հայտարարություններ են, խոսքը հետ վերցնել։ (Պետրոսյանը հեռանում է ամբյոնից)

Տ. ՏՐԴԱՏՅԱՆ.—Ընկերներ այստեղ այնպես արտահայտվեցին, վոր կարծես թե Դաշնակցությունը ավելի վնասակար է յեղել, քան թե Սուլթան Համիդը։ Յեթե խոսում եք նրա մասին, ապա պետք է պատճառաբանեք։

Յես բանվոր եմ յեվ այդպես չեմ մոտածում։ Իմ կարծիքներով յես միյանում եմ ընկ. Բակունցին։ Տաճկահայ դատի վերաբերյալ ընկերները նոր են հասկանում վոր ուրիշ կերպ լինել չեր կարող։ Յես չեմ մոռանում Զանգիբասարի մաքրումը, վորը մի արդարացի գործ եր։

Յեթե մի ժողովուրդ չի յենթարկվում պետության, ինչպես կվարվեն նրա հետ։ Յեթե Դաշնակցության փոխարեն լիներ մի այլ կուսակցություն ինչպես կվարվեր։ «Պարզեք ձեր տեսակետը»։

Կամավորական շարժման կազմակերպման յես եյ յեի մասնակցում. նրան գեմ եր Միմիյան Ավետիք Շահխաթունյանը։

Յես հասկացել եմ, վոր Դաշնակցությունը մինչեվ 14 թվականը յեղել է սոցիալիստ. բայց յես պարտ եմ համարել առաջին հերթին կոտորվող տաճկահայության ոգնության գնալու, ինչպես այսոր ուզում ենք գերմանական բանվորության ոգնության գնալ (ծափեր) Դաշնակցության դրոշի տակ ավելի շատ բանվորական միություններ կային, քան մյուս կուսակցությունների մոտ (ձայներ—սխալ է)։

Ձես չեմ զղջում, վոր պատկանել եմ այդ կուսակցության. բայց այսոր մենք պիտի ասենք մեր արտասահմանյան բոլոր նախկին ղեկավարներին. դուք այլևս չեք կարող մեզ ղեկավար լինել. մենք այսուհետև պիտի շարունակենք մեր պայքարը պրոլետարական սկզբունքներով, մինչեվ լինենք մի ազգ յեվ մի դասակարգ (ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.— Առաջարկություն կա խոսողների ժամանակը 5 րոպեյով կրճատել։

ՏԵՐ—ՊՈՂՈՍՅԱՆ.—Յեթե այս հաժագումարը տեվեր յեվս 3 որ, բոլոր պատգամավորներն էլ կուզենային խոսել. ժամանակի կրճատման առաջարկը գտնում եմ անտեղի։

ԹՈՒՄՅԱՆ.— Խոսողները կրկնություն են անում, առաջարկում եմ բավականանալ 5 րոպեյով։

ՆԱԽԱԳԱՀ.—Քվեարկում եմ կրճատման առաջարկը։—Այդ առաջարկը մերժվում է։

ՂՈՒԿԻՔՅՈՒՆՅԱՆ.—Դաշնակցության վերաձնահատությունն անելիս, նրա գործունեությունը պետք է բաժանենք 2 մասի. Նախահոկտեմբերյան և հետ-հոկտեմբերյան շրջաններ։ Առաջին շրջանում, սկսած 90-ական թվականներից, Դաշնակցությունը ազգային դատն էր պաշտպանում. 900-ական թվականներին, յերբ ցարական կառավարությունը սկսեց հայ կուլտուրայի դեմ ճընշումներ գործ դնել, Դաշնակցությունը իր գործունեությունը փոխադրեց նույնպես սահմանի *այս կողմը։ 905 թվականից, յերբ ռուսական հեղափոխությունը սկսեց, Դաշնակցության սոցիալիստորեն մտածող տարրերը պահանջ դրին զտել Դաշնակցությունը։ Այդ ժամանակ Դաշնակցության ծրագրի մեջ մտավ և սոցիալիստական գործունեության նախագիծը, բայց դա միայն թղթի վրա մնաց։ Հոկտեմբերյան հեղափոխության ծավալման ժամանակ Դաշնակցությունը 2 մասի յեր բաժանվում։ Դաշնակցությունը հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները ուրիշ կերպ եր հասկացնում աշխատավորության. այդպիսով նա կտրվեց Ռուսաստանից և առաջ բերեց անկախություն։ Մենք այդ ժամանակ դեմ գնացինք այդ մտադրության, բայց մեզ չլսեցին։ Մենք Բագվում խմբեր կազմած, հեղափոխական պրոլետարիատի հետ գալիս եյինք թյուրքերի դեմ կռվելու, բայց Թիֆլիզում նստած մեր դաշնակցական ընկերները մտած Նուրի փաշայի բանակը, գալիս եյին մեր

դեմ, հայ աշխատավորության դեմ կռվելու (ձայներ—դա պատմական սխալ է, ուրիշներ—ճիշտ է)։ Ձեզ որինակ Միշա Արզումանյանը։ Դաշնակցությունը շարունակ մեզ մի բան էր ասում, «կատեղծենք ծովից-ծով Հայաստան, ուր հայ աշխատավորությունը հանգիստ պիտի ճնա»։

Ընկերներ, 904 թվին Ալեքսոլի փամփուշտի պահեստը դատարկողներից մեկն էլ ես էյի. դրանով մենք ամբողջ Սասունը գինեցինք. բայց այժմ ես դանելով այդ գործունեությունը սխալ, յեկել եմ այստեղ հայտարարելու, վոր մեր փրկության միակ ճանապարհը սոցիալիստական հեղափոխությունն է, Սովետական իշխանությունն է, վոր գյուղացիությանն ու բանվորությանը մուրճ ու մանգաղ է տվել։ Ցեկեք ասենք մեր Դաշնակցության.—«Անցյալում լավ ես արել, թե վատ, դու այլևս չկաս»։ Ասենք նրա աշխատավորությանը. «վերցրու քո մանգաղն ու լապատկան և կյանքդ սաեղծիր այնպես, ինչպես ինքդ ես ցանկանում» (ծափեր)։

ՕՀԱՆՆԵՍ ԽԻԶԱՆՑՅԱՆ.—Դաշնակցությունը իր վորոշ գործերում յեղել է հեղափոխական և ոգտակար հայ ժողովրդին. բայց Դաշնակցության գլխավոր սխալն այն է յեղել, վոր նրա դեկավարները իրենց համարել են դիկտատոր և գործել են անկախաբար, պատճառ դառնալով մեծ աղետների։ Որինակ, Նարեկի կոտորածը յեղավ մի Աբդուլ Համիդի սպանության փորձի պատճառով, վորը կատարվեց առանց կոմիտեյի գիտության։ 907 թվին Վանի Դավոյի դեպքը պատահեց Դավոյի վրա գործ դրված բռնության համար Արամի կողմից։ Կաոկաոի կոտորածը պատահեց մի Հոջայի սպանությամբ, եյի առանց կոմիտեյի գիտության։ Վանի վերջին նահանջը տեղի ունեցավ Վանի պատասխանատու անհատների քմահաճության պատճառով, վորոնք նահանջի հեռագիրը ժողովրդից պահեցին, մինչեվ աղետի որը։ Խատիսյանը գնաց Ցեվրոպա, բոլորին այցելեց, բայց սուլթանին տեսնելու չգնաց, ասելով, թե ինքը լիազորված չե այդ բանի համար. նա այդ տեսակցությունը հետաձգեց Ցեվրոպայից իր դարձին. բայց մինչեվ նա վերադարձավ, ֆեժալը գրավեց Ղարսը, այն ժամանակ Խատիսյանը գնաց Ֆյադիմ բեգի մոտ աղաչելու։ Ահա այս բոլոր փաստերը գալիս են ասելու, վոր Դաշնակցության տուն քանդողները յեղել են անհատները՝ իրենց դիկտատորությամբ։ Այժմ էլ նրանք առին վոսկինները և փախան արտասահման։ Այն դաշնակցականները, վո-

րոնք վերադարձան այստեղ, սիրով ընդունվեցին, իսկ յեթե մի շարք մարդիկ դրկվեցին ուղիչ տուն, դա ժամանակի անհրաժեշտությունն եր պահանջում (ծիծաղներ, ծափեր)։ Ընկ. Բակունցն ասաց, որ տաճկահայ կոտորածը հավանաբար կլիներ, յեթե կամավորական շարժումը չկազմակերպվեր։ Ինչու Բալկանյան պատերազմների ժամանակ կոտորածներ չեղան։

Յեթե մեզ բոլորիս հարց տան, թե դաշնակցական յեղել եք, կասեն—այո։ Պատճառը, որովհետեվ նա որոշ լույս տվեց մեզ. իսկ յերբ տեսանք, որ նա վերջին տարիներս իր քաղաքականությամբ մեզ դեպի կործանումն եր տանում, մենք հրաժարվեցինք նրանից։ Յեկավ Խորհրդային իշխանությունը, 3 տարի նա շարունակ հանդիսատ կյանք տվեց մեջ. հայ լեզուն դարձրեց պետական լեզու։ Ձեր ուզած ժամանակ կարող եք գնալ տեսնել Մյասնիկյանին առանց դժվարության։ Յեթե կռվել ենք Խորհրդային իշխանության դեմ, դա յեղել է անգիտակցաբար։ Մենք ելի հեղափոխականներ ենք և նույն հոգով կկռվենք սոցիալիստական հաղթանակի համար։

Կեցցե կոմունիստական կուսակցությունը։

Կեցցե Յերրորդ Ինտերնացիոնալը։

Կեցցե նրա հանճարեղ դեկավարները, որոնց մենք պատվավոր նախագահներ ենք ընտրել այս համագումարին (բուռն ծափեր)։

ՄԻՔԱՅԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ.—Ընկերներ, Խորհրդային Հայաստանի դանագան կողմերից հավաքվել ենք կատարելու մի լուրջ, պատմական ակտ. անհրաժեշտ է չանել հապճեպ քննադատություն, պետք է վերցնել Դաշնակցության մամուլը, ծանոթանալ նրան և հետեվողական կերպով ընդգծել Դաշնակցության բնութագիրը։ Այստեղ ասին, որ Դաշնակցությունը բազմաթիվ կերպարանքներ է ընդունել. դա ապացույց է, որ նա ընդգրկել է հայ ժողովրդի բոլոր խավերը. ուրեմն քննադատելիս, մենք պետք է քննադատենք բոլոր հայ ժողովրդին։ Լիովին սխալ է ասել, թե Դաշնակցությունը սոցիալիստական կուսակցություն չի յեղել։ Շատերը մտել են Դաշնակցության միայն դասակարգային պայքարի համար. յեթե Դաշնակցությունը իր ծրագիրը չի կարողացել գործադրել դա յեղել է պայմանների հետեվանք։ Այսօր զարմանելի չպիտի թվա ուրեմն, որ աշխատավոր մասսան գնում է կոմունիստական կուսակցության յետեվից, որ հիմք դրեց Անդրկովկասյան ազգու-

թյունների հավերաշխության և վարում է զուտ դասակարգային քաղաքականություն։ Ազգամիջյան կուիվների պատճառը թյուրք բեգերն ու հայ բուրժուաներն են յեղել և վոչ Դաշնակցությունը (Ծափեր)։

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ.—(Մեղրուց) Յես այստեղ անում եմ թե չե անհատական, այլ մեր ընկերների կողմից հավաքական գնահատություն։ Մենք յեկել ենք այն յեզրակացության, վոր Դաշնակցությունը յեղել է հեղափոխական կուսակցություն, նրա մասսան կանգնած է յեղել սոցիալիստական հողի վրա և այդ մասսայի ճնշման տակ է կազմվել Դաշնակցության սոցիալիստական ծրագիրը, թեև շատ անգամ չի իրագործվել։ Դաշնակցության առաջ դրված է յեղել 2 հարց. տաճկահայ ժողովրդի ֆիզիքական գոյության և Կովկասահայաստանի աշխատավորության սոցիալիստական աշխատանքի հարցերը։ Ահա այս դուալիզմն է, վոր մտցրել և Դաշնակցության մեջ տրագիզմ, զանազան պոռթկումներ մտցնելով նրա կյանքում։ Արդյոք այս դուալիզմը անհրաժեշտ եր տվյալ ժամանակի համար։ Յեթե Դաշնակցությունը չդներ ազգային հարցը, մենք այժմ չեյինք հավաքվի այստեղ և հայ աշխատավորությունը ռուսականի հետ պիտի հետեվեր կոմմունիստական կուսակցության։ Ազգային հարցի լուծման համար Դաշնակցությունը վորոնում եր բյալ ուժեր, հանձինս Յեվրոպայի, վորի մեջ նա խաբվեց. բայց այդպիսի խարկանքի յենթարկվեց նույնպես գերման բանվորությունը։ Յես կարող եմ ասել, վոր նույնիսկ կոմմունիստական կուսակցության մեջ մտնող մասսան չեր սպասում, վոր այսպիսի հետեվանքներ կարող եր տալ Ռուսական հեղափոխությունը։

Ո՞վ կարող եր հավատալ և այնքան հեռուները տեսնել։ Այժմ մենք տեսնում ենք հեղափոխության վոչ միայն հաղթանակները, այլ և հետեվանքները։ Մենք տեսնում ենք այն բյալ ուժը, վոր որեց որ նվաճումներ է անում։ Ինչ, պիտի անենք ուրեմն հիմա. ելի պիտի ձեռնք անհավատ։ Վոչ, դա անկարելի յե սոցիալիստ մարդու համար։ Մենք ասում ենք, վոր Ուորդրոյին իրավակարգը արդեն իրականացել է, վոր Դաշնակցության հետապնդած ազգային ֆեդերացիան արդեն կատարվել է, ել ասպատ հեռանկարներ չունենք. Տաճկահայաստանի խնդիրը այլեվս չի կարելի յերեվակայել և գտնում ենք, վոր այսուհետև յուրաքանչյուր քայլ Ուորդրոյին իշխանության դեմ մեր ընկերների կողմից կհանդիպի սոսկալի

դիմադրության, ինչպիսի դիմադրություն որ ցույց տվեց մեր շրջանը՝ իր ֆիզիքական ոյությունը չնչել ուզողների դեմ (ջերմ ծափեր)։

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ.—Ընկերներ, կուսակցամոլ չպիտի լինել, ոչ էլ միակողմանի, յուրաքանչյուր կուսակցություն կունենա իր լավ և վատ կողմերը։ Պիտի խոստովանել, որ Դաշնակցության վարած քաղաքականությունը դեպի իր հարևանները յեղել ե սխալ, բայց արդյոք չի՞ կարելի այդ սխալը սրբագրել։ Կոմմունիստական կուսակցությունն էլ սխալ տակտիկա է ունեցել, բայց 10-րդ համադումարում փոխել ե իր ընթացքը։ Նույնպիսի սխալներ արել են և մենշևիկներն ու ես-երները։ Յերբե Դաշնակցությունը սոցիալիստական ծրագրի հետ ունեցել է և ազգային քաղաքական նպատակ, դա յեղել է ժամանակի և պայմանների հետևանք։ Վերջին ժամանակներում Դաշնակցությունը սոցիալիստական եր. դրա ապացույցը այնե, որ այսոր մեր շատ ընկերները այստեղ խոսում են, ինչպես լավ սոցիալիստ հեղափոխականներ. ինչպես կարող է պատահել, որ այսպիսի ընկերներ գտնվեն մի կուսակցության մեջ և այդ կուսակցությունը սոցիալիստական կուսակցություն չլինի։ 18 թվին, յերբ Հայաստանի կառավարությունն անկախություն ուներ, մենք տեսնում եյինք խոսքի և մամուլի ազատությունը. բոլոր կուսակցությունները լեգալ եյին (ձայներ՝ դա նրա թուլությունից եր)։ Հեղափոխությունը յեղել է, բայց յես նրա հետևանքները չեմ տեսել, չեմ զգացել։ Պարլամենտի ընտրությունների ժամանակ ամեն կուսակցություն իր ցուցակն ուներ։ Պարլամենտում կային եսերներ և կոմմունիստներ, որոնք ազատ վիճում եյին։ Գալով դոների խնդրին, վոր զաղափարը դո՞ չի պահանջում։

ԹՈՒՄՅԱՆ.—Նախորդ ճառախոսի խոսքերից ես եկա այն յեզրակացության, որ ներկա բուրժուական պետությունները չպիտի համարվեն բուրժուական, քանի որ իրենց որենսդրությամբ բոլոր կուսակցությունները հավասարվում են ազատ· դա նայելով կարծիք է սոցիալիզմի մասին։ Դաշնակցությունը յերբե չի յեղել սոցիալիստական, դա ունի իր խոր պատճառը։ Այսոր դաշնակցական ղեկավարներից մեկը արտասահմանում հայտարարում է, որ Դաշնակցությունը սոցիալիստական ծրագիրն ընդունել է միայն վորպես շիրմա, թող փչելու համար միջազգային պրոլետարիատին, որպեսզի նրա կարծիքը շահեն հայկական դատի համար։ Յերբ

տարիներ շարունակ դեկավարող մի պատասխանատու ընկեր այսպիսի հայտարարություն է անում, եվ Դաշնակցության սոցիալիզմի մասին չպիտի խոսել։ Խոստովանեցեք, որ մեզ մոլորեցրել են։ Մեր չախչախված ճակատներով չկարողացանք լուծել հայկական հարցը։ Դուք այժմ պիտի ընդգրկեք նոր քաղաքական վարքագիծ (ձայներ — ասացեք մենք և ոչ դուք)։ Այո մենք։ Ինչպես հայկական, նույնպես առհասարակ բոլոր ազգային խնդիրները լուծվում են միայն համաշխարհային պրոլետարիատի միջոցով։ Հայկական դատը թյուրք աշխատավորության դատից անկախ չի վճռվի։ Անհայտ հանգամանքը նկատի ունենալով մենք ընդգրկում ենք միջազգային հեղափոխության պլատֆորման և կգնանք այդ ճանապարհով։

ՇԱՎԱՐՇ.—Չպիտեմ ինչ սոցիալիզմի մասին են խոսում այստեղ, յերբ դաշնակցական «սոցիալիստ մինիստրը» 120 տաճկահայ ծառայողներին դուրս եր շպրտում գործից, իր իննամիներին տեղ տալու համար։ Այս առթիվ նույն ժամանակի «Վանտոսպ» թերթում գրված եր։ Դաշնակցության անփառունակ մահը պիտի վրոնել հենց այն հանգամանքի մեջ, որ անհատ կուսակցականներին լայն ազատություն եր տրված։ Դաշնակցությունն զբաղված եր յերեվակայական ծրագիրներով. ինչպես նա կարող եր սոցիալիստական դառնալ, յերբ Խատիսյանը այստեղ նստած՝ վիացյալ և անկախ Հայաստանի ապագայում դրավելիք նահանգների ծրագիրն եր մշակում։

Հայ ժողովրդի կամքը յերբեք այդ կուսակցության հետ չի յեղել։ 14 թվից հետո Դաշնակցությունը բացարձակապես վոչնչվե սոցիալիստական աննդենց չի ունեցել։

Կեցցե այն կառավարությունը, որ տաճկահայ բեկորների փրկության մասին և մտածում (ծափեր)։

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ.—Ընկերներ. այստեղ հավաքվածները վճռել են անդարձ կերպով հրաժարվել Դաշնակցությունից և իրենց բոլոր կարողություններն ի սպաս դնել Խորհրդային իշխանության։ Յերբ այսպիսի հաստատ վճիռ կա, ինչու նույն հաստատ վճիռը չկա և Դաշնակցության վերաշնահատման համար։ Սա հետեվանք է Դաշնակցության դեկավարների տված դաստիարակության։ Դաշնակցությունը կապված լինելով վորոշ գործնական խնդիրների հետ, միշտ հրանրել և մատակի զգացումները և քիչ և մոտծել նրա

դասակարակության մասին։ Այստեղ տարակուսանքներ են հայտնվում, թե Դաշնակցությունը սոցիալիստական յեղե՞լ ե, թե չե. ազգային դատը վարե՞լ ե, թե չե։ Այս հարցերը պետք ե ճշտել պատմականորեն, թե տվյալ պայմաններում այս կամ այն քայլ անել հարկավո՞ր եր, թե չե։

Վերցնենք նախ ազգային հարցը։ 19-րդ դարում, յերբ կազմակերպվում եյին ազգային պետությունները, յերբեմն այնպես եր գուգադիպում, վոր պետությունները կազմակերպվում եյին ազգայնորեն, միատարր, ինչպես Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան և այլն. իսկ յերբեմն ել վոչ միատարր ձեվով, ինչպես Ավստրիան, Ռուսիան, Թյուրքիան և այլն։ Մենք տեսնում ենք, վոր կապիտալիզմի զարգացման գուգահեռ, զարգանում ե նույնպես պրոլետարական դասակարգը, թեյեվ նրա կռվի պիտակցությունը այնչափ չի զարգանում։ Միյեվնույն ժամանակ առաջ են գալիս ազգային խնդիրներ։ 19-րդ դարում ազգայնորեն չկազմակերպված պետությունների մեջ փոքր ազգերը իրենց անկախություն են պահանջում, առաջ բերելով ներքին կռիվներ և քայքայելով պետությունները. որինակ՝ Ավստրիան, Ռուսիան (17 թ. հեղափոխության ժամանակ), Թյուրքիան (Բալկանյան պատերազմի ժամանակ)։ Պրոլոտարական շարժումը իր հերթին սկսեց արագ աճել, յեկավ մի ժամանակ, յերբ պատմության առանցքը կազմում եր թե չե ազգային խնդիրը, այլ դասակարգայինը։ Պատմության ֆոկուսը փոխվում ե։ Այն ժողովրդները, վորոնք մինչ այդ իրենց ազգային դատը լուծեցին, արդեն լուծեցին, իսկ յերբ առաջ յեկավ միջազգային պրոլետարական հեղափոխության խնդիրը, այնուհետեվ չլուծված ազգային դատերը այդ ճանապարհով պիտի լուծվեյին։ Դաշնակցությունը վորդեգրեց տաճկահայ ազգային դատը, իսկ Կովկասում ավելի շուտ առեղծվեց դասակարգային պայքարի շրջանը։ Դաշնակցությունը չանաց հայ դատին բարեհաջող լուծում տալ. ահա այն աղբյուրը, վորից խուժում եյին Դաշնակցության մեջ ամեն տեսակ տարրեր։ Ահա թե Դաշնակցության կազմը վորտեղից առաջ յեկավ։

Անդրկովկասում առաջացած պրոլետարական պայքարի առաջ ուրիշ լոզունգներ եյին դրվում, դասակարգային կռվի լոզունգները. Դաշնակցությունը, վոր այն ժամանակ հայ ժողովրդի բոլոր կենսական խնդիրները իր վրա յեր վերցրել լուծելու, իր վրա վեր-

ցրեց նույնպես այս խնդիրը-դասակարգային կռիվը։ Ուրեմն չի կարելի հարց դնել, թե Դաշնակցությունը ինկորպորե յեղել և սոցիալիստ, թե չե։ Իմ խորը համոզումով Դաշնակցության մեջ յեղել են գուտ սոցիալիստական հողի վրա կանգնած մաքուր տարրեր. յեղել և նայեվ ամենաթեթև շովինիստներ, որոնց՝ մի լիբերալ կուսակցություն չեր ընդունի իր մեջ։ Ահա պատմական փաստերը Դաշնակցության այլատարրության։ Անշուշտ այս մեղքի մի մեծ բաժին ել ընկել է մեզ վրա, որ այն ժամանակ չեյինք մոտածում, թե այդ միաձույլ կուսակցությունը մեզ ուր կառնի։ Մենք, սոցիալիստորեն մոտածող յերիտասարդներս, շատ մեծ հավակնություն ենք ունեցել, թե Դաշնակցության դեկը վերջիվերջո մեր ձեռքը կանցնի. բայց այդ չեղավ և չի ել լինի։ Մենք վերջինն ենք այդպես ասողներից, և ահա ինչու՞ այժմ հրաժարվում ենք Դաշնակցությունից։ Դաշնակցությունը նոր իդեոլոգիա չի կարող մշակել իր համար (ծափեր)։

Այժմ անցնենք Դաշնակցության գործունեությանը։ 2 ասպարեզ ուներ նա գործելու-Տաճկահայաստանը և Ռուսահայաստանը։ Ինչպես և տարել Դաշնակցությունը իր ազգային քաղաքականությունը։ Ձես այն կարծիքին չեմ, որ նա գուտ Յեվրոպայի փեշերից և կախ ճնացել, նա միաժամանակ հայ ինտելիգենտ մասսայից վերացրել և մեռելությունը, իր հեղափոխական ակտերով բավ ներշնչելով նրան։

Բայց Դաշնակցությունն իր ծանրության կենտրոնը դարձրեց Յեվրոպական դիպլոմատիան։ Ընկերներից մեկը հարց տվեց, թե Դաշնակցությունը ուրիշ ինչ միջոց ուներ գործելու։ Ձեվ նույնպես հարց եմ տալիս այդ ընկերոջը. ինչ յերաշխիք ուներ Դաշնակցությունը այդ ճանապարհով իր գաղը շահելու։ Կար նույնպես ազգերի համերաշխության ճանապարհը. Դաշնակցությունը թեյով այդ ուղղությամբ ել փորձեր արավ, բայց միայն իբրև մի նոր միջոց՝ իր նպատակին հասնելու համար. յերբեք այդ ուղղությամբ մեթոդիկ աշխատանքներ չտարվեցին։

Լավ կլիներ Անդրկովկասում մենք սոցիալիստություն չանեյինք. մի կուսակցություն, որի գլխավոր ուշադրությունը սահմանից այն կողմն է ուղղվել, այստեղ չպիտի գործեր այդ ուղղությամբ։ Մի ընկեր իր հուշատետրում ասում է. «Մենք մանուկ եյինք գործարաններում և աշխատում եյինք կազմակերպել բան-

վորներին, բայց տեսնում էինք, վոր Տաճկահայ դատը մթագնել և նրանց միտքը ամբողջովին»։

Մենք մտածել ենք իդեալիստորեն, կարծելով, թե կարելի է բանվորությունը կազմակերպել անկախ մյուս ազգերի բանվորներից, բայց մի ֆրոնտում գնալ միասին։ Մենք ժոռացել ենք, վոր յերբ միջազգային տներին մեր ազգային բանվորներին առանձին դրոշով դուրս էինք բերում, ազգային ժոռենտը ավելի էինք շեշտում, քան դասակարգայինը։ Դա արել ենք միամտորեն, իդեալականորեն։ Անգամ վերջերս, յերբ հարց է դրվում, թե կուսակցությունը ազգայնորեն թե միջազգայնորեն պետք է կազմակերպել, այն վորոշումն ենք արվում, թե միջազգայնորեն կազմակերպված բանվորությունը չի գա մեր յեռեվից։ Կամավորական շարժումը փայլուն որինակն է այդ տրամադրության. մենք դնացել ենք մասսայի հետևվից, ասելով, վոր յեթե չդնանք, մասսան մեզնից կխրտնի։ Կամավորական շարժումը Դաշնակցությունը չի ստեղծել. բայց յերբ ուրիշները այդ գաղափարը մասսայականացրել են, Դաշնակցությունը չի ունեցել այն խիզախությունը, վոր նրան հետ կանգնեցնի։

Մեր պատմության վերջին շրջանի ամենացայտուն և խրատական յերեվույթներից մեկը Անդրկովկասյան Սեյմն է. յես ուզում եմ դրա որինակով մի քանի յերեվույթներ բացատրել։ Յեթե պատկերացնենք Անդրկովկասյան հանրապետությունների միությունը և Անդրկովկասյան Սեյմը, ըստ յերեվույթին կարծեք միևնույն բաներն են։ Յես ուզում եմ նրան համեմատության դնել։ Անդրկովկասյան Սեյմը Անդրկովկասյան ժողովրդների համար մի դժբախտություն յեղավ. նա չեր կարող Անդրկովկասյան ժողովրդների պետական միությունը դառնալ։ Փոխանակ դրանից դաս առնելու, Անդրկովկասյան ժողովրդները բաժանվեցին և ստեղծեցին անկախ հանրապետություններ։ Անդրկովկասի իրականությունը ճանաչող մի կուսակցություն այդ քայլն անելու համար կամ պետք եր իր ուժերը գերագնահատած լիներ, կամ լիներ չափազանց միամիտ։ Անդրկովկասը մի օրգանական ամբողջություն է, վորին չի կարելի բաժանել։ Ինչ է ստացվում բաժանումից հետո։ Չեր կարելի Ղարաբաղը գաղթեցնել Հայաստան, ուրեմն պետք եր դրավել այն. Լոռին նույնպես։ Ազրբեջանը նույնն եր մտածում։ Իրենց ազգային անկախությունն ամրացնելու համար, բնականա-

բար նրանք իմպերիալիստական քայլեր պիտի առնեյին։ Անդրկովկասյան բոլոր պետությունները ել նման տենդենց ունեյին։ Տեսնված է, որ փոքրիկ պետությունները ավելի խոշոր չդաձգությունները են անում իմպերիալիստական հողի վրա, քան մեծերը։

Յեզրակացություն.—Անդրկովկասյան նման անկախությունները վոչ մի ժամանակ չեյին կարող միություն կազմել։ Գալով Անդրկովկասյան ներկա միությանը, մենք գիտենք, որ ներկա հանրապետությունների մեջ դեկավար կուսակցությունը դասակարգային է. յերբ յերեք ազգերի պյուռացի և բանվոր դասակարգը դաշնակից են մեկ-մեկու, այս դաշինքը դառնում է անկախության իրական գրավականը։

Յեզրափակում.—Պատմության օբյեկտիվ, անողոք պահանջով առաջ է յեկել հայկական հարցը, ինչպես մյուս բոլոր ժողովրդները իրենց ծոցից հանել են կուսակցություններ՝ իրենց անկախության համար կռվելու, այնպես ել հայությունն է տվել իր ծոցից Դաշնակցությունը։ Սակայն ես շեշտում եմ, որ հայ ազգային դասը տարվել է սխալ ուղիով և տվել է վատ հետեվանքներ։ Դասը ինքնին լինելով անհրաժեշտ, վատ անդրադարձումն է ունեցել Անդրկովկասյան աշխատավորության համար։ Անդրկովկասյան հանրապետությունները լինելով վոչ դասակարգային, չեյին կարող ստեղծել Անդրկովկասյան միություն։ Կան ազգային խնդիրներ, ինչպես անգլիական գաղութներինը, որ այժմ ել պիտի արծարծել այդ խնդիրները նախընթաց պիտի լինեն պրոլետարական շարժմանը։ Իսկ այն յերկրներում, ուր պրոլետարական հեղափոխությունն առաջ է գնացել, ազգային խնդիրը պիտի կապել նրա հետ, գտնելով որ հարցի լուծման միակ ճանապարհը դա յե։ Մենք այդ վիճակի մեջն ենք գտնվում։ Ահա իմ կարծիքով միակ պատմական դիագնոզը՝ մեր դատի լուծման։ Մենք կասենք հայ ժողովրդին.—«Դու մի ժամանակ կարող եյիր ազգային դատ վարել ֆեոդալական պետության դեմ, իսկ այժմ, յերբ դու ունես միջազգային բանվորություն, միայն նրա միջոցով կարող ես քո դատը առաջ տանել» (ծափեր)։

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ.—Ընկերներ. յես մի հարց եմ ուզում տալ. յեթե Դաշնակցությունը մինչեվ հիմա ճնար, դաշնակցական յերիտասարդությունը պիտի ճնար նրա հետ։—Վոչ։ Յերիտասարդությունը մարքսիզմի հետ առնելով՝ բոլորովին թոթափել է Դաշ-

նակցության իդեոլոգիան։ Ահա դրանումն է կոմմունիստների հաղթանակը։ Վո՛չ Մորդոգային Հայաստանի շինարարական աշխատանքները և վո՛չ սոցիալական նոր յերեվույթները մեզ թելադրեցին հրաժարվել Դաշնակցությունից, այլ մեր մեջ կատարվող մտքերի բեկումը։ Յեթե մենք Դաշնակցության գաղտնիքները ավելի շուտ իմանայինք, ավելի շուտ կհեռանայինք նրանից։

ԽԱՆ-ԱՎԴԱԼ.—Դաշնակցությունը ազգային կուսակցություն է յեղել, վորովհետև այն ժամանակվա տիրող գաղափարը այդպես եր։ Հատուկենտ դաշնակցականներ են միայն յեղել սոցիալիստ։ Ընկ. Փոլյանի զեկուցումից ես յեկա այն յեզրակացության, թե մենք մնում ենք ելի դաշնակցական, միայն գործում ենք պրոլետարիատի հետ (Ձայներ-սխալ է. աղմուկ, ծիծաղ...)։ Դաշնակցությունը յերբ դարձավ կառավարություն, կորցրեց իր հմայքը, վորովհետև զեկավարները աշխատում եյին իրենց համար գյուղերում սեփականություն ստեղծել։

ՍԻՆԱՆՅԱՆ.—Դաշնակցությունը առաջ յեկավ տաճկահայ իրականության մեջ և 30 տարի վարեց նրա զեկը։ Յես իբր 15 տարվա մի անդամ, շատ անդամ մտածում եմ, թե ինչ ստացանք մենք այդ գործունեությունից.-Տաճկահայաստանն առանց հայության. մի ցանկություն, վոր ունեցել են Կարմիր Սուլթանն ու Լոբանովը։

Մենք քաղաքականորեն մտածել չենք կարող. այդպես կարող են մտածել միայն մեծ ազգերը. բայց մի կուսակցություն, վոր ամբողջ յերկրի ճակատագիրն է զեկավարել, իրավունք չունի դիպլոմատ չլինելու։ Դաշնակցությունը իբր որինակ վերցնում եր Բալկանների ազատագրությունը. սակայն նա մոռանում եր, վոր դիպլոմատների խոստումները իրենց պետությունների պաշտոնական խոսքերը չեն կարող լինել։ Դաշնակցության գործունեության քննադատությունը թողնելով պատմությանը, այժմ միայն այսքանն եմ ասում, վոր մենք չենք տարել դասակարգային կռիվ, բայց այսուհետև մենք մեր բաղդը կապում ենք համաշխարհային հեղափոխության բաղդին։

ԿՐՄԵՆԱՆՑ.—Ներկա պատմական րոպեներում, յերբ աշխարհի բոլոր կողմերում 2 ճակատ է ստեղծվել, վերկապիտալի և բանվորության, նախկին դաշնակցականներս գումարում ենք այս համագումարը, նպատակ դնելով, վերագնահատել Դաշնակցության ուղին և գծել մեզ համար նոր ճանապարհ։ Ամենից ավելի գնահատելի

յեր ընկ. Պողոսի ճառը, վոր մեզ շատ բան ասաց։ Պիտի խոստովանել, վոր մեր կուսակցության դեկավարները միտք չեն ունեցել հայ ժողովրդին տանել դեպի կործանում, այլ համախմբելով ժողովրդի բոլոր տարրերը, կազմել մի Դաշնակցություն, վորից և իր անունը-Դաշնակցություն։ Նրանք կոչ են արել հայ ժողովրդին գնալ Տաճկահայաստան և ժողովուրդը արձագանք և տվել այդ կոչին։ Տվել ենք այդ գաղափարի համար արժեքավոր զոհեր, աշխատավորների գավակներ, վորպեսզի կապիտալիստական պետությունները ուշք դարձնեյին հայ դատի վրա։—Իզուր։ Դաշնակցությունը չկարողացավ այդ ըմբռնել. այնուամենայնիվ այսոր մենք պարտավոր ենք հարգել հիշատակը այն բոլոր զոհերի, վորոնք ընկան այդ ազատագրական կռվում։

Դաշնակցությունը ինչպիսի տարրերից եր կազմված։ Դարալագյազում իշխում եր հայտնի Յեսպոնը, վոր տեր եր հոտերի, արտերի, տների և այլն։ Յերբ ժողովրդական հերոս Դրոն մտնում է Զանգեզուրը, թուրքերը հեռանում են. Զանգեզուրեցիք գալիս են նրանց թողած մի քանի փալասները հավաքելու. Դրոյի գինվորները անջատում են կանանց տղամարդկանցից և բռնաբարում (Աղմուկները, ձայները,-Այստեղ ասելու բան չե, յեթե իրականություն ել և, չպիտի թույլ տալ ասելու)։ Յերբ յես իբր Սիսյանի Շրջանային կոմիտեյի նախագահ, դիմում եյի կառավարության գլխավորներին և առաջարկում թերթում տպել իմ բողոքը, ինձ պատասխանում եյին, թե կուսակցական թերթում չի կարելի նման բան տպագրել։ Յերբ դեկավարները գնացին Պարսկաստան, սկսվեց գաման գործը. Յեսպոնին չեյին համարում վնասակար (Աղմուկներ, ձայներ-դա մանավոր խնդիր է, չենք ուզում լսել) պետք է և մաքուր սրտով մտնել 3-դ Ինտերնացիոնալի դրոշի տակ, և կռվել մինչև վերջ։

ՆԱԽԱԳԱՀ.—5 րոպեյով ընդմիջում եմ հայտարարում։ Այսոր պիտի վերջացնենք այս հարցի քննությունը։ Դադարից հետո կլսենք ընկ. դեկուցողի պատասխանը։ Վաղը այս դահլիճը ազատ չի լինի։ Վերջին նիստը կունենանք վաղը առավոտ, բանվորական ակումբում։


(Պատգամավորները առարկում են, թե սաստիկ հոգնած են և այլևս չեն կարող ակտիվ մասնակցություն բերել ժողովին)։

ՆԱԽԱԳԱՀ.—Հարգելով ընկ. պատգամավորների իրավացի պահանջը, նիստը հայտարարում եմ փակված։

Նիստը փակվում է գիշերվա ժամը 2-ին։



Կանգնած են (ձախից աջ) Հ. Միրզայան, Ս. Կարոյան, Հր. Կարինյան, Ա.ր.ս. Առաջամյան, Մխ. Տեր-Ավրահամյան, Ա.Ն. Տեր-Միքայելյան, Մ. Տեր-Սահակյան; նստած են՝ Հ. Թումյան, Պ. Տեր-Պողոսյան, Ս. Փոլյան, Ալ. Ռակուզց.



ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Նոյեմբերի 23-ին, առաւոտեան ժամը 11-ին։ Նախագահում է Պոդոս Տեր-Պողոսեան։

ՆԱԽԱԳԱՀ.—Համագումարի 6-րդ նիստը հայտարարում եմ բացված։ Օրակարգի հարցերն են. վերագնահատման խնդրի մասին յեզրափակիչ խոսք ընկ. Փոլյանի, բանաձեվերի քննութիւնը և ընթացիկ հարցեր։

Նախ քան ընկ. Փոլյանին ձայն տալը, ընկ. Ավալյանը ուզում է մի քանի խոսք ասել։ (Ծափեր)

ԱՎԱԼՅԱՆ.—Ընկերներ, յես ցանկութիւն ունիմ, վորպես նախկին դաշնակցական և 17 տարիներից ի վեր այդ կուսակցութեան մեջ վորոշ պատասխանատու աշխատանք տանող, մի քանի դիտողութիւններ հայտնելու այն ընկերներին, վորոնք հավաքվել են աստեղ՝ վերագնահատելու Դաշնակցութեան գործունեութիւնը և բռնելու նոր ուղիներ։ Յերեկվա վիճաբանութիւններից ստացվում է այն տպավորութիւնը, վոր այստեղ հավաքված են բոլոր տիպի դաշնակցականները՝ իրենց բոլոր ճյուղավորուածներով։ Այստեղ տեսնում ենք ընկերներ, վորոնք անկեղծորեն կպել են ազգային հարցին։ Տեսնում յենք այստեղ սոցիալիստ դաշնակցականների, վոր տարիներ շարունակ կառչած այդ դաղափարին, աշխատել են պրոլետարական հաղթանակի համար։ Տեսնում ենք նույնպես այնպիսի ընկերների, վոր համամիտ են Զիլինգարյանի կամ Դրոյի ու Կորյունի կարծիքներին։ (Նախագահ «Փաստացի ուղղուած. այդպիսի արատահայտութիւն չի յեղել այստեղ»)։ Չի կարող լինել, ընկ. Տեր Պողոսյան, քանի վոր համագումարը ներկայացնում է դաշնակցական մասսան. կան ընկերներ, վորոնք դեռ հավատում են նրանց կարծիքներին. կան ընկերներ, վոր դեռ տատանվում ենև կան, վոր իրոք թափ են տվել այդ դաղափարները։

Հավաքելով այս բոլոր տպավորութիւնները, գալիս ենք այս յեզրակացութեանը, վոր հեռացող դաշնակցականների մեծ մասը սոցիալիստական տարրն է կազմում, վոր այսոր խզում է իր կա-

պերը Դաշնակցության հետ և հարուց 3-րդ Ինտերնացիոնալին. այս մասը համագումարի 90-95% է կազմում։

Յերեկվա խոսողները գալիս էին ասելու պարզ արտով, վոր իրենք անկեղծորեն տարել են Դաշնակցության գործունեությունը։ Յեթե նրանք ասում էին «մենք», իրոք վոր իրավունք ունեյին։ Ընկերներից մի մասը դանում եր, վոր Դաշնակցությունը չպիտի քննադատել, վոր նրա անցյալը սուրբ է և վոր նրա քննադատությունը պետք է թողնել պատմությանը ու այսոր բռնել նոր ուղի։ Հեղափոխական մարդը, վոր խզում է իր հին կապերը, մի կուսակցության հետ, պետք է իր դրական ու բացասական խոսքն ասի այդ կուսակցության համար։ Ընկ. Բակունցն ասաց, թե ինչպես կարելի չե Դաշնակցությունը համեմատել Մուսավաթի հետ, վորը բեգական կուսակցություն եր, մինչդեռ Դաշնակցությունը մեծ մասամբ սոցիալիստական տարրերից եր կազմված։ Ասացեք, խնդրեմ, Դաշնակցության մեջ մնող սոցիալիստական մասսան վո՞ր ժամանակ համարձակվեց մի դրական քայլ անել սոցիալիստական ուղղությամբ։ Մենք համագումարներում հաճախ խոսել ենք դռնփակ՝ շատ բանների մասին, քննադատել ենք դեկավարների ուղղությունը, բայց այնուհետև մեր մասսային յերբեք չենք տրվել այդ ժողովների իսկական պատկերը։ Մեզանից վոչ մեկը մասսային չի ասել, թե մեր ուղինները յեղել են սխալ։ Մենք միշտ ձնացել ենք փոքրամասնություն և չենք հրաժարվել, այնուամենայնիվ Դաշնակցությունից։

Ընկերներ, մոմենտի թելադրանքը չե, վոր այսոր դաշնակցականները հրաժարվում են հին ուղիներից. սա հեղափոխականի գիտակցությունն է։ Ահա ինչու մենք պետք է առանց թաքցնելու հայտարարենք, վոր այդ կուսակցությունը յեղել և չե թե միայն դասակարգային պայքարի մեջ անհետևողական, այլ և ազգային հարցի մեջ, պատճառ դառնալով բազմաթիվ կոտորածների։ Չի կարելի ասել, թե Դաշնակցության պատմությունը պետք է թողնել պատմագիրներին և սկսել հանգիստ աշխատանքը։ Այս համագումարը այդ պատմագիրներից մեկը պիտի լինի։ Մենք պիտի ասենք, վոր Դաշնակցությունը Աբդուլ Համիդի արշավանքով կամ Բանկ-Օտտոմանի դրավումով չեր կարող ազգային հարցը լուծել։ Նույն ազգային հարցը այսոր Հնդկաստանում է արծարծվում, բայց վոչ Դաշնակցության ասրած քաղաքականությամբ։ Հնդկաստանն ավե-

լի բռնակալ բեժիմի տակ է գտնվում, քան Տաճկահայաստանն էր՝ տաճիկների ժամանակ։ Որինակ, վոչ մի հնդիկ չի կարող մտնել վագոն, նախքան անգլիացու մուտքը։ Բայց այսօր ազգային հեղափոխական շարժումը տարվում է այնտեղ համահնդկական մաշտաբով պրոլետարական հեղափոխության հետ մեկտեղ։

Ընկ. Բակունցն ասաց, վոր կամավորական շարժումը Ազգային Խորհրդի թելադրությունն եր և վոչ մեր կուսակցության։ Ազգային խորհուրդը մի բուրժուական կազմակերպություն եր. նա կարող եր այդ անել. իսկ քանի վոր Դաշնակցությունը սոցիալիստական կուսակցություն եր, ինչու գնաց նրա յետևից և վոչ մյուս սոցիալիստական կուսակցություններին։ Դաշնակցությունը մանր բուրժուական կուսակցություն է այդ պիտի ասել և իբր այդպիսին էլ նա մասնակցել է ազգային շարժմանը։

Ընկերների մեծ մասը գտնում են, վոր Խորհրդային իշխանությունը պիտի պաշտպանել և ընդունել 3-րդ Ինտերնացիոնալը։ Ընկերներ, յեթե դուք կարդացիք Կոլյունի և Դրոյի դեկլարացիան նրանք էլ նույնն էին ասում։ Այստեղ կան ընկերներ, վորոնք յերբեմն աջ և յերբեմն ձախ են գնում։

Ընկերներ, այս բոպեիս կա հեղափոխական ընդհանուր շարժում։ Այս համագումարը մի հեղափոխական համագումար է, ընտրված մասսայի կողմից։ Դուք պիտի ասեք, վոր ձեր կապերը կորում եք Դաշնակցությունից, Դրոյից և ընկերներից։ Ձեզ չեմ կարող յերևակայել, վոր Դրոյի հետ ձեռք-ձեռքի, կարելի յե աշխատավորական դասը տանել։

Յեթե վերցնեք Դաշնակցության ազգային քաղաքականությունը, կտեսնենք, վոր դա սրի ու հրի քաղաքականություն է յեղել։ Ընկ. Շավարշի նկատողությունը շատ ճիշտ է Մատիայանի մասին։ Մենք այս բոլորը գիտենք, բայց ձեզ անհայտ է։ Մեզ բոլորիս քշել են և ասել. «գնացեք և արեք այսինչը կամ այնինչը» և մենք արել ենք։ Դաշնակցությունը դասակարգային պայքար չի ունեցել և նա յերբեք էլ սոցիալիստ չի յեղել։ Բալախանու ընկերն ասում է, վոր Բալախանում սոցիալիստական աշխատանք է տարվել։ Ձեզ վեց տարի աշխատել եմ այնտեղ և գիտեմ, թե ինչպիսի գործունեություն է յեղել այդ։ 1914 թվի յերկամյա գործադուլին մենք վերջ տվինք, կամավորական շարժման մասնակցելու համար։ 1910—11—12 թվերի մեծ գործադուլներին մենք

չեյինք մասնակցում, վորովհետև Մանթաշեվը հայ եր։ Ցեղել են մամենտներ, յերբ Դաշնակցությունը, այո, մասնակցել է դործադուլներին, բայց մենք յերբ անալիզ յենք անում, պիտի ասենք, վոր Դաշնակցությունը հետեվողական քաղաքականություն չի վարել այդ ուղղությամբ։ Դուք վերցրեք որինակ մենշեվիկական համագումարը։ Չնայած վոր նրանք ավելի սոցիալիստ են յեղել, քան-Դաշնակցությունը, այնուամենայնիվ համագումարը 1905 թվից սկսած մենշեվիկյան կուսակցությունը համարել է հակասոցիալիստական։ Ահա այս բոլոր իրողությունները պետք է ի նկատի ունենանք, վորպեսզի նոր ավանտյուրաների հետեվից չընկնենք (ծ ափ և ը)։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկ. Ավալյանի խոսքը հերթից դուրս եր, դրա համար էլ յես ժողովի կամքը խնդրեցի։ Այժմ այդ խոսքի առթիվ 3 ընկերներ ձայն են ուզում (ձայներ—չենք ուզում. ցանկը կարդացեք), Ազմուկով չի կարելի խնդիրը վորոշել։ (Նախագահը կարդում է խոսք ուզողների անունները։ Ընդունվում է յերբեք չխոսողներին ձայն տալ 15 րոպե, իսկ մի անդամ խոսողին 5 րոպե։)

ԿԱՐՈՑԱՆ.—Յերեկվա ժողովը մեր համագումարի առանցքն եր կազմում։ Ընկ. Փոլյանի զեկուցումից շատ բան եր կոխված։ Յես այդ զեկուցման մեջ մի կարեվոր բաց դուս. նա Դաշնակցության 33 տարվա անցյալը քննադատեց և վոչ մի դրական գիծ չը դտավ այնտեղ։ Չի կարող պատահել, վոր մի կուսակցություն այդքան գործունեություն ունենա և վոչ մի դրական գործ չկատարի։ Ընկ. Փոլյանն այդքան տարի աշխատել է Դաշնակցության մեջ և միայն հիմա իմացավ, վոր նա վոչ մի դրական գործ չի կատարել։ Յեթե դուք բոլորդ նույն դուդուկը փչեք, այս ժողովը կը լիներ ցած. ահա թե ինչու առեղծվեց կենդանի վիճաբանություն։

Ընկերներ, այսոր դուք Պարիզի կոմմունայի տոնն եք կատարում չե թե նրա տված արդյունքի համար, այլ վերգնահատելով նրա դաղափարական բովանդակությունը։ Միևնույնը դուք այսոր անում եք Գերմանական հեղափոխության համար. արդյոք այդ հեղափոխությունը կարելի յե ավանտյուրա անվանել։ Ուրեմն Մանասյորի արշավանքը կամ Կուկունյանի գործերը նույնպես չպիտի դիտել նեղկա ակնոցով. դրանք առաջ են յեկել բնական պատճառով. ահա այս հանգամանքը դուք պիտի նկատի ունենայիք։ Յերեկ խոսակցության ընթացքին, մի ընկեր ասաց. «Յեթե այս բո-

պէյիս անկախ Հայաստանը միայն հասատատուն, միթե չպիտի ատովածացնեյիք Դաշնակցութիւնը»։ Ընկերներ, ուրեմն հետին թվով չպիտի քննադատել։

Շատերն ասում են, վոր Դաշնակցութիւնը մենք չենք։ Վ.ոչ, մենք ենք. յեթե նա հանցավոր է, մենք ենք հանցավոր։ Ընկ. Ավալյանը մեղադրում է Բյուրոյին. յեթե Բյուրոն հանցավոր եր ու քննադատելի, ինչո՞ւ դուրս չեյիք գա Դաշնակցութիւնից, ինչպես այդ արեց Աթաբեկյանը։ (Ավալյանն իր տեղից՝ դուրս եմ եկել)։ Այո, դուրս եք յեկել 20 թվից։

Մարդիկ կան, վոր ասում են, թե 904 թվից զզվել են այդ կուսակցութիւնից. բայց նրանք դուրս են գալիս Դաշնակցութիւնից միայն 23 թվին։ Յես անհատապես այն կարծիքին եմ յեղել, վոր ես կատարել եմ մաքուր գործ, վոր ես բուրժուազիայի համար չեմ աշխատել։ Թեև մեզ պահում եյին գավառներում և շատ դաղտնիքներ չեյին պարզում մեզ, այնուամենայնիվ մենք աշխատել ենք դիտակցաբար հայ ժողովրդի համար, իսկ այդ ժողովրդի 95%-ը կազմում եր գյուղացիութիւնը։ Տաճկահայ դատ ասելով՝ մենք հասկացել ենք նուիրական այնտեղի աշխատավոր հայութեան, առևանգված կանանց ու աղջիկների դատը և վոչ հարուստների։

Այն եվոլյուցիան, վորը մեր մեջ կատարվում է այսոր, շատ բնական է։ Յեթե ինձ 915-ին ասեյին՝ այս ակար կատարիր, յես չդիտեմ ինչ կանեյի։ Յուրաքանչյուր ակտի համար հարկավոր է վորոշ փոփոխութիւն և ժամանակ. այդ փոփոխութիւններն այսոր կատարվել են։ Յես դուցե ավելի արմատական լինեյի, յեթե հնարավորութիւն ունենայի անցյալի բոլոր խնդիրները ավելի խորը քննադատելու։ Մեր լիդերները շատ բան գիտեն, բայց մեզ մի քանի տողով են միայն հայտնում իրանց գիտեցածները։ Մենք այժմ վորոշ գիտենք, վոր Դաշնակցութիւնը չի կարող այլևս անցյալի պես գործել. սա միանգամայն ճշմարտութիւն է։

Ձեր բոլոր բանաձևերը անպետք են, յեթե դուք ձեր գործով չատացուցանեք այդ։ Մենք մեր բոլոր ուժերը ի սպաս ենք դրել Խորհրդային իշխանութեան շինարարական գործին։ Մենք մեր բանաձևերից հետո պիտի ասենք. «Մենամարտի յենք հրավիրում բոլոր սոցիալիստ ընկերներին, ցույց տալու համար թե մեզանից ով ավելի ազնիվ ու արտանց կաշխատի այս յերկրի համար (բուռն ծափեր)։

ԿԱՐԻՆՅԱՆ.—Ընկ. Ավալյանի խոսքերը ճնշող տպավորություն թողին ինձ և հավանաբար ձեզ վրա (Ձայներ. դուր եք կարծում)։ Մենք բոլորս լեկել ենք այնպիսի կուսակցության կողմից, որ գերազանցապես հեղափոխական և յեղել։ Մենք լեկել ենք ասելու մեր հոգու խորքերից բղխող խոսքեր։ Ընկ. Ավալյանը չպիտի ասել թե Դարբինյանի և Կորյունի շունչն և փչում այստեղ. այդ ժամանակ այս համագումարը հեղափոխական ժողով չեր լինի (Ձայներ. Նա ասել և վորոշ մասի համար)։ Ինչպես ընկ. Կարոյանն ասաց, մենք համոզված ենք քննադատում։ Սակայն ընկ. Կարոյանի մի ասածին ես համաձայն չեմ. այն՝ վոր այստեղ ամենից շատ քննադատողները արտասավորներն են ու Դաշնակցության վրա բիծ դրողները։ Վոչ, դա սխալ է։ Այստեղ լեկածները բոլորն էլ շարքային ընկերներ են, վորոնք իրենց զղվանքն են հայտնում արտասահմանյան կուրսի մասին։ Այս համագումարը քննադատելով անցյալը, կատի իր գնահատականը Դարբինյանների և Դրոյի մասին։ Մենք մեր վճռական խոսքը պիտի ասենք ընկ. Ավալյանին և ընկերներին, վոր այս շարժումը չի նմանում Միհրանական անջատական շարժումներին։ (Ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկ. Ծովյանն ուզում է մի հայտարարություն անել (Աղմուկ) Ընկ. Ծովյանը հրաժարվում է։

ՓՈՂՅԱՆ.—Յերբ իմ զեկուցումն սկսեցի, ձեզ ասացի, վոր շատերի համար իմ զեկուցումը կլինի նորություն կամ գուցե կթվի խորթ։

Իմ զեկուցման մեջ ես դրի գլխավոր հիմքերը, վորպեսզի լուրջ վիճաբանություններ սկսվին։ Ինձ վրա Բյուրոյի կողմից պարտք եր դրված զեկուցելու Դաշնակցության իդեոլոգիայի մասին և շոշափելու նրա պատմությունը, ինչքան դա կապ ուներ իմ նյութի հետ. ուրեմն ես լայն ծավալ չեյի կարող տալ այդ պատմություններ։

Պատասխան ընկ. Բակունցին.—Այո, ես ել եկել եմ այստեղ ձեզ հետ բաժանելու այն քաղաքականությունը, վոր Դաշնակցությունը տարել և մինչև հիմա. յես հետին թվով քննադատողներից չեմ։

Ասում են Դաշնակցությունը իր անցյալում յեղել և պատմական անհրաժեշտության հետևանք. դա ճիշտ է. բոլոր շարժումները, վորոնք ուղղված են յեղել ավատական սիստեմների դեմ, կրում են հեղափոխական բնույթ։ Այդպես եր և Պարսկաստանի շարժումը։ Դաշնակցության շարժումը բուրժուական շարժում եր. դա պետա-

կան հիմնավորումն է նրա մասին և այստեղ չերբեք վիրավորական բան չկա։ Ընկ. Բակունցն ասում է. «Կամավորական շարժումը համաժողովրդական շարժում եր, վորի հաժար չի կարելի մեղադրել Դաշնակցությանը»։ Դա ավելի վատ՝ Դաշնակցության հաժար, յեթե նա վերցնում է բուրժուազիայի ստեղծած շարժումը. ինչ անուն կարելի յե տալ ուրեմն այդ տեսակ դաշնակցական սոցիալիզմին։ Դաշնակցությունը պիտի գիտակցեր այդ շարժման վնասը և չղեկավարեր նրան։ Հեղափոխական կուսակցության նպատակը պիտի լինի չե թե ժողովրդի յետեվից գնալ, այլ ժողովուրդը քաշել իր հետեվից. այսպես արավ հեղափոխական կուսակցությունը Բրեստ-Լիտովսկու ժամանակ, Ռուսաստանում, չթողնելով կոտորել գերմանացիներին։ Ընկ. Բակունցը հարցնում է. «Յեթե կամավորական շարժումը չլիներ, թուրքերը չեյին կոտորի հայերին». (Ձայներ—կկոտորեյին)։ Այո, յես այդ գիտեմ, վոր Սուլթանի քաղաքականությունը հայերին ջնջելն եր. բայց կամավորական շարժումը ավելի յուղ ածեց նրա կրակին. գուցե առանց այդ շարժմանը տաճկահայերին միայն գաղթեցնելին ուրիշ վայրեր և չկոտորելին։ Յես գըտնում եմ, վոր մենք հավասար չափով մեղավոր ենք կամավորական շարժումը չկանգնեցնելու համար։ Մարգարյանալու կարիք չկար, փաստերը ցույց եյին տալիս այդ շարժման տխուր հետեվանքները. դեսպանները զգուշացնում եյին մեզ, բայց մենք չեյինք զգում։

Ընկ. Բակունցն ավելի հիմնական մի հարց դրեց, թե յեթե Դաշնակցությունը մանր բուրժուական կուսակցություն է, և այդ կուսակցությունն այսոր մեռնում է, ապա մանր բուրժուան ել մեռնում է նրա հետ։ Չի կարելի հարցն այդպես դնել։ Դաշնակցության մեծ մասը աշխատավորական է, վորոնք և հավաքվել են այստեղ. իսկ մանր բուրժուական տարրն այստեղ չե։ Յեթե քաղաքական-տնտեսական ներկա պայմաններում այդ խավը գլուխ չի բարձրացնում, դա չի նշանակում, թե չերբեք ել չի բարձրացնելու (Ձայներ—Այդ չի կարող լինել, յեթե բարձրացնի կփշրվի)։ Այդ կարող է լինել, պետք է առն դատել յերեվույթները, ուրիշ խնդիր է թե լինելուց հետո կփշրվի։

Գործի և մտքի հակասություն է՝ ասել, թե Դաշնակցության անցյալը անարատ լինելով և նրա սխալները օբյեկտիվ պայմանների հետեվանք լինելով, չպիտի քննադատենք, և առանց քննադատելու՝ մեզ հայտարարենք կոմինտերից Սորերդային իշխանության

և 3-րդ Ինտերնացիոնալին։ Դրոն ու Կոբյունն էլ նույնն էին ասում։ Մենք մոռանա, որ Դաշնակցությունն այսօր էլի ձեծում է Ցեվրոպական բուրժուազիայի դռները. ահա այդ է քննադատելու։ Մենք պիտի հայտարարենք, որ ազգային հարցերը միայն պրոլետարական հեղափոխության միջոցով կլուծվի։ Բուրժուազիայի կողմից դեկավարված ազգային շարժումների հաղթանակը միշտ էլ մեռացել է բուրժուազիայի ձեռքին, թեև դրանց մասնակցել է նույնպես պրոլետարիատը։

Մի ընկեր ասաց, որ Դաշնակցությունը ապադասակարգային է։ Ես էլ նույնն եմ ասում, ուրեմն Դաշնակցությունը սոցիալիստական կուսակցություն չի եղել. այդ նույն միտքը հաստատվեց Վիեննայի խորհրդաժողովում։ Այստեղ մի նուրբ խնդիր էլ կա, եթե Դաշնակցությունը նույնիսկ սոցիալիստական լիներ, մենք նման սոցիալիզմից պիտի հեռանայինք, քանի որ նա ուզում էր այդ սոցիալիզմի անվան տակ հաշտեցնել հայ դասակարգերը։

Սխալ է ընկ. Բալասբեկյանը, կարծելով, որ ես Սուլթանի հայաջինջ մեղքերը դնում եմ Դաշնակցության վրա։ Ես գիտեմ, որ Սուլթանն ուներ արդեն այդ քաղաքականությունը, իսկ Դաշնակցությունն առիթ եր տվել։

Ես քննադատներից չլսեցի, թե իմ ասածները ինչքան հիմնավոր էին. ես լսեցի միայն նախատինքներ։ Իմ նպատակը չի պրոպոկանդա անել այստեղ. այնուամենայնիվ ես Դաշնակցության դրական կողմերը չեմ ուրանում, որ նա դպրոցներ է բաց արել, հայ կուլտուրայի մասին մտածել և այլն. (Ձայներ-թող առաջ ասելիք)։ Իմ նպատակը Դաշնակցության քաղաքական-սոցիալական կազմը պարզելն եր։

Գալով ազգային խնդրին, ես գտնում եմ, որ հայ աշխատավոր ժողովրդի շահերը կապված են սոցիալական հեղափոխության, բանվորական իշխանության ամրապնդման հետ (Ձայներ-ճիշտ է. ծափեր)։ Եթե ճիշտ է, ուրեմն և մեր ուղին պարզ է։ Անցյալի մեր սխալ ուղին այժմ մենք շտկում ենք։ Եթե իմ ասածների ճշմարտության մասին կասկածում եք, մի քանի ամսից կիմանանք. (Ձայներ-գիտենք. ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.—Նիստը հայտարարում եմ փակված։

Նիստը փակվում է ժամը 12-ին.

ՅԵՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Համագումարի 7-դ և վերջին նիստը կայացավ նոյեմբերի 23-ի յերեկոյան ժամը 9-$^{1}/_{2}$-ին բանվորական ակումբի դահլիճում։ Նախագահում եր ընկ. Ա. Բակունցը։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ. այսօրվա որակարգի հարցերն են բանաձեվերի ընթերցումն ու ընդունելը։ Մենք ունենք յերկու բանաձեվ, վորոնցից մեկը վերաբերվում է Դաշնակցության վերագնահատության։ Այս բանաձեվը ընդունված է Բյուրոյի կողմից միաձայն և առաջարկվում է ձեզ ի հաստատություն։ (Ընկ. Բակունցը կարդում է բանաձեվը Դաշնակցության վերագնահատության մասին, վորի յուրաքանչյուր հոդվածի ընթերցումից հետո տեղի յե ունենում յերկարատեվ ծափեր և բացականչություններ. «ճիշտ է, ճիշտ է»։ Բանաձեվը տես կցված)։ Ընկերներ քվում յեք բանաձեվը համարել ընդունված։ (Բանաձեվը ընդունվում է կատարելապես միաձայնությամբ)։ Ընկերներ նախ քան 2-դ բանաձեվին անցնեմ, պետք է հայտարարեմ, վոր Բյուրոն վորոշել է համագումարի անունից Հայաստանի Կոմ. Կուսակցության կենտրոնական Կոմիտեին ներկայել մի կարմիր դրոշակ։ (Վորոտընդոստ ծափեր, կեցցե, կեցցե)։ Քվում յեք անցնել 2-դ բանաձեվին՝ վոր վերաբերում է ընկ. Մռավյանի գեկուցմանը։

Պ. Տ. ՊՈՂՈՍՅԱՆ.—Ընկերներ ես կրկին հիշեցնում եմ ձեզ, վոր այս բանաձեվը ձեզ մոտ մի անգամ կարդացվել է, իսկ այժմ կարդում եմ ձեր արած հավելումներով։ (Կարդում է 2-դ բանաձեվը, տես կցված. ժողովականները կոչում են բրավո, կեցցե)։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ. չնայած այս բանաձեվի մեջ ձեզ համար նորություններ չկան, բայց և այնպես ձեվականությունը հարգելու համար քվում յեք քվեարկել։ (Բանաձեվը քվեարկվում է և առանց մեկի ձեռնպահության և դեմ լինելու անցնում է միաձայնությամբ)։ Անցնում ենք հերթական հարցերին։ Համագումարին առաջարկ կա համաձայն ժեր վորոշումների մի կոչ խմբագրել և ուղարկել այն դաշնակցականներին, վորոնք շարունակում են տատանվել, բայց իրենց անցյալ հեղափոխական գործնեությամբ ար-

ժանի յեն մտնելու մեր շարքերը (ծափեր)։ Կոչի խմբագրումը առաջարկվում է հանձնել պրեզիդիումին (անցնում է)։ Դուցե ուրիշ միջոց կառաջարկեյիք։ (Առաջարկ չկա) Ուրեմն կոչի խմբագրումը կկատարվի, հիմք ունենալով մեր ընդունած բանաձեվերը։

ՍԱՄՈՒՆՑԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.—Մի առաջարկ ել պետք է անել նրանց մասին, վորոնք շահագործում են մեր անունները (ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.—Այդ մասին պիտի պատասխանեմ, վոր 2-դ Ինտերնացիոնալի մասին խոսելիս մենք դեմ ենք արտահայտվում նրան։

ՁԱՅՆԵՐ.—Կորչի 2-դ Ինտերնացիոնալը։

ՆԱԽԱԳԱՀ.—Մենք մեր կապերը վաղուց ենք խզել նրա հետ, այժմ ձեվակերպում ենք մեր վերաբերմունքը։ Ընկերներ, մի քանի պատգամավորների կողմից առաջարկ է ստացված ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մեր մի քանի ընկերները վորպես քաղաքական հանցավորներ մնում են բանտերում և բաժանում են մեր այժմյան տեսակետները, խնդրել համագումարից, վորպեսզի միջնորդի ազատ արձակել այդ ընկերներին, վորոնք կգործեն մեզ հետ։

ՁԱՅՆԵՐ.—Դրան պետք է ավելացնել նաեվ աքսորվածների մասին։ Այո, այո։

ԲԱԼԱՍՅԵԿՅԱՆ.—Հայաստանի տերրիտորիայի վրա, հայ գյուղերում կան բազմաթիվ գյուղացիներ, վորոնք սոցիալիստական աշխատանք են կատարել, բայց այժմ զրկված են ընտրական իրավունքից։ Պետք է վերականգնել նրանց իրավունքները (Համաձայն ենք, համաձայն ենք)։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ Բյուրոյի դիմումի համաձայն ընկ. Լուկաշինը գալու յե վողջունելու մեր համագումարը։ Թույլ տվեք հայտարարել 5 րոպե ընդմիջում։ (Յերկարատեվ ծափեր)։

ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՆԱԽԱԳԱՀ.—Նիստը հայտարարվում է վերսկսված։ Դուք հիշում եք, վոր համագումարը առաջարկեց ընկ. ընկ. Լենինին Տրոցկուն և Զինովեվին համագումարի անունից վողջույնի հեռագրեր ուղարկել։ Այժմ կկարդացվեն հեռագրերը։

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ.—(Կարդում է վողջույնի հեռագիրը։ Տես կցված։ Համագումարը վորոտընդոստ ծափերով իր համաձայնությունն է հայտնում)։

ՆԱԽԱԳԱՀ.—Խոսքը պատկանում է ընկ. Լուկաշինին։ (Ընկ.

Լուկաշինն ընդունվում է բարձրակոչ ուռաներով և կեցցեներով, յերաժշտախումբը նվագում է Ինտերնացիոնալ)։

ԼՈՒԿԱՇԻՆ. – Ընկերներ. Թույլ տվեք Հայաստանի Կոմմունիստական Կուսակցության և նրանով ղեկավարվող Հայաստանի Խորհրդային իշխանության անունից վողջունելու ձեր այս հազվադյուտ և պատմական համագումարը (ծափեր)։ Մեր հայկական իրականության մեջ հայ աշխատավորական մասսաների քաղաքական կյանքում ձեր համագումարը գալիս է մի քանի տասնամյակ տարիներով հաշվող ետապ բոլորելու և Հայաստանի աշխատավորությունը, նրա բանվորն ու գյուղացին իր իսկ ուղին բռնելու միացյալ աշխատավորների կողքին։ Այսօր յեթե խորը և անվերապահ կերպով նայենք ձեր համագումարի եյության ու քաղաքական նշանակության աշխատավորության շահերի տեսակետից, պետք է շեշտենք, որ դուք գորպես ներկայացուցիչներ 4.000 նախկին ակտիվ գործող կուսակցական ընկերների ասում եք այն, ինչի նա իր կյանքի ուղիով մանավանդ վերջին տարիներս արդեն հանգել է։ Ձեզնից առաջ և ձեզնից անկախ այդ խոսքն ասված է այն աշխատավորների կողմից, որոնք թոթափել են հինը և թեվակախել նորը՝ խոր հավատով դեպի հեղափոխության դրոշակը։ Բայց դուք գալիս եք կազմակերպված ձեվով ասելու այն, ինչ կյանքում բոլորված է։ Սա մի շեշտված փաստ է։ Մեր իրականության մեջ ձեր համագումարը հայ աշխատավորության բանվորա-գյուղացիական մասսաների ներքին բեկման արտահայտությունն է, որը շեշտված ձեվով ասում է բոլոր նրանց, ովքեր դուրս են մեր հայրենիքից իր հուժկու և վճռական խոսքը, թե որն է այն ուղին, որով նրանք պիտի գնան։ Դուք գիտեք, որ արտասահմանում, որտեղ մենք ունենք հազարավոր բանվորներ հեշտ չե գոյություն ունեցող բեժիմի տակ հարցերը դնել և պարզաբանել, ներշնչվել նոր վոգով և վերադնահատել անցած ուղին։ Մեզ մոտ թե փաստերով և ամեն ինչով աշխատավորությունը տեսնում է իր ձգտումների իրականացումը, իսկ արտասահմանում, մանավանդ Ամերիկայում թափված մասսաները հնարավորություն չունեն իրենց աչքերը բանալու և պրո և կոնտրա վերագնահատելու վերջին 10 տարին։

Ձեր համագումարի վորոշումները ու հրահանգները, նրա հայտարարությունները այն հուժկու ժոիչ ուժն ունեն, որոնք բխում են Դաշնակցությունից հեռացող աշխատավորական մասսայից, որոնք

արտասահմանի բանվորներին ցույց են տալու իրենց ուղիղ ճանապարհը, որով նրանք գնալու չեն ապագայում։ Սա յերկրորդ նշանակությունն է ձեր համագումարի գործունքների։ Մեզ կոմմունիստների համար բացարձակապես ասում եմ, որ այն ելեմենտները, որոնք կազմում են նրա հենարանը, վաղուց են հանգել այդ յեզրակացության։ Մի խոշոր փաստ է այն հանգամանքը, որ աշխատավորական մասսան և գալիս բաժանելու մեր ուղին, այն մասսան, որն իր ժամանակին որպես ակտիվ ելեմենտ իր կարքին մտել է Դաշնակցության շարքերը և մեղքը նրանը չէ, որ չի կարողացել ուրիշ շարքեր մտնել (ծափեր)։ Վորովհետև տիրող կուսակցությունը ուներ բավականին ուժեղ միջոցներ, որպեսզի պահեր այդ տարրը։ Մեզ համար գաղտնիք չէ, որ աշխատավորական մասսաները Դաշնակցության մեջ մեծագույն մասով կարծել են, թե գնում են հայ աշխատավորության շահերը պաշտպանելու։ Յեվ այն հանգամանքը, որ նրա մեջ կան խոշոր քանակությամբ, թույլ ավեք ասել, փչացած տարրեր, խանգարել են առաջինների ցանկությունները։ Սակայն գնահատելի չեն մեզ համար բոլոր նրանք, որոնք Դաշնակցության մեջ ունեցել են սոցիալիստական գաղափարներ։

Այնու հանդերձ կուզեյի յերկու խոսքով կանգ առնել ազգային հարցի վրա, որի վրա դուք յերեվի կանգ առաք։ Մեր թշնամիները շատ հազվագյուտ դեպքերում անգիտակցաբար հայտարարում են, թե մենք ազգային խնդիրի մեջ դոնքիշոտներ ենք և չենք տալիս նրան իր նշանակությունը։ Յես կարծում եմ, որ դուք իրոք այս վերջին յերեք տարում տեսել և դիտել եք մեր քաղաքականությունը. արդյոք մենք ունենք ազգային քաղաքականություն, տալիս յենք նրան խոշոր նշանակություն, նա մեր դործնական ծրագրի մի կետն է թե վոչ։ Յեթե պատասխանեք, կասկածից դուրս է, որ պիտի ասեք՝ այո։ Բոլոր կոմմունիստական կուսակցությունների համար առաջնակարգ խնդիր է ազգային հարցը, նրանք զբաղվել են և պիտի զբաղվեն նրանով, մինչեվ որ հաղթական թափով անցնելով կմտնենք աշխատավորական ընտանիքի մեջ և յերբ ազգերը կդադարեն գոյություն ունենալուց։ Այժմ այն հարցը, թե ինչպես յենք դնում մենք ազգային հարցը և թե ինչպես է դրել Դաշնակցությունը։ Մենք հարցը դնում ենք այնպես, որ նա կապվում է միջազգային հեղափոխության բախտի հետ (ծափեր)։ Այս ասելով մենք դուրս

ենք շպրտում հարցի լուծման մյուս հնարավորությունները՝ ինչպես հարցի լուծումն բուրժուական պետությունների միջոցով և այլն։ Մանավանդ հայկական հարցը, որ Անտանտայի կողմից յերբեք չեր կարող գործադրվել և հասնել իր նպատակին։ Հակադիր կարծիքը մանր ազգությունների ազատագրության մասին, նրանց լուծումը բուրժուական կարգերում անհնարին է։ Յես կուզեմ կարճ ասել։ Շատ անգամ բուրժուական կուսակցությունները որինակ են բերում Հունաստանը, Բոլղարյան և ասում, ապա ինչու Հայաստանն ել չպետք է անկախություն ստանա։ Այս հարցին պատասխանելու համար պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ ցցված է մեր առաջ. դա ներկայիս բուրժուական պետությունների անհաստատ գոյությունն է։ Չկա մի բուրժուական պետություն, որն ամուր լիներ և հետեվեր ազգային հարցի լուծմանը։ Մեր լեզվով աշխատավորական մասսաները պրոլետարյատը ու գյուղացին հասել են այն շրջանին, յերբ հնարավորություն ունեն քանդելու բուրժուազիայի հիմունքները։ (Ծափահարություններ, յերաժշտախումբը նվագում է Ինտերնացիոնալ)։ Այն հանգամանքը, որ այսոր ամբողջ աշխարհը բաժանված է յերկու մարտնչող մասերի, արդեն փաստ է և այդ պայմաններում ծնացած գույները հետզհետե հալվում են այդ յերկուսից վորեվե մեկում տեղ գտնելով։ Վորն է այն բանակը դրանցից, վորի մեջ հայ աշխատավոր մասսան իր շահերի համաձայն տեղ է բռնելու։ Հարցն այսպես է դրված, վոչ միայն Ռուսրդային յերկրներում, այլ և յեվրոպական և վոչ յեվրոպական աշխատավորության շարքերում։ Ազգային հարցի մասին բուրժուական կուսակցությունների տված հարցերը լուծվել են այն որից, յերբ առաջացել է կոմմունիստական կուսակցությունը։ Սրան պիտի պատասխան տրվի հասարակական բոլոր խավերի և ամենավերջին աշխատավորի կողմից, ոչ կամ այն ճանապարհը բռնելու համար։ Յես չեմ վերագնահատում ձեր կուսակցության գործնեությունը, միայն կասեմ, վոր հարցի լուծումն նրա մոտ դրված է յեղել դիպլոմատիական և իմպերիալիստական ուժերի քաղաքական-ռազմական փոխհարաբերությունների մեջ։ Դուք այդ քաղաքականության հետեվանքները քննած և վորոշ յեզրակացության հանգած կլինեք։ Կասկածից դուրս է, վոր նման քաղաքականությունը 100 տոկոսով, վոչ աշխատավորական բնույթ ունի։ Յեթե դեկավար ուժեր լինեն, վորոնք կցանկանան այդ քաղաքականությունը տանել,

այնպես ինչպես արտասահմանի Դաշնակցությունը, ձեր պարտքն է նախ և առաջ կորուկ և վճռական ձեվով ասել, որ դա հանդգնանք է աշխատավորության շահերի տեսակետից։ Ազգային հարցն այսօր կարող է իսկական աշխատավորական հունի մեջ մտնել, և լուծվել այդ չափով մենակ և մենակ Յ-դ Ինտերնացիոնալի միջոցով և նրա այն ուժերի, որոնք այժմ գործում են (ծափեր)։

Թույլ տվեք չերկու խոսքով ծանրանալ ազգային հարցի լուծման այն կոնկրետ հանգամանքի վերա, որը գոյություն ունի մեր չերկրի սահմաններից դուրս։ Մեր չերկրի սահմաններում այդ աշխատանքների վկաները դուք եք։ Ինչ ենք անում մենք, արդյոք վտանգում ենք ազգային շահերը, չենք հետապնդում նրա լուծմանը աշխատավորության շահերի տեսակետից։ Մեր պետական տնտեսական կազմը ազգային գունավորմամբ ասենք, որ վերջին չերեք տարում, զոչ թե կենսական շահ, այլ և հետին չերկրորդական խնդիր վտանգելիս չի արել, այլ պաշտպանել է։

Մեր հակառակորդները ասում են, թե մենք ծախեցինք Հայաստանի անկախությունը։ Նրանք աչքի առաջ ունեն նախկին ձեվական անկախությունը։ Նրանք ասում են, թե հայ աշխատավորության շահերը դուք ծախեցիք այլ շահերի։ Մեզ համար պարզ է և չես ասում եմ անվերապահորեն, որ ձեվական անկախություն մենք չունենք և ավելին չենք ել ուզում ունենալ, որովհետև պարզ է, որ չեթե յուրաքանչյուր աշխատավորական պահված հոգուտ նոր աշխարհի բաժանում է իր ուղին, շեղել նրան, կլինի միամտություն և վատ դեպքում դավաճանություն։ Մեր առաջին քայլն է շաղկապել մեր ուժերը մեծ և աշխատավորական ուժերի հետ և չեթե դա է խախտումը, այո խախտել ենք և պիտի խախտենք։ Չեթե կուլտուրայի, ստեղծագործության, լեզվի և վորեվե ազգի հոգեբանության հետ կապված աշխատանքների մասին խոսք լինի, մենք պիտի պատասխանենք, թե ասում եք, վորովհետև այդ ուղղությամբ չեթե աշխատանք կատարված է, կատարված է միմյան Սորվրդային իշխանության ժամանակ (ծափեր)։ Ճիշտ է, ժամանակ չունենք լայնացնելու մեր աշխատանքները, վորովհետև աղքատ ենք, բայց մենք չենք անտեսում կարևոր պահանջները։ Մեր դպրոցներում մինչև այժմ աշխատանքները տարված են միմյան քաղաքում և զոչ գյուղերում։ Մենք մտնում ենք նաև գյուղերը և կատարյալ իրավական քաղաքացիներ դառնալու հնարավորություններ տալիս

յերիտասարդներին, ծերերին և բոլորին։ Այս տեսակետից մեր կուլտուրան տարբերվում է բուրժուական կուլտուրայից։ Մենք այլ ոգով ենք դաստիարակում մեր քաղաքացիներին, բայց պահանջել որ աշխատավորությունը կատարի այն, ինչ բուրժուազիան է ցանկանում, անկարելի է։

Մեր անկախության վերաբերյալ թույլ տվեք յերկու խոսք էլ ասել։ Վորն է այն հանրապետության ձեվական անկախությունը, վորի անցյալի նմուշներից մենք գիտենք։ Մենք անկախություն չենք ունեցել։ 1918-20 թվերին Հայաստանը ապրել է «բուրժուական» անկախությամբ։ Դուք տեսած և լսած կլինեք, վոր բավական կլիներ մի անգլիական մայորի կամ ստոր աստիճան ապայի ապառնալիքը, վորպեսզի անմիջապես կառավարության նիստ հրավիրվի այլ լկտի մայորի պահանջները բավարարելու համար։ Նման անկախություն մենք չենք ուզում։ Դուք ավելի լավ գիտեք, քան ես նման փաստերի մասին, վորովհետև շատերդ ականատես եք յեղել և այդ փաստերը պետք է հրատարակել, թե Հայաստանի այսպես կոչված տերը ինչպես եր չոքում մայորների և ապաների առաջ։ Ժողովրդային Ռուսաստանի կենտրոնից յեկած մի ագենտ, թող փորձեր մի նման հարց դնել, և դուք կտեսնեիք, թե ինչպես նա անմիջապես կձերբակալվեր, վորովհետև Կոմ. կուսակցությունը յերբեք համեմատության չի դրել խոշոր և մանր յերկրների ուժերի փոխհարաբերությունները, այլ ելակետ է ունեցել աշխատավորության շահերի լուծումը։ Մեր պետական աշխատանքների մեջ չեմ սխալվի յեթե ասեմ, վոր մենք մեր բախտը տնօրինելու մեջ 99 տոկոսով լիովին անկախ ենք Ժողովրդային Միության մեջ։ Մենք կախված ենք նրա գանձարկղից, վորովհետև նա մեզ պետք է, կախված ենք որենսդրական և աշխարհագրական տեսակետներից։ Փաստերի վրա յերկար կանգ չեմ առնում, բայց ասեմ, վոր մեր բախտը տնօրինելու գործում չի յեղել վորևէ արտաքին ճնշում, ինչպես բուրժուական յերկրներում։ Արտաստմանի դաշնակցականները որինակ են բերում Լեհաստանը, Բոլղարիայի և Հունաստանի անկախությունը։ Լեհաստանը այժմ գտնվում է Ֆրանսիայի կոշիկի տակ, և ապառում է մի 100 ֆրանկի և այն էլ Ֆրանսիայի կամքը կատարելու համար։ Լեհաստան չի մտել վոչ մի գյուղատնտեսական գործիք, այլ բերվածները բոլորը հին խլամ, զինվորական պահեստների մնացորդներն են։ Սա է այն անկախությունը, վոր մենք չու-

նենք։ Մեր անկախությունը նման չե այդ անկախություններին, վորովհետեվ նա աշխատավորական ե (ծափեր)։

Վերջին ցավոտ հարցը միացյալ և անկախ Հայաստանի հարցն ե, կամ դուրս գցելով բոլոր ավելորդ խոսքերը, Տաճկա-Հայաստանի հարցը։ Դաշնակցությունը իր քաղաքականության միջոցով այդ հարցում յեվս կախված ե յեղել Անտանտայից, համարյա թե այն պատճառով, ինչպես ասել ե Ալրիմյանը, վոր բարի քրիստոնյական պետություններ են։ Կասկածից դուրս ե, վոր յեթե 18 թվին Անտանտան գար և 4-5 վիլայեթ տար Դաշնակցության, սոցիալիստական հեղափոխության առաջին իսկ քայլին պետք ե վերացներ նրան, ինչպես և նրա հեղինակ Անտանտային։

Այդպիսով նրանք մի աչկակապություն արին և վոճրագործ քայլ։

Իսկ ինչպես ե դնում այդ հարցը Ալորհրդային իշխանությունը, իհարկե վոչ այնպես, ինչպես կապիտալիստական պետությունները։ Մենք առանց մանրամասնությունների պարզապես ասում ենք, թե յեթե կա այդ հարցը, նրա լուծումը անպայմանորեն կապված ե Արեվելքի աշխատավորության (ծափեր)։ Մեր քաղաքականությունը հետեվողական ե, լավագույն և հեղափոխական ճանապարհը մասսաների ազատագրության ընդհանուր ուղին գտնելու տեսակետից։ Այստեղ ես ազատորեն հայտարարում եմ, վոր յեթե հարցը ուժով լուծելու լինելիքնք, այդ ուժը չեր պակասի և չի պակասում Ալորհրդային իշխանությանը, բայց այդպես մենք չենք անի, վորովհետեվ դա հակառակ և աշխատավորության կամքին, կվարվենք շատ մեղմ, վորովհետեվ այդ և պահանջում աշխատավորության կուլտուրական զարգացման գերագույն շահը։ Ազգային հարցի լուծումը տեղի յե ունենալու ամբողջ Յեվրոպայում և Ասիայում հեղափոխության հարցի լուծումով։ Այս ե մեր տեսակետը։ Ձեր համակրությամբը անվերապահորեն սակը վերագնահատության յենթարկելով Դաշնակցության գործնեությունը իր վորոշակի խոսքն և ասել։ Դուք, վոր յերկար տարիներ աշխատել եք այդ կուսակցության մեջ, ձեզ համար գուցե դժվար լինի նրա ամբողջ գործնեությունը այժմ հրապարակի վրա դնել, բայց և այնպես պետք ե սառնասիրտ լինել, վորպեսզի հիասթափում չլինի։ Այսպիսով վերջացնելով իմ խոսքը, յես շնորհավորում եմ ձեր համագումարը, դնելով, վոր նա մի խոշոր յերեվույթ ե հայ աշխատավորության կյանքում և

ներկայացնում է իրենից մի ուժ կուլտուրական տնտեսական և նույնիսկ ռազմական, յեթե դրա կարիքը լինի, վորպեսզի Միջհրդային հանրապետությունների աշխատավորության հետ միասին ապահովի հեղափոխության հաղթանակը, վոր միաժամանակ հայ աշխատավորության հաղթանակն է։ (Աղմկահույզ և յերկարատեվ ծափահարություններ։ Ցերաժշտախումբը նվագում է Ինտերնացիոնալ)։

ՆԱԽԱԳԱՀ Ա. ԲԱԿՈՒՆՑ.—(Կարմիր դրոշակը համապատասխան վերտառությամբ ընկ. Լուկաշինին պարգելով)։ Ընկ. Լուկաշին, նախկին շարքային դաշնակցականների համագումարի կողմից Քուլ տվեք ի դեմս ձեզ Հայաստանի Կոմ. Կուսակցությանը նվիրելու պրոլետարիատի դրոշակը և Թող նա լինի լավագույն գրավականը համագումարի պատգամավորներից, վորոնք ուղարկված են Հայաստանի բոլոր հեռավոր գյուղերից, այն բանի, վոր յերբ բանվորագյուղացիական իշխանությանը վորեվե վտանգ սպառնա, մենք կբթափենք մեր արյունը հանուն հայրենիքի և նրա լավագույն զավակների հաղթանակի։ (Ծափահարություններ և Ինտերնացիոնալ)։

ԼՈՒԿԱՇԻՆ.—Այսոր կոմմունիստական կուսակցությանը դուք նվիրում եք մի դրոշակ, կարմիր ալ գույնի, վորը ձեզ և ձեզ ուղարկողների համար անպայման պատիվ է բերում, բայց գլխավորաբար դա մի չտեսնված և ծանր պարտականություն է դնում ձեզ վրա և կասկածից դուրս է, վոր հայ աշխատավորության դեկավարին նվիրվում է այս դրոշակը, ըմբռնելով նրա եյությունը։ Կուզեյի շեշտել միաժամանակ, վոր ձեզնից պրոլետարիատը սպասում է իր ապագա հույսերի իրականացումը։ (Ձայներ՝ պատրաստ ենք, Ինտերնացիոնալ)։ Քուլ տվեք գոչելու իր անցյալ մտայնությունից ազատագրված և նոր յեկող գումարտակի, համագումարին՝ կեցցե այն Դաշնակցությունը, վոր չի լինելու այլեվս Դաշնակցության հետ։ (Բուռն ծափեր, Ինտերնացիոնալ, կեցցե Կոմկուսը, կեցցե համաշխարհային պրոլետարիատի հաղթանակը, կեցցե 3-դ Ինտերնացիոնալը, կեցցե ընկ. Լուկաշինը, կեցցե Լենինը, կեցցե մեր համագումարը)։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ այստեղ ստացված է մի նամակ (նամակը տես կցված։ Կարդալուց հետո կեցցեները)։ Ստացված և նամակը մեզ կցված է մի դիմում, վորով առաջարկվում է Պարսկաստանում և այլ վայրերում գտնված այն տարագիր ընկերներին, վորոնք բաժանում են մեր տեսակետները, որ առաջ տեսնել մեզ մոտ (ծափեր)։

ՐԱՇԻԴ.—Ընկերներ, կարմիր Բագուն յեվս գալիս է ընդառաջելու հանուն կոմմունիստական Ինտերնացիոնալի միանալ պրոլետարիատի հետ և չախչախել ֆաշիզմը (ծափեր)։

ԲԱՆՎՈՐ ՎԱՀԱՆ.—Ընկերներ, Բագվի բանվորության կողմից ես շնորհավորում եմ այս պատմական և գեղեցիկ որը։ Շարունակվում է նորից հեղափոխությունը, շարունակում ենք պատերազմը և մեր կուլտուրական զարգացումը։ Վերջապես եկավ այն որը, յերբ գյուղացին ու բանվորը զգաստացան և մոտեցան Ինտերնացիոնալին։ Մենք ել գենքը հետներիս միանում ենք նրան դիմադրելու ֆաշիզմին, վորն ուզում է մոտենալ։ Դրա հետ միասին մենք ասում ենք մեր լոզունգները, կամ մահ կամ ազատություն։ Մենք պատրաստ ենք դիմադրելու ֆաշիզմին, յեթե նա դուրս գա մեր դեմ։ Կեցցե կոմ. Կուսակցությունը, կեցցե (ծափեր)։

ՍԱՍՈՒՆՑԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. Մենք կգանք Խորհրդային իշխանությանը շնորհակալություն հայտնել և հեղափոխական Ռուսաստանին և Սասնո հպարտներս կուգանք Խորհրդային իշխանության մեր ուժերը տրամադրելու (ծափահարություններ)։

Գ. Տ. ՊՈՂՈՍՅԱՆ.—Ընկերներ, վերջին 4 որում մենք վերագնահատեցինք Դաշնակցության անցած ուղին և նրա իդիոլոգյան։ Անշուշտ նրա 30 տարին և գաղափարական անցյալը քննադատության յենթարկելով, մենք ասացինք այնչափ, վորչափ ներել են մեր կարողությունները։ Դժվար պետք և լիներ այդ, վորովհետև մենք յերկար տարիներ ապրել ու գործել ենք նրա մեջ, սակայն քննադատությունը յեղավ և յեղավ անկեղծ։ Ընկերներն արտահայտեցին այն, ինչ իրենց համոզումն եր և զգացածը։

Մի յեզրակացության կարելի յե հանգել այս բոլորից, վոր պատգամավորներն ու այստեղ ուղարկվածները, շատ ջերմ ցանկություն ունեն լծվելու Խորհրդային Հայաստանի աշխատանքներին անկեղծորեն և բոլոր ասպարեզներում։ Նրանք լծվել են ուզում վոչ միայն շինարարության, այլ և ռազմական գործում։ Բնական և, վոր Դաշնակցության մեջ մի իդյալ և դաստիարակություն չլինելով, այդ բոլորը հանդես յեկան մեր համագումարում և դա պատգամավորների մեղքը չե, այլ նրանց պատմության։ Այն կարմիր դրոշը, վորին գործակցելու համար յեկել ենք բոլորս, այնքան ծանր և, վոր չգիտեմ ինչպես անվանել, նա շատ ծանր և, այդ դիտակցությամբ մենք պետք և շատ սերտ և ուժեղ կամք ցուցադրենք և

համոզված կերպով ու անկեղծորեն կատարենք մեր պարտականությունը (ծափեր)։

ՆԱԽԱԳԱՀ.—Ընկերներ համագումարը փակելուց առաջ թույլ տվեք յերկու խոսք ասել։ Առաջին անգամ ես ասացի, որ մեր համագումարը ցանկություն չուներ քաղաքական բնավերանս անել։ Մեր քննադատությունը, որ վճռական ձեվ ուներ, հասկանալի յե, որովհետեվ մենք ապրում էյինք տրագիկ վիճակի մեջ և ճգնում կարելու մեր կապերը։ Դա արեցինք։ Համագումարը ցույց տվեց, որ մենք ծանր մուրճի հարվածներ տվինք մեր նախկին դեկավարներին։ Համագումարի վորոշումները վորոշ կարծիքներ պիտի ստեղծեն արտասահմանում։ Պիտի ասեն, թե նա կայացավ ճնշման տակ և այլն։ Սակայն համոզված, որ համագումարի վերաբերմունքը որակարգի հարցերին շատ լուրջ եր և վերադնահատումը խոր սրանք գրավական են, որ դրանից հետո մենք չենք դանդաղելու, որովհետեվ քաղաքական մեռած տարը չենք և շարունակելու ենք մեր հեղափոխական գործը։ Մեր համագումարի հիմնական արժեքը այս է։ Թույլ տվեք ասել, որ նախկին դաշնակցականների այս հատվածը խզում է իր կապերը Դաշնակցության հետ, չի վերադառնալու դեպի հինը, որովհետեվ գիտենք, թե ինչքան ծանր եր նա։

Փակելուց առաջ ես բոլորի ցանկությունը արտահայտած կլինեմ, յեթե ասեմ, որ մենք մեր կապերը խզելուց և անջատվելուց հետո դառնում ենք այս յերկրի հավատար քաղաքացիներ։ Յերբ կգա կռվելու կարիքը, մենք վոչ թե կզլանանք, այլ առաջին դիրքերում կմարտնչենք, ինչպես վայել և ուժեղ թափով շարժվող շարքային մասսային (ծափեր)։

Ընկերներ թույլ տվեք հայտարարելու ձեր անունից, որ համագումարը հենց այս վարկյանից այլեվս տատանում չունի և առաջին քայլն է անում վոգեվորված նոր գաղափարներով և վստահորեն գնում է դեպի այն փարոսը, որի անունն է 3-դ Ինտերնացիոնալ։ Կեցցե Կոմինտերնը, կեցցե Խորհրդային Հանրապետությունների Միությունը, կեցցե համաշխարհային հեղափոխությունը։ (Յերկարատեվ ծափահարություններ։ Յերաժշտախումբը նվագում է Ինտերնացիոնալ)։ Համագումարի վերջին նիստը հայտարարում եմ փակված։

Համագումարի 7-դ նիստը փակվեց գիշերվա ժամը 12-ին։

Ձես, Սիսյանի նախկին դաշնակցական կառավարության հեծելագնդի պետ Սարգիս Փիլիպոսյանս ներկա պատմական որերում յերբ ստեղծված է յերկու ճակատ, այն է՝ աշխատանքի և կապիտալի, յես անջատվելով հակասոցյալիստական Դաշնակցությունից և խաչ դնելով նրա վրա իմ գինվորական խիզախ ընթացքով պատրաստակամությունս եմ հայտնում իմ և Սիսյանի իմ նախկին հերոս գինվոր 100 ընկերների հետ ճանապարհվել այն բոլոր ճակատները, վորտեղից մի վորյեվե շարժում կլինի բանվորա-գյուղացիական իշխանության դեմ, մենք մինչեվ մեր վերջի կաթիլ արյունը կտանք III Կոմ. Ինտերնացիոնալին: Մրցման եմ հրավիրում Բագվի նախկին դաշնակցականների բանվոր պատգամավորներին և նախկին դաշնակցական գինվորներին:

Կեցցե III Կոմ. Ինտերնացյոնալը:
Կեցցե կարմիր Բանակը:
Կեցցե նրա գեկավար ընկ. Տրոցկին:

Սիսյանցի՝ ՍԱՐԳԻՍ

——

Հ. ՆԱԽՆ. ԴԱՇՆ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

1. ՄԱՍԿՎԱ—ԼԵՆԻՆԻՆ

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը նոյեմբեր 20-ի հանգիսավոր նիստում ձեզ՝ հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդին,—ընտրել է պատվավոր նախագահ: Համային աշխարհի աշխատավորների և շահագործող կապիտալիստների պայքարի ներկա վճռական մոմենտին համագումարը ձեր շուտափույթ առողջությունն է ցանկանում միջազգային Հոկտեմբերը գեկավարելու:

——

2. ՄԱՍԿՎԱ—ՏՐՈՑԿՈՒՆ

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը նոյեմբեր 20-ի հանգիսավոր նիստում ձեզ՝ կարմիր Բանակի գեկավարին, ընտրել է պատվավոր նախագահ:

Կարմիր Բանակն է, վոր ձեր գեկավարությամբ վշրեց հակահեղափոխության ծանր շղթաները և Խորհրդային Միության բոլոր աշխատավոր մասսաների ազատագրման հետ, ազատեց և Հա-

յաստանի դյուղացիներին ու բանվորներին։
Կեցցե պանծալի Կարմիր Բանակը։

ՄԱՍԿՎԱ–ՉԻՆՈՎՅԵՎԻՆ

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը նոյեմբեր 20-ի հանդիսավոր նիստում ձեզ ընտրել է համագումարի պատվավոր նախագահ։ Հանձին ձեզ համագումարը վողջունում է համայն աշխարհի աշխատավորության ցանկությունների միակ արտահայտիչ, նրա հաղթանակի դեկավար, միջազգային հեղափոխության միջնաբերդ՝ III-րդ Ինտերնացյոնալին։

ԲԱՆԱՁԵՎԵՐ

I Հայաստանի ճախկին գաշնակցականների համագումարը լսելով միջազգային բաղաքական գրության մասին քնկ. Մշավյանի զեկուցումը բցգունում է հետեվյալը

1. Համաշխարհային պատերազմից հետո դեռ չհանդարտված Յեվրոպայի գլխին կուտակվել են նոր փոթորկաբեր ամպեր։ Անգլո-ֆրանսական իմպերյալիզմի հակամարտությունը որեցոր ուժեղանում է, խորանում և գահավիժորեն դիմում դեպի գինված ընդհարում։ Մյուս կողմից Վերսալի դաշնագրին ի լրացումն Ռուրի գրավման շնորհիվ բզկտված, ծայր աստիճան քայքայված Գերմանիան յում բարձրանում է բանվորա-դյուղացիական հեղափոխություն։ Ֆրանսական իմպերյալիզմի և գերմանական բուրժուազիայի դեմ ուղղված գերմանական բանվորության և աղքատ դյուղացիության հեղափոխությունը սպառնում է ծանրագույն հարված տալ յեվրոպական բուրժուազիայի տիրապետության հիմունքին։ Ահա ինչու նրա դեմ առաջներ են կրճատացնում բոլոր մեծ ու փոքր իմպերիալիստական գիշատիչները։

2. Գերմանական հեղափոխության հաղթանակի ամենամեծ խոչընդոտը հանդիսանում է այն հանգամանքը, որ բանվորության մի մասը հետված շարունակում է յենթարկվել սոց.-դեմ.-կուսակցության, որի դեկավար տարրերը բացարձակ հակահեղափոխական տարրեր են և որի մոտ ծառայում են բուրժուական բեակցիային։ Շարքային սոց.-դեմ. բանվորների և պրոֆիությունների մեջ կազմակերպված մասսաների ազատագրումը դեկավար

տարրերի ազդեցությունից այն միակ միջոցն է, որով կարելի կլինի ստեղծել պրոլետարական կռվի միացյալ ֆրոնտ և այդպիսով դառնալ հզոր ուժ ընդդեմ լկտիացած գերմանական բուրժուազիայի և գլուխ բարձրացրած ֆաշիստական միապետական բեակցիայի։ Մասսաների այդ ազատագրման պրոցեսի արագությունից է կախված գերմանական հեղափոխության ընթացքը։ Սոց.-դեմոկրատիայի վարկաբեկումը վերջին ամիսների ընթացքում անորինակ կերպով բարձրացնում է Կոմունիստական կուսակցության հմայքը իբրեվ միակ պրոլետարական հեղափոխական կուսակցության, որ կոչված է կազմակերպելու լայն մասսաներին և նրանց տանելու դեպ հաղթանակ։

3. Գերմանական պրոլետարական հեղափոխության ամենամոտիկ և ամենակատաղի թշնամին է իմպերիալիստական Ֆրանսիան։ Նա գրավելով Ռուրի քարածխային շրջանը և վարելով Գերմանիան անդամահատելու քաղաքականություն, նպատակ ունի կազմալուծել Գերմանիայի տնտեսությունը և վերջնականորեն թուլացնելու նրան, նույնպես քաղաքականապես դարձնել իբրեվ մի վասսալ, մի անիրավազոր պետություն։ Սակայն գերմանական պրոլետարիատի ուժը խաոնում է Պուանկարեյի կառավարության հաշիվները։ Իր սեփական բանակի ուժին շատ չհավատալով գերմանական հեղափոխության ճնշման գործում ֆրանսիական կառավարությունը գինում է իրեն զերիշխանության յենթակա Չեխո-Սլովակիային, Լեհաստանին ու Ռումանային ընդդեմ գերմանական պրոլետարական հեղափոխության և նրա բնական դաշնակից Ս. Ս. Հ. Միության։

4. Իրենք իրենց անկախ պետություն յերեվակայող Չեխո-Սլովակիան, Լեհաստանն ու Ռումանիան բառի իսկական մտքով դարձել են բուրժուական Ֆրանսիայի վասսալներ և ֆրանսիական զինավոր շտաբի բոլոր հրամանները նրանք կատարում են կապված լինելով զաղտնի ռազմական համաձայնությամբ։ Այդ յերկրների անկախությունը դարձել և կատարյալ ֆիկցիա և կարող և ծառայել իբրեվ ապացույց այն ճշմարտության, որ մանր ու անզոր միջակ ուժի բուրժուական պետությունները յենթարկվում են և ծառայում իմպերիալիստական խոշոր պետություններին, դառնում նրանց ձեռքին կույր գործիք։ Այսպես եր համաշխարհային պատերազմի ժամանակ, այդպես և նայեվ այժմ։ Չեխոսլովակիայի, Լեհաստանի և Ռումանիայի այժմյան կախվածությունը Ֆրանսիա-

կան իմպերիալիզմից հիշեցնում է վենշեվիկյան Վրաստանի, դաշնակցական Հայաստանի, մուսավաթական Ադրբեջանի կախումը անգլո-ֆրանսիական իմպերիալիզմից։

5. Ա. Մ. Հ. Միությունը խորապես շահագրգռված է և գերմանական պրոլետարական հեղափոխության հաղթանակով։ Սորհրդային Գերմանիան իր վիթխարի արդյունաբերությամբ, իր քսան միլիոն գիտակից, վորակյալ բանվորական բանակով ներկայացնում է զորավոր լրացնող ուժ Սորհրդային Միության, վորը գերազանցորեն գյուղատնտեսական է և վորի պարենային նյութերի արտահանման խոշորագույն շուկան է Գերմանիան։ Վերջինս իր բարձր տեխնիկայով մեծապես պիտի նպաստի խորհրդային տնտեսության զարգացման, Միության էլեքտրոֆիկացիայի գործին, արդյունագործության ընդհանուր բարձրացման։

Բացի տնտեսական այս հզոր ժանդակությունից, Սորհրդային Գերմանիան հանդիսանում է նաև ռազմական մեծ ժանդակություն Սորհրդային Միության համար, իմպերիալիստական աշխարհի դեմ մղած իր խաղաղարար և պաշտպանողական քաղաքականության մեջ։ Սորհրդային Միության բանվորներն ու գյուղացիները բան ամենայնի պիտի ոգնեն գերմանական բանվորներին, նրանց հեղափոխական պայքարում։

6. Սորհրդային Միության սահմաններում տիրում է կատարյալ խաղաղություն և շինարար աշխատանքի մեծ թափ։ 140 միլիոնանոց բանվորա-գյուղացիական ժողովուրդը կուռ շարքերով խմբված իր հարազատ Սորհրդային իշխանության շուրջը, նրա ղեկավարությամբ բարձրացնում է յերկրի արդյունագործությունը, վերականգնում հողագործությունը, տանում շինարարական կուլտուրական մեծ աշխատանք։ Այս ասպարիզում մեծ գրավումներ են կատարված, սակայն դեռ շատ ու շատ անելիք կա և բանվորա-գյուղացիական մասսաները, Սորհրդային իշխանությունը, ուժերի մեծ լարում պիտի ցուցադրի սկսված շինարար-կուլտուրական աշխատանքը բավարար չափով ավարտելու համար։

7. Սորհրդային Անդրկովկասում շնորհիվ ազգային իմաստուն քաղաքականության կատարյալ խաղաղություն է տիրում։ Դադարել են յեղբայրասպան կոտորածները, խաղաղ ու անցավ կերպով լուծվել են սահմանային վեճերը, Լոռի, Ղարաբաղ, գոհացուցիչ կերպով բավարարվել են Աջարստանի, Աբխազիայի հարավային Ոսե-

Քիայի, Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի ժողովուրդների ավտոնոմիայի պահանջները։ Այդ նույն պահանջների համար յերեք տարի առաջ առատորեն հոսում եր հարեվան ու յեղբայր ժողովուրդների արյունը, ավերվում քաղաքներ ու գյուղեր, վոչնչացվում ամբողջ շրջանների տնտեսությունն։ Ռուրդային իշխանության գդուշ ու շրջահայաց ազգային քաղաքականությունը, վորը հաշվի յե առնում ամենաչափոքր ժողովուրդների ամենափոքր պահանջներն անգամ, շնորհիվ այդ խնամատուն քաղաքականության այսոր լուծված և Անդրկովկասում ազգային խնդիրը և ժողովուրդների խաղաղության, նրանց շինարար աշխատանքին չի սպառնում իր բախտակից հարեվանի սուրը։

8. Մասնավորապես Ռուրդային Հայաստանի կառավարության քաղաքականությունը, դեկավարությամբ Կոմունիստական կուսակցության ստեղծել և կայուն քաղաքական դրություն, հաշտ ու համերաշխ հարեվան ժողովուրդների հետ։ Հայաստանի աշխատավորությունը լծված և շինարար աշխատանքի և մեծ յեռանդով վերաշինում և իր քանդված քաղաքներն ու գյուղերը, վերականգնում տնտեսությունը։ Հայաստանի Ռուրդային իշխանության հզորության աղբյուրը բանվորա-գյուղացիական մասսաների բուռն պաշտպանության մեջ է։ Պահանջվում է հանուն Հայաստանի աշխատավորության ներկա խաղաղ կյանքի ու աշխատանքի և նրա փայլուն ու յերջանիկ ապագային, վոր Հայաստանի բանվորա-գյուղացիական շարքերում լինի կատարյալ միություն և այդ միությունը չը խանգարվի հակառակ և թշնամի կուսակցությունների ու կազմակերպությունների դավաճանական աշխատանքով։

9. Ի նկատի ունենալով այս բոլորը, Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը, հայտարարում է, վոր ինքը վճռականորեն անցնում է համաշխարհային պրոլետարական հեղափոխության կողմը և իր բոլոր ուժերը նվիրում է այդ շարժման միակ դեկավար III-րդ Ինտերնացիոնալին։

4. ԸՆԿԵՐՆԵՐ ԼԵՆԻՆԻՆ, ՏՐՈՑԿՈՒՆ ՅԵՎ ԶԻՆՈՎՅԵՎԻՆ

Մենք, Հայաստանի չորս հազար նախկին դաշնակցականներից ընտրված ներկայացուցիչներս այսոր հավաքվելով Դաշնակցության մեջ անցած մեր ուղիների վերագնահատության համագումարին, առաջին նվագ մեր ջերմ վողջույններն ենք ուղղում ձեզ, համարն

աշխարհի աշխատավորության դատի անշեղ ղեկավար ընկերներ Լենին, Տրոցկի և Զինովյեվ։

Դաշնակցության յերեսնամյա գործունեության վերագնահատման պատմական մոմենտին մեր պարտքն ենք համարում հայտնելու ձեզ այն դառն, սակայն պատմության եզերից այլևս անջինջ յեզրակացությունները, որոնց հանդուժ ենք։

Տասնյակ տարիներ շարունակ վոգեվորված պատմական հայրենիքի ազատության համը և մեր աշխատավորական իղձերի իրականացման յեռանդով, մենք գործել ենք Դաշնակցության մեջ, սակայն նրա ընձեռած ուղիները վոչ միայն չհասցրին մեր նպատակին, այլ և հնարավորություն չտալով ըմբռնելու պատմական իրականությունն ու նրա ընթացքը, մեր ազատ հայրենիքի ու աշխատավորության տենչերի իրագործման դատը տալիս եյին աշխարհի հզորների և իմպերիալիստների ձեռքը, սկսած ցարական Ռուսաստանից մինչև հանրապետական Ժիրանսիան, խախտում աշխատավորական միասնական ճակատը ընդդեմ հակահեղափոխության, անվերջ ազգամիջյան կռիվներ ստեղծում դարավոր հարեվանների հետ ու մեկուսացնելով Հայաստանի աշխատավորությունը, մեր հայրենիքը դարձնում ավերակների ու տնտեսական սարկության մի յերկիր, այդ յերկրի աշխատավորության ի սպաս դնում միջազգային փոփոխվող իմպերիալիստներին ընդդեմ միջազգային պրոլետարական հեղափոխության։

Հուսավորված ռուսական հոկտեմբերյան հեղափոխության պայծառ արեվի շողերով, բանվորության միջազգային ծավալվող պայքարի և նրա վերջնական հաղթանակի նախորյակին, այսոր մենք խոստովանելով այս դառն ճշմարտությունները, հրաժարվում ենք մեր կուսակցության կործանարար ուղիներից և մեզ տրամադրում համաշխարհային պրոլետարական հեղափոխության և նրա մարտական շտաբ 3-րդ Կոմինտերնին։

Անդարձ կերպով համոզված լինելով, վոր մեզ նման բոլոր մանր ազգերի ազատագրումը կապված է համաշխարհային պրոլետարիատի ազատության, հայտարարում ենք ձեզ, համաշխարհային բանվորության հանճարեղ ղեկավար ընկերներ Լենին, Տրոցկի և Զինովյեվ, վոր այդ ազատության միակ ուղին Կոմունիստական կուսակցությունն է, Կոմինտերնի ուղին է, վոր մեր բովանդակ անհատական ու մասսայական յեռանդը տրամադրում ենք այդ ու-

դուն ամեն տեսակի վտանգութիւնների դեմ պատրաստ ենք պաշտպանելու Կոմինտերնը և ձեզ, սիրելի ընկերներ Լենին, Տրոցկի և Զինովյեվ, ընտրում ենք մեր համագումարի պատուավոր նախագահներ։

Կեցցե Կոմինտերնը,
Կեցցե Համրդային իշխանութիւնը,
Կեցցե համաշխարհային պրոլետարական հեղափոխութիւնը։

——

II Հայաստանի Ճախկին գաճճակցականների 4032 անգամ ճերկայացող համագումարը հանձին իր 247 պատգամավորների, լսելով ընկ. Ս. ԿՈԼՑՈՎԻ զեկուցումը Դաշնակցութեան պատմութեան ու հաղափականութեան մասին յեվ բնութեան առնելով զեկուցվաճ բեզերը, բնդունում է վոր

1. Հ. Հ. Դաշնակցութիւնը լինելով ծնունդ կովկասահայ մանր բուրժուազիայի տնտեսական և քաղաքական սպասելիքների իր գործունեութեան առաջին շրջանում հենակետ և ընդունել տաճկահայ ազգային ազատագրման շարժումը ընդդեմ Տաճկաստանի ֆեոդալ կարգերի, մեկուսանալով Տաճկաստանի աշխատավոր մասսաների ընդհանուր հեղափոխական ֆրոնտից, խուսափելով Տաճկաստանի համապետական միջազգային հեղափոխական պայքարի ուղիներից և հույս դնելով յեվրոպական մեծ պետութիւնների «փրկարար» միջամտութեան վրա։

2. Մանր բուրժուական բոմանտիկական այդ քաղաքականութեամբ Դաշնակցութիւնը մթագնել և կովկասահայ բանվորների ու գյուղացիների դասակարգային գիտակցութիւնը, հետ կասեցնելով նրանց ընդհանուր հեղափոխական կռվից ընդդեմ ցարիզմի. և բուրժուականլիբերալ-ազատիրական բեժիմի, ամրապնդելով միաժամանակ կովկասահայ բուրժուազիայի ազդեցութիւնը այդ աշխատավորութեան վրա։

3. Ռուսաստանի առաջին հեղափոխութեան շրջանում և դրանից անմիջապես հետո քաղաքական աշխատանք սկսելով Անդրկովկասում և ազգային շրջանակներում ձեվական գործադրութեան առնելով սոցիալիստական լոզունգները, Հ. Հ. Դաշնակցութիւնը ճիգ և թափել իր ազդեցութեան տակ պահել կովկասահայ աշխատավոր մասսաներին։ Ինքնապաշտպանողական մարմինների ու կամավորական խմբերի կազմակերպութեան ճանապարհով գործիք դարձնե-

լով նրանց հայ բրքական տիրող դասակարգերի չարդարար քաղաքականության և իմպերիալիստական Յեվրոպայի նվաճողական ծրագիրներին, առաջնորդելով Կովկասահայ աշխատավորությունը դեպի համաշխարհային պատերազմ և չարդերի յերախ նետելով տասնհազարահայ աշխատավոր մասսաներին։

4. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Հ. Հ. Դաշնակցությունը Կովկասում տիրող ազգայնական ու հակահեղափոխական կուսակցությունների հետ կազմել է ընդհանուր ֆրոնտ ընդդեմ Ռուսաստանի բանվորա-գյուղացիական իշխանության և յենթարկվելով ըստ ամենայնի իմպերիալիստական պետությունների թելադրանքներին, մեկուսացել է պետական ազգային շրջանակների մեջ, յուրացնելով միացյալ, անկախ և մեծ Հայաստանի բախտախնդիր ծրագիրը, իր անհեռատես քաղաքականությամբ մատնել Հայաստանի աշխատավորությանը տնտեսական քայքայման և ֆիզիքական վոչնչացման։

5. Նոյեմբերի 29-ի հեղափոխությունից հետո քաղաքացիական պատերազմների ընթացքում վտարվելով Հայաստանի աշխատավորության կողմից արտասահմանյան քաղաքները, դաշնակցական ղեկավարները այժմ հրաժարվում են սոցիալիզմի ձեվական լոզունգներից անգամ և սեվ համերաշխություն կնքելով վրաց մենշեվիկների ու թուրք մուսավաթականների հետ ընդդեմ Խորհրդային Անդրկովկասի և Խորհրդային Միության, գինվորագրվում իմպերիալիստական պետությունների ռազմական միջամտության հակախորհրդային ծրագիրներին, գաղափարաբար եվոլյուցիա կատարում դեպի համաշխարհային ֆաշիզմը։

6. Համաշխարհային պատերազմի, հոկտեմբերյան հեղափոխության և Խորհրդային Հայաստանի յեռամյա փորձը տալիս է այն դասը, վոր աշխատավորական մասսաների և մանր ազգերի ազատագրումը և անկախությունը ապահովում է միայն բանվորա-գյուղացիական իշխանությունը, Կոմունիստական Ինտերնացիոնալի ազգային քաղաքականությունը։

7. Բանվորա-գյուղացիական հեղափոխության հաղթանակը Հայաստանում հենակետ ունի միջազգային բանվորա-գյուղացիական հեղափոխությունը և անմիջական նպատակը աշխատավոր մասսաների դիկտատուրան է, մեր յերկրի սահմաններում Խորհրդային իշխանության ղեկավարությամբ հաստատել և ամրապնդել Հա-

յաստանի աշխատավոր ժողովրդի և հարեվան յերկրների բանվորների և գյուղացիների հեղափոխական սերտ միությունը և համագործակցությունը ընդդեմ յեվրոպական իմպերիալիզմի արեվելյան ժողովուրդների դեմ ուղղված դավերի։

8. Դաշնակցության շարքերում տակավին դեգերող և նրա գաղափարական ազդեցությունից դեռ չազատագրված անհատներին ու խմբակները, համաշխարհային հեղափոխության և հակահեղափոխության բախման ներկա որերին պիտի համոզվեն, վոր Դաշնակցության լիկվիդացիան Հայաստանում և գաղութներում միանգամայն ի դերեվ է հանում արտասահմանի ապաստանած դաշնակցական լիդերների ֆաշիստական արկածախնդրության հնարավորությունը Հայաստանում։

Ի հետևումն վերոհիշյալի համագումարը վորոշում է.

1. Լիկվիդացիայի յենթարկել Հ. Հ. Դաշնակցության բոլոր կազմակերպությունները Հայաստանում։

2. Հաստատել գավառական և շրջանային կոնֆերենցիաների վորոշումները դաշնակցական տեղական կազմակերպությունների լիկվիդացիայի մասին։

3. Առաջարկել Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի հանրապետությունների սահմաններում, այլ և Տաճկաստանի ու գաղութահայ մյուս վայրերում գտնվող դաշնակցական աշխատավոր շարքերին մեր որինակով լուծել դաշնակցական կազմակերպությունները ու ցրել դեկավար մարմինները տեղերում։

4. Անվավեր համարել Դաշնակցության բարձր կուսակցական մարմինների կողմից տված կուսակցական մանդատներն ու հանձնարարությունները։

5. Վճռական կերպով արդիլել Հ. Հ. Դաշնակցության արտասահմանում գտնվող բարձրագույն մարմիններին հրապարակ գալ կամ հայտարարություններ անել Հայաստանի կազմակերպությունների անունից։

6. Սույն վորոշումները ուղարկել 2-րդ Ինտերնացիոնալի Միջազգային Բյուրոյին ի գիտություն։

7. Դնել մեր բովանդակ ուժերը միջազգային բանվորա-գյուղացիական հեղափոխության և իր մարտական շտաբ III Կոմինտերնի տրամադրության տակ և լինել պատրաստ նրա դեկավարությամբ պաշտպանել հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և

նրա ծնունդ Խորհրդային իշխանության նվաճումները, բոլոր հակահեղափոխական ուժերից և վտանգներից, լինին նրանք դրսից թե ներսից։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՉԸ

ԲՈԼՈՐ ՇԱՐՔԱՅԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻՆ

Սիրելի ընկերներ,

Անշուշտ ձեզ հայտնի է, որ սույն թվի նոյեմբեր 20-ին Երևանում գումարված Հայաստանի շարքային դաշնակցականների համագումարը, որին մասնակցում էր մոտ 250 պատգամավոր 4032 նախկին դաշնակցականների կողմից, վերագնահատման ենթարկելով Դաշնակցության անցյալ գործունեությունն ու նրա վարած քաղաքականությունը, ինչպես և Դաշնակցության արտասահմանյան հատվածների ներկա քաղաքական ընթացքն ու մտայնությունը,—միաձայն վորոշեց խզել յուր բոլոր կապերը Դաշնակցության հետ և վորդեգրելով միջազգային պրոլետարական ուղին, անվավեր հայտարարել այն բոլոր մանդատները և կազմակերպությունները, վոր տվել է Դաշնակցությունը այս կամ այն խմբակին կամ անհատին։

Ընկերներ, Դաշնակցությունը, լինելով հայկական մանր բուրժուազիայի քաղաքական ու տնտեսական շահերի արտահայտիչ հետամուտ էր այնպիսի հեռանկարների իրագործման, վորոնք վերջին հաշվով հայկական ու ոտար բուրժուազիայի շահերին էին ծառայելու և վորոնց համար սոսկալի կատաստրոֆաների ենթարկվեց հայ աշխատավորության մի խոշոր հատվածը, ազգամիջյան կռիվների շնորհիվ քայքայվեցին յերկրի արտադրական բոլոր ուժերը և ստեղծվեց մի դրություն, վորի հարատեվումը պիտի բնաջնջելու էր հայ աշխատավորության մնացորդներին։

Դաշնակցության վարած քաղաքականությունը ունեցավ այնպիսի արդյունք, վոր ձեռնտու էր ռուս և տաճիկ բռնակալության շահերին, այն է տեսել Հայաստանն առանց հայերի։

«Ծովից ծով Հայաստանի» քաղաքական մարմաջով տարված Դաշնակցությունը նպաստում էր ազգամիջյան հարաբերությունների լարման և մյուս ազգայնական կուսակցությունների պես ազգային փոքրամասնությունների ու դրացի ժողովուրդների դեմ

վարում էր մի չարդարար քաղաքականություն, որի հետեվանքը շատ աղետաբեր եղավ Հայաստանի աշխատավորության համար։ Այժմ մենք, հակառակ արտասահման ապաստանած մեր նախկին ընկերների վորոշման, պարզ ու կտրուկ հայտարարում ենք, վոր մեզ համար գոյություն չունի «ծովից ծով Հայաստանի» կամ վոր-յեվե այլ «ազգային ոջախի» քաղաքական հեռանկար։

Համաշխարհային հեղափոխության հաղթանակը բոլոր մանր ազգությունների լիակատար ապատագրման հետ, ստեղծելու յե մի վիճակ, յերբ տնտեսական շահագործման ու պայքարի հետ միասին վերանալու յեն և ազգային պայքարն ու վեճերը։

Դաշնակցությունը, իբրեն սոցիալիստական կուսակցություն հորջորջելով հանդերձ, միանգամայն ճակատ եր կազմել այն բոլոր ան ուժերի հետ, վորոնք նպատակ էլին դրել խեղդելու Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Իր տիրապետության որոք Դաշնակցությունը ստեղծեց այնպիսի մի հասարակարգ, վոր պաշտպանում եր գյուղի և քաղաքի հարուստ խավի շահերը։ Դաշնակցության պարենավորման քաղաքականությունը գանազան շրջանների սիստեմատիկ թալանն եր, հողային խնդրում գյուղացիների համար խոշոր կալվածներ ստեղծելու տենչը, ազգային հարցում մասուգերի իշխանությունն, «մաքրում», արտաքին քաղաքականության հարցերում վոդորմելի մի ժանկլավիկ յեվրոպական այս կամ այն պետության ներկայացուցչի ձեռքին։ Հոկտեմբերյան հեղափոխության բարիքներից գուցե ամենից առավել Հայաստանի բանվորն ու գյուղացին են ոգտվել. չկա ազգամիջյան կռիվ ու կոտորած, թալան ու ավեր, Հայաստանում սկսված է կուլտուրական մի հսկա աշխատանք, բարելավում է գյուղացու ավերված տնտեսությունը, զարգանում է սոցիալական կուլտուրան։ Հայ աշխատավորությունը յերբեք չի ապրել այնպիսի յերջանիկ շրջան, վորպիսին այժմ է ապրում, մի շրջան, վոր դեռ սկիզբն է պայծառ գալիքի, յերբ անցյալի ավերածության հետքն անգամ չի մնա։

Բանվորա-գյուղացիական իշխանությունը ստեղծել է լայն հնարավորություն խաղաղ և շինարար աշխատանքի համար։ Հայաստանն այժմ ազատ է ավելի քան յերբեք, վորովհետև չկա Անտանտայի մեծ ու փոքր լիազորների գարշապարը, վոր տակ արնաքամ եղավ Հայաստանի աշխատավորությունը Դաշնակցության տիրապետության որոք։

Վտարվելով յերկրի սահմաններից դուրս, դաշնակցական կազմակերպությունները նորից քաղաքական հին ցնորքներն են հետապնդում, այս անգամ հրաժարվելով սոցիալիզմի շղարշից, միանալով հակահեղափոխական ուժ բանակին։ Այնտեղ, արտասահմանում նոր ավանտյուրաներ են պատրաստում, նոր դավեր նյութում Հայաստանի և Խորհրդային վողջ Միության աշխատավորության դեմ։

Ի նկատի ունենալով այս բոլորը Հայաստանի շարքային դաշնակցականների համագումարի կողմից առաջարկում ենք արտասահմանի և այլ վայրերի այն բոլոր շիտակ ընկերներին, որոնց հավատ թանգ է Հայաստանի աշխատավորության շահն ու բարգավաճ ապագան, որոնք համոզվել են Դաշնակցության քաղաքականության ու մտայնության սնանկության և որոնք չեն ուզում հակահեղափոխական բանակում մնալով հարվածել մարտնչող պրոլետարյատին, այդ բոլոր ընկերներին կոչ ենք անում հեռանալ Դաշնակցություններից, լուծել Դաշնակցության կազմակերպությունները, ազատագրվել Դաշնակցության հակաաշխատավորական մտայնությունից և ընդունելով 3-րդ Ինտերնացիոնալի մարտական պլատֆորման, հարել տեղական այն կազմակերպություններին, որոնք պայքարում են 3-րդ Ինտերնացիոնալի դրոշի տակ կապիտալիզմի դեմ, մի պայքար, որի հաղթանակից է կախված համաշխարհային աշխատավորության հետ, նաեվ Հայաստանի բանվորի ու գյուղացու բախտը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը լավագույն կերպով ապացուցեց, որ մանր ազգերի ազատագրումը հնարավոր է միայն այն դեպքում, յերբ կապիտալիստական հասարակարգը կտապալվի և կվերջանա դասակարգային ճնշման հետ և շահագործումը մանր ազգերի, կապիտալիստական խոշոր պետությունների կողմից։

Կեցցե համաշխարհային հեղափոխությունը և նրա ղեկավար 3-րդ Ինտերնացիոնալը,

Կեցցե վերածնվող կարմիր Հայաստանը,

Կորչի համաշխարհային հակահեղափոխական բանակը և նրա հայկական հատվածը

Հայաստանի ճախիճ գաճճակցակաճճերի
համագումարի ճախագահություճ

1. Ալեքսանդր Բակունց
2. Սիմյոն Ջոլյան
3. Արտաշես Պետրոսյան
4. Գրիգոր Բալասբեկյան
5. Պողոս Տեր-Պողոսյան
6. Աճուշավան Տեր-Միքայելյան
7. Հրանտ Կարինյան
8. Նիկոլայ Կրմենանց
9. Սմբատ Կարոյան
10. Կամսարական Տեր-Մարտիրոսյան (Գամսո)
11. Մխիթար Տեր-Աբրհամյան
12. Արշակ Արստամյան
13. Մինրան Տեր-Սահակյան
14. Հովսեփ Միրզոյան

19 դեկտեմբերի 1923 թ.
Յերեվան

Նամակ ուղղված Հ. ճախիճ գաճճակցակաճճերի համագումարի ճախագահության կոդմից II Ինտերնացիոնալի միջազգային Բյուրոյին.

2-Ի ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ

1923 թ. նոյեմբերի 20-24 Յերեվանում կայացած Հայաստանի նախին դաշնակցականների համագումարը, վորին մասնակցում եյին 4032 շարքային դաշնակցականներից ընտրված 247 պատգամավոր Հ. Հ. Դաշնակցության անցյալ գործունյությունն ու նրա ներկա քաղաքական ընթացքը վերագնահատելով, ընդունել ե հետեվյալ բանաձեվը.

1. Հ. Հ. Դաշնակցությունը լինելով ծնունդ կովկասահայ մանր բուրժուազիայի տնտեսական և քաղաքական սպասելիքների իր գործնեության առաջին շրջանում հենակետ և ընդունել Տաճկահայ ազգային ազատագրական շարժումը ընդդեմ Տաճկաստանի ֆեոդալ կարգերի և վեկուսանալով Տաճկաստանի աշխատավոր մասսաների ընդհանուր հեղափոխական ֆրոնտից, խուսափելով Տաճկաստանի համապետական միջազգային հեղափոխական պայքարի ուղիներից, հույս դնելով յեվրոպական մեծ պետությունների «փրկարար» միջամտության վրա։

2. Մանր բուրժուական բռնանտիկական այդ քաղաքականությամբ Հ. Հ. Դաշնակցությունը մթագնել և կովկասահայ բանվորների ու գյուղացիների դասակարգային գիտակցությունը, հեռա կասեցնելով նրանց ընդհանուր հեղափոխական կռվից, ընդդեմ ցա-

ըիզմի և բուրժուակալվածատիրական բեժիմի, ամրապնդելով միաժամանակ Կովկասահայ բուրժուազիայի տիրապետությունն այդ աշխատավորության վրա։

3. Ռուսաստանի առաջին հեղափոխության շրջանում և գրանից անմիջապես հետո քաղաքական աշխատանք սկսելով Անդրկովկասում և ազգային շրջաններում ձեվական գործադրության առնելով սոցիալիստական լոզունգները, Հ. Հ. Դաշնակցությունը ճիգ և թափել իր ազդեցության տակ պահել Կովկասահայ աշխատավոր մասսաներին։ Ինքնապաշտպանողական մարմինների ու կամավորական խմբերի կազմակերպության ճանապարհով գործիք դարձնելով նրանց հայ-թրքական տիրող դասակարգերի ջարդարար բաքաքականության և իմպերիալիստական Ցեվրոպայի նվաճողական ծրագիրներին, առաջնորդելով Կովկասահայ աշխատավորությունը դեպի համաշխարհային պատերազմ և ջարդերի յերախ նետելով Տաճկահայ աշխատավոր մասսաներին։

4. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Հ. Հ. Դաշնակցությունը Կովկասում տիրող ազգայնական ու հակահեղափոխական կուսակցությունների հետ կազմել և ընդհանուր ֆրոնտ ընդդեմ Ռուսաստանի բանվորագյուղացիական իշխանության և յենթարկվելով, ըստ ամենայնի, իմպերիալիստական պետությունների թելադրանքներին, մեկուսացել և ազգային պետական շրջանակների մեջ, յուրացնելով «Միացյալ, անկախ և մեծ Հայաստանի» բախտախնդիր ծրագիրը և իր անհեռատես քաղաքականությամբ մատնել Հայաստանի աշխատավորության տնտեսական քայքայման և ֆիզիքական վոչնչացման։

5. Նոյեմբերի 29-ի հեղափոխությունից հետո քաղաքացիական պատերազմների ընթացքում վտարվելով Հայաստանի աշխատավորության կողմից արտասահմանյան քաղաքները, դաշնակցական դեղավարներն այժմ հրաժարվում են անգամ սոցիալիզմի ձեվական լոզունգներից և սեվ համերաշխություն կնքելով վրաց մենշեվիկների, ու Թուրք մուսավաթների հետ ընդդեմ Խորհրդային Անդրկովկասի և Խորհրդային Միության, դինվորագրվում են իմպերալիստական պետությունների ռազմական միջամտության հակախորհրդային ծրագիրներին, գաղափարական եվոլյուցիա կատարում դեպի համաշխարհային ֆաշիզմը։

6. Համաշխարհային պատերազմի, հոկտեմբերյան հեղափոխու-

թյան և Խորհրդային Հայաստանի յեռամյա փորձը տալիս է այն դասը, որ աշխատավորական մասսաների և մանր ազգերի ազատագրումը և անկախությունը ապահովվում է միայն բանվորա-գյուղացիական իշխանությունը, կոմմունիստական Ինտերնացիոնալի ազգային քաղաքականությունը։

7. Բանվորա-գյուղացիական հեղափոխության հաղթանակը Հայաստանում հենակետ ունի միջազգային բանվորա-գյուղացիական հեղափոխությունը և անմիջական նպատակ աշխատավոր մասսաների դիկտատուրան՝ մեր յերկրի սահմաններում խորհրդային իշխանության դեկավարությամբ հաստատել և ամրապնդել Հայաստանի աշխատավոր ժողովրդի և հարեվան յերկրների բանվորների և գյուղացիների հեղափոխական սերտ միությունը և համագործակցությունը, ընդդեմ յեվրոպական իմպերալիզմի արեվելյան ժողովուրդների դեմ ուղղված դավերի։

8. Հ. Հ. Դաշնակցության շարքերում տակավին դեգերող և նրա գաղափարական ազդեցությունից դեռ չազատագրված անհատներն ու խմբակները, համաշխարհային հեղափոխության և հակահեղափոխության բախման ներկա որերին պիտի համոզվեն, որ Դաշնակցության լիկվիդացիան Հայաստանում և գաղութներում միանգամայն իրավունք է հանում արտասահման ապաստանած դաշնակցական լիդերների ֆաշիստական արկածախնդրության հնարավորությունը Հայաստանում։

Ի հետեվումն վերոհիշյալի համապատասխան վորոշում է.

1. Լիկվիդացիայի յենթարկել Հ. Հ. Դաշնակցության բոլոր կազմակերպությունները Հայաստանում։

2. Հաստատել գավառական և շրջանային կոնֆերենցիաների վորոշումները դաշնակցական տեղական կազմակերպությունների լիկվիդացիայի մասին։

3. Առաջարկել Ադրբեջանի, Վրաստանի և Խորհրդային հանրապետությունների սահմաններում, այլ և Տաճկաստանի և գաղութահայ մյուս վայրերում գտնվող դաշնակցական աշխատավոր շարքերին մեր որինակով լուծել դաշնակցական կազմակերպությունները ու ցրել դեկավար մարմինները տեղերում։

4. Անվավեր հայտարել Հ. Հ. Դաշնակցության բարձր կուսակցական մարմինների կողմից տված կուսակցական մանդատներն ու հանձնարարությունները։

5. Վճռական կերպով արգելել Հ. Հ. Դաշնակցության արտահանձնում պահվող բարձրագույն մարմիններին հրապարակ գալ կամ հայտարարություններ անել Հայաստանի կոմակերպություններին անունից։

6. Սույն վորոշումները ուղարկել 2-րդ Ինտերնացիոնալի միջազգային Բյուրոյին ի գիտություն։

7. Դնել մեր բոլանդակ ուժերը միջազգային բանվորա-գյուղացիական հնղափոխության և նրա մարտական շտաբ 3-դ Կոմինտերնի տրամադրության տակ և լինել պատրաստ նրա ղեկավարությամբ պաշտպանելու Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և նրա ծնունդ խորհրդային իշխանության նվաճումները, բոլոր հակահեղափոխական ուժերից և վտանգներից, լինեն դրսից, թե ներսից։

Համաձայն քանաձևի 6-դ կետի հայտնելով այս մասին ձեզ ի գիտություն, խնդրում ենք անվավեր համարել Հ. Հ. Դաշնակցության ժանդաոը տված Հայաստանի դաշնակցական կոմակերպության կողմից, ժամանակցելու 2-դ Ինտերնացիոնալի միջազգային բյուրոյի աշխատանքներին։

Հայաստանի ճախկին գաշնակցականների Համագումարի ճախագահությունը

(Ստորագրություններ)

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

(Տվյալներ մանդատային հանձնաժողովի կողմից)

ՊԱՎԱՌԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

№№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Ստաժ	Կուսակցական պաշտոններ
	ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՇՐՋԱՆ		
1	Ալեքսանդր Բակունց	1915	Ջանգեզուրի կոմ. անդամ
2	Առաք. Գյորգյան (Խոսունց) .	1898	» » »
3	Միսակ Հայրապետյան . . .	1914	Ագիտատոր
4	Նիկոլայ Դորունց	1912	Ջանգեզուրի կ. կոմ. անդամ
5	Նիկոլայ Կրմենանց	1917	Սիսյանի շրջ. կոմ. անդամ
6	Հովհաննես Գրիգորյան . . .	1910	Շարքային
7	Լեվոն Գետրոսյան	1903	Գավառական կոմ. անդամ
8	Ռաչիկ Դանելյան	1917	Կազմակերպիչ և պրոպագ.
9	Համազասպ Յեպիսկոպոսյան .	1903	» և մարտական
	ՍԻՍՅԱՆ		
10	Գրիգոր Մելիք-Թանգյան . .	1907	Շարքային
11	Յերվանդ Ազատյան	1905	»
12	Յեղո Ղազարյան	1905	»
13	Ալեքսան Ալեքսանյան . . .	1905	»
14	Ստեփան Մելիք Փարսադանյան	1905	»
15	Դավիթ Դավթյան	1914	Կազմակերպչական
16	Ղևոնդ Մխիթարյան	1917	Շարքային
17	Սարգիս Փիլիպոսյան	1909	»
	ԼՈՌԻ ՓԱՄԲԱԿ		
18	Գաժոտ Տեր-Մարտիրոսյան .	1903	Կազմակերպչական և մարտ.
19	Գրիգոր Հարությունյան . . .	1901	Ռազմական
20	Ալեքսանդր Նալբանդյան . .	1918	Շարքային
21	Գևորգ Մելիք Գևորգյան . .	1904	Շրջանային կոմ. անդամ
22	Հովհաննես Ստեփանյան . . .	1900	Շարքային
23	Գեղամ Ղազարյան	1917	Շրջանային կոմ. անդամ
24	Սերգեյ Տ. Գևորգյան	1913	» » »
25	Սեդրակ Գետրոսյան	1907	Շարքային
26	Վաղինակ Ստեփանյան . . .	1905	»
27	Սամսոն Լորիյան	1906	Շրջանային կոմ. անդամ.

№№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարի	Կուսակցական պաշտոններ
28	Շահնազար Շահնազարյան . .	1905 թ.	Շրջանային կոմ. անդամ
29	Արսեն Յեղշադյան	1904	Շարքային
30	Մարտիրոս Բաբայան	1916	»
31	Գարեգին Խարազյան	1903	»
32	Ջումշուդ Դինոսյան	1903	»
33	Մացակ Բաբայան	1917	»
34	Յեղիշե Իսահակյան	1917	»
35	Ստեփան Աբովյան	1915	»
36	Հաջի-Բաբ Մելքոնյան	1917	»
37	Լեվոն Թորոսյան	1914	»
38	Համայակ Տ. Հովհաննեսյան .	1912	»
39	Սայադ Տ. Հարությունյան . .	1914	»
40	Մկրտիչ Սուքիասյան	1914	»
	ՂԱՄԱՐԼՈՒ		
41	Հակոբ Տ. Գևորգյան	1901	Շարքային
42	Մկրտիչ Թաիրյան	1890	Կազմակ. գրադար. և շրջիկ
43	Բարեղամ Սայադյան	1914	Շարքային
44	Հարություն Բադալյան . . .	1995	»
	ԱԽՑԱ		
45	Յեվրեմ Բաղդասարյան . . .	1899	Շարքային
46	Սողոմոն Բադոյան	1916	Կոմիտեյի անդամ
47	Արմենակ Ստեփանյան	1912	Շրջանային կոմ անդամ
48	Տիգրան Գրիգորյան	1917	» » »
49	Խաչատուր Տ. Թումասյան . .	1919	» » »
50	Արամ Տոնյան	1912	» » »
51	Մաթեվոս Մանուկյան	1906	Բալախանիկոմ. անդամ
52	Թադեվոս Ղարագոզյան . . .	1905	Յենթակոմ. անդամ
53	Սայադ Նազարյան	1918	Շարքային
	ԲԱՇԳԱՒԹՆԻ		
54	Հովհաննես Խանադյան . . .	1895	Շարքային
55	Համբո Մելքոնյան	1914	»
	ԿՈՏԱՅՔ		
56	Աբգար Հովհաննեսյան	1905	Ազգային Խորհրդի անդամ
57	Կարապետ »	1914	Շարքային
	ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔ		
58	Ավագ Բունյաթյան	1906	Շրջանային կոմ. անդամ
59	Շավարշ Բասենցյան	1901	Ղարսի Կ. կոմիտ. անդամ
60	Մհերան Տ. Գրիգորյան . . .	1912	Պրոպագանդիստ
61	Յերվանդ Խանամիրալ	1901	Շարքային
62	Բժիշկ Ասոյան	1915	»
63	Մանուկ Սարգսյան	1917	»

№№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Մտած	Կուսակցական պաշտոններ
64	Հայկ Ավագյան	1914	Շարքային
65	Պողոս Պոխիկյան	1917	»
66	Խաչատուր Մ. Բարխուդարյան	1905	»
67	Տրդատ Տրդատյան	1905	Վրաստանի Կ. Կ. անդամ
68	Սմբատ Ամիրխանյան	1905	Կոմիտ. անդամ
69	Մկրտիչ Աղաբաբյան	1905	Շարքային
70	Մկրտիչ Այվազյան	1908	»
71	Հրանտ Կարինյան	1905	Պրոպակ. կուս. թերթի խմբ.
72	Ջիջուդ Աբրահամյան	1903	Շարքային
73	Հովհաննես Առաքելյան	1906	«
74	Սարգիս Քոչարյան	1906	Պրոպականդիստ
75	Սարգիս Տ. Հովհաննիսյան . .	1915	»
76	Գրիգոր Ներսեսյան	1913	Շրջանային կոմ. անդամ
77	Արշակ Սինանյան	1894	Շարքային
78	Գարեգին Մովսիսյան	1912	»
79	Անդրեյ Կարագեզյան	1903	»
80	Մկրտիչ Զաքարյան	1915	»
81	Վարդան Մելիք Ավետիսյան	1917	Ագիտատոր
82	Վարդան Քարտաշյան	1918	»
83	Նյուքար Լոլոյան	1918	»
84	Կարապետ Գորյանյան	1918	»
85	Արտեմ Տ. Հարությունյան . .	1915	Շարքային
86	Արամ Սարգսյան	1918	»
87	Մկրտիչ Մարքարյան	1918	»
88	Գրիգոր Գրիգորյան	1918	»
89	Միքայել Մարության	1917	»
90	Սարգիս Բեգլարյան	1917	»
	ՆՈՐ ԲԱՅԱԶԵԴ		
91	Լեվոն Նավասարդյան	1915	Կոմ. անդամ
92	Վահան Ամրազյան	1913	Յերիտասարդ. միութ. անդամ
93	Հրաչ Տ. Հովհաննիսյան . . .	1910	Ուսանող. միութ. անդամ
94	Տիգրան Մարքարյան	1918	Շարքային
95	Սենեքերիմ Ադիլխանյան . .	1902	Պրոպականդիստ
96	Հովհաննես Խիզանյան . . .	1908	Խմբագիր
97	Նիկողոս Մուրադյան	1902	Շարքային
98	Խորեն Իսահակյան	1907	Կ. կոմ. անդամ
99	Հակոբ Գնունի	1895	Կ. անդամ
100	Ջավադ Նահապետյան	1918	Շարքային
101	Արտեմ Մուրադյան	1918	»
102	Բեգլար Հովհաննիսյան	1915	Շրջանային կոմ. անդամ
103	Բագրատ Հովհաննյան	1918	Շարքային
104	Խաչատուր Մովսեսյան . . .	1918	»
105	Աթաբեգ Բադալյան	1908	»
106	Յեղնիկ Նալբանդյան	1917	»

№№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարի	Կուսակցական պաշտոններ
107	Հակոբ Տ. Վարդանյան	1917 թ.	Շարքային
	ԵՋՄԻԱԾԻՆ		
108	Սվքատ Կարոյան	1913	Երջանային կոմ. անդամ
109	Թաթեվոս Սարուխանյան . .	1892	» » »
110	Ղազար Փարսադանյան . . .	1915	Շարքային
111	Արեստակես Ասլիյան	1900	կոմ. անդամ
112	Ավետիս Գասպարյան	1904	» »
113	Կարապետ Յենգիբարյան . .	1903	» »
114	Անուշավան Տ. Միքայելյան .	1906	կ. կոմ. անդամ
115	Արամ Աղաջանյան	1900	» » »
116	Սահակ Կարճիկյան	1911	Շարքային
117	Սարգիս Վարդիկյան	1903	»
118	Մինրան Մամիկոնյան	1913	Կազմակերպիչ
119	Վերգինե Սանամյան	1915	Շարքային
120	Գոռո (սասունցի)	1905	Ժվքապետ
121	Մուշեղ Բարսեղյան	1899	Շարքային
122	Խոսրով Ալանյան	1900	Մարտական
123	Մկրտիչ Ղազարյան	1915	Շարքային
124	Բարդող Վարդանյան	1900	կոմ. անդամ
125	Բագրատ Մանուկյան	1902	Շարքային
126	Ղուկաս Հովհաննեսյան . . .	1916	Մարտական
127	Գևորգ Փանոյան	1895	Շարքային
128	Վաչական Շահազիզյան . . .	1998	Երջանային կոմ. անդամ
129	Մովսես Գրիգորյան	1912	» » »
130	Հայկ Աբրհամյան	1917	Կազմակերպչական
131	Մանուկ Գևորքյան	1906	Շարքային
132	Վարդ Կոստանյան	1918	»
133	Գևորք Սահակյան	1916	Պրոպագանդիստ
134	Հովհաննես Մուշեղյան . . .	1918	Շարքային
135	Հարություն Կարապետյան . .	1915	Ռազմական
136	Մինրան Մանուկյան	1917	»
137	Մամբրե Հայրապետյան . . .	1914	Շարքային
138	Արամ Զքավյան	1906	»
139	Յերվանդ Գանիելյան	1910	»
140	Մինրան Սերջանյան	1911	Կազմակերպչական
141	Պետրոս Սարգսյան	1908	Մարտական
142	Հայկ Պետրոսյան	1915	Շարքային
	ԱԼԵՔՊՈԼ		
143	Արշակ Առուստամյան	1912	Յերկաթուղու կոմ. անդամ
144	Մամիկոն Ալթունյան	1916	Յերկաթուղու կոմ. անդամ
145	Մխիթար Տ. Աբրամյան . . .	1907	կոմ. անդամ
146	Մինրան Տ. Սահակյան	1909	Պրոպագանդ. և կոմ. անդ.
147	Միքայել Այվազյան	1904	կոմ. անդամ
148	Թորեն Այվազյան	1918	Կազմակերպչական

№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարի	Հուսակցական պարտականներ
149	Մկրտիչ Ավաքյան	1917 թ.	Ջանապան պարտականներ
150	Վռամ Հակոբյան	1900	Շարքային
151	Մովսես Դավթյան	1907	»
152	Գուրգեն Հարոյան	1918	»
153	Տաճատ Ղիմոյան	1915	Կոմ. անդամ
154	Մարիամ Բաղդյան	1897	Շարքային
155	Մկրտիչ Ստեփանյան	1904	Երջանային կ. անդ. խմբապ.
156	Առաքել Սիմոնյան	1900	Կոմ. անդամ
157	Գալուստ Ավետիսյան	1905	Շարքային
158	Հովհաննես Ջիտչյան	1917	Աշակ. մխութ. նախագահ
159	Հարություն Հակոբյան	1903	Շարքային
160	Համազասպ Տիգրանյան	1917	»
161	Դավիթ Գևորգյան	1917	»
162	Արտավազդ Գրիգորյան	1917	»
163	Արտաշես Բադալյան	1917	Կազմակերպչական
164	Հովսեփ Միրզոյան	1917	Շարքային
165	Հարություն Ղարախանյան	1917	Երջանային կոմ. անդամ
166	Հովսեփ Իգիթյան	1917	Շարքային
167	Արտաշես Մելքոնյան	1917	Կոմ. անդամ
168	Աթանես Աթանեսյան	1905	Շարքային
169	Հակոբ Թաշչիյան	1919	»
170	Սաֆոն Ղարիբյան	1917	Ջանապան պարտականներ
171	Գրիգոր Բալասբեգյան	1908	Երզրումի և Լոռվա կ. անդ.
172	Արսեն Տ. Դավթյան	1903	Երջանային կոմ. անդամ
173	Գրիգոր Վարդանյան		
174	Պողոս Տ. Պողոսյան		
175	Հարություն Թումյան	1917	Երջանային կոմ. անդամ
		1914	Գանձ. և վրաստ. կ. կ. անդ.
	ՍԱՆԱՀԻՆ	1915	Ղարսբաղի կոմ. անդամ
176	Գասպար Բաղդասարյան		
	ԹԱԼԻՆ	1914	Ջանապան պարտականներ
177	Կիրակոս Համբարձումյան		
178	Հարություն Սերոբյան	1905	Մարտական
179	Մարքար Առաքելյան	1904	Կոմ. քարտուղար
180	Մուշեղ Դարմանյան	1900	Կոմիտեյի անդամ
181	Գրիգոր Սարգսյան	1907	Յևնթակոմ. անդամ
		1904	Շարքային
	ԳԻԼԻՋԱՆ		
182	Մաթևոս Մաթևոսյան	1906	Կոմիտեյի անդամ
183	Բենո Սարիբեգյան	1914	»
184	Աստուր Ալիխանյան	1892	»

№№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Մտած	Կուսակցական պաշտոններ
185	Գրիգոր Շահնազարյան	1919 թ.	Շարքային
186	Կարապետ Սարուխանյան	1905	»
187	Խոսրով Շիրինյան	1912	»
188	Գրիգոր Տ. Վռսկանյան	1905	Կոմիտեյի անդամ
189	Բագրատ Սհակյան	1916	Շարքային
190	Շովակ Շովյան	1910	»
	ՊԱՐՍԿԱՍՏԱՆ		
191	Ռուբեն Աբրահյան	1917	Լոռվա Կոմիտե
192	Ստեփան Ղանավուզյան	1917	Կազմակերպչական
	ԳԱՐԱԼԱԳԵԶԱՋ		
193	Լեվոն Դովլաթյան	1907	Շարքային
194	Մովսես Մովսեսյան	1915	»
195	Միսակ Ավաքյան	1919	»
196	Մովսես Մնացականյան	1905	»
197	Սարգիս Սարգսյան	1900	Կոմիտեյի անդամ
	ԲԱԳԱՒ		
198	Գրիգոր Գետրոսյան	1910	Ժողկոմների կազմակերպիչ
199	Վահան Բեջանյան	1898	Կենտ. Կոմի. անդամ
200	Գեղամ Բուշտուևի	1903	Շարքային
201	Գրիգոր Մովսեսյան	1902	»
202	Ռաշիդ Հակոբյան	1913	Սուրհանդակ
203	Իսրաել Գյուլիքոխվյան	1900	Գրոպագանդիստ
204	Սարգիս Ադամյան	1905	Շարքային
205	Բենյամին Մարտիրոսյան	1903	»
	ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՆԴԱՄՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՉԵՆ ԸՆՏՐՎԵԼ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ		
206	Արտաշես Գետրոսյան	1909	Գանձակի Բաքումի Կ.Կ.ա.
207	Ռուբեն Տոնյան	1917	Գրոպագանդիստ
208	Սիմոն Փոլյան	1917	Բագվի Կ. Կոմ. անդամ
	ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ.		
209	Մկրտիչ Մարքարյան	1918	Վաղարշապ. աշակերտ, միության նախագահ
210	Միքաել Մարուքյան (Լիմուել)	1917	«Յերկիր» թերթի խմբագիր և կոլեկտիվի նախագահ
211	Սուրեն Տ. Հարությունյան	1918	Շարքային
212	Գրիգոր Գրիգորյան (Գրո)	1918	Աշակերտ միության վարչության անդամ
213	Կարապետ Գորչունյան	1918	Աշակերտական միութ. անդ.
214	Վահան Սասանյան	1917	Հայաստանի գաշն. աջ. միու. Կենտ. Կոմի. անդամ

№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարի	Կուսակցական պաշտոններ
215	Սարգիս Բեգլարյան	1917 թ.	Աշակերտ. միութ. անդամ
216	Արամ Սարգիսյան	1915	Հայաստանի դաշ. աշա. միության կ. կոմ. անդամ
217	Վարդան Բարսաչյան	1918	Վաղարշապ. դաշ. աշակերտ. միութ. վարչութ. անդամ և քարտուղար
218	Մկրտիչ Ջաքարյան	1918	Երևանի աշակերտ. միության վարչութ. անդամ
219	Վարդան Մելիք Ավետիսյան .	1915	Շարքային
220	Նյուքար Զոլոյան	1919	«Վասպուրական» աշակերտ. միության անդամ
	ԶԱՆԱԶԱՆ ՎԱՅՐԵՐԻՑ		
	27 հոգի		

Ընդամենը 247 պատգամավոր

ՎԵՐՋ